


ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ
ՅԵՐԵՎԱՆ ՍԻՐԱՎԵՊ



Խ Հ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

00 DEC

974

01 JAN 2008

891.99

Ա-81

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

Արմ.

Հ-127212

ՅԵՐԵՎԱՆ ՍԻՐԱՎԵԳ



ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՃԵՂԱԿԱՆ

1986

Խ. 1

26.02.2013

22094

Պատ. խմբ. Ռ. Արայիս
Տէխ. խմբագիր՝ Տ. Խաչվանելյան
Արքագրի Հ. Գոլուխանյան

ՀԱՅԵՐՈՒՆԻՈՒ,
ՈՓԻԿԻՆ

Հ 1545



Գլուխիսի լիազոր 803, Պատմիք 217, Հրատ. 3608, Տիրամ 4000.
Հանձնված ե արտադրության 16-Նունվարի 1936 թ.
Սորության և ապագրության 3-մարտի 1936 թ.
Գետերատի ապարան II Գնունի 4 Ցերկան

ՄԻԱԿ ՅԵՐԳԸ

Այդ տանը մի աղջիկ եր ապրում։ Նա վոչնչով գեղեցիկ չեր, բայց գըավիչ եր այնպես, ինչպես վոչ-գոք։ Մարդիկ կախարդկում եյին նրա լոկ մի հայաց-քից, նրա թեկուզ միայն քայլվածքից։ Ի՞նչ կար քից, նրա մեջ այդպես թովիչ՝ վոչվոք չեր կարող ասել։

Ամեն յերեկո, աղջկա հայրը դուրս եր գալիս փո-
ղոց, լուսամուտների փեղկերը ծածկում։ Զանգալների
ծայրերը տալիս եր ներս, ուր իր կինն ամրացնում
եր դրանք։ Հետո ընտանիքը պառկում եր քնելու։
Յերբ կեսդիշեր եր լինում, յերբ խաղաղ շնչում եյին
ծնողները, փոքր քույրերն ու յեղբայրը, հանկարծ
գրառմ լսվում եր սիրով հիվանդ վորևս մեկի խոր
մխացող յերգը։ Աղջիկը խաղաղ կիսարթնանում եր
և փակ աչքերով, կարծես յերազի մեջ, —լսում ցան-
կացող սրտի կարոտը։ Ո՞վ եր յերգողը, —աղջիկը չը-
գիտեր։ Լսում եր և մտածում, Մի վայրկյան նրան

հիպնոս և երավդ սերը, —կարծես դրսից անտեսանելի
մի ուժ թափանցում երներս և շրջապատում նրան: Նա
ցանկանում եր գուրս յելնել, փարվել անծանոթ տղա-
յի վզով հենց միայն այն բանի համար, վոր նա այդ-
պես խորը սիրում եր իրեն: Սակայն լոկ մի վայր-
կյան եր տեսում այդ զգացումը, ապա աղջիկը բար-
կանում եր.—ինչ են ուզում իրենից այդ բոլոր յերի-
տասարդները: Չե վոր ինքը չունի վոչ մի գեղեցկու-
թյուն, մինչդեռ բազմաթիվ ուրիշ աղջիկներ կարող
ելին մեռնել այդ տղաներից ամեն մեկի սիրո հա-
մար... Յեվ նա, փոխանակ գուրս յելնելու, կարծիս
յերգողին վշտացնելու համար, ավելի յեր փաթաթվում
վերմակի մեջ և գորսը ծածկում՝ վոր չըսի...

Կիսում ելին գիշերներ, յերբ յերգի փոխարեն
լսվում եր սրնի վճիռ ու զով նվագը: Սիրահար-
վածն իր հետ բերած եր լինում վորեւ սրնգահար յե-
րիտասարդի, վորպեսզի նա գիշերվան ու աղջկան
հայտներ իր սերը, իր կարոտը: Յեվ տարորինակ եր
այն, վոր իրոք, նվագի միջից լսվում ելին վոչ թե
նվագողի, այլ սիրահարվածի սրտի հառաջանքները:
Սրնգահարի թոքախտավոր, գունատ գեմքն անտար-
բեր եր լինում ու հանդարտ, թվում եր, թե նա նվա-
գարանի մի մասնիկն եր լոկ, իսկ իսկական նվագո-
ղը նա եր, ում աչքից փախել եր քունն այդ վոչ մի
գեղեցկություն չունեցող, բայց թովչանքով ձգող
աղջկա համար...

Աղջիկը նվագը լսում եր նույն հուզումով, ապա
նույն անտարբերությամբ, և դարձյալ փաթաթվում
եր վերմակի մեջ, և դարձյալ գուրս չեր գալիս:

Լինում ելին ամիսներ, յերբ մի համառ յերիտա-
սարդ, կանոնավոր կերպով, ամեն գիշեր, ճիշտ նույն
ժամին, դալիս յերգում եր և գնում: Նա շարունակ
յերգում եր նոր ու նոր յերգեր՝ մեկը մյուսից ավե-
լի սրտառուչ, ավելի մաքուր: Այդ ամիսներին, նրա
ահից ուրիշ վոչ մեկը չեր համարձակվում մոտենալ
աղջկա լուսամուտներին: Անցնում ելին որերն ու
շաբաթները, բայց աղջիկը գուրս չեր յելնում: Հետո,
մի գիշեր տղան այլիս չեր գալիս և նրան գտնում
ելին քաղաքի մերձակա վորեւ վայրում՝ իր հուսա-
համա ձեռքով, թե ուրիշի վրեժինդիր ձեռքով սպան-
ված... Յենց նույն գիշեր, աղջկա լուսամուտների մոտ
նրան փոխարինում եր մի ուրիշը:

Մի գիշեր սակայն, վոչ վոք չերգեց կամ նվագեց:
Աղջիկն արթնացավ անսովոր լսություն ց. զգաց ժա-
մանակը, հասկացավ, վոր կեսգիշերն անց և, հիշեց,
վոր քնի մեջ ևս, հակառակ մյուտ որերի, վոչինչ չեր
լսել: Սպասեց մի քիչ, հետո ավելի շատ, ավելի շատ...
Յեվ առաջին անգամ իր վողջ կյանքում նա իրեն
զգաց վիրավորված ու լքված: Թեթև, սպիտակ շախ
ուսերին գցեց ու յելավ բակ, ապա փողոց: Զով եր:
Նա սրսփաց: Փաթաթվեց շալի մեջ, նայեց: Անկյան
յետեւմ, իրենց լուսամուտների մոտ՝ վոչ վոք չկար:

Աղջիկը բարկությունից բոլորովին սթափվեց: Նա-
յեց ավելի ուշադիր, կարծես չհավատալով, ապա յերբ
ուզում եր նորից ներս մանել, հանկարծ տեսավ մի
տղայի՝ դիմացի անկյան աղբյուրի մոտ, աղբյուրի
գլխաքարին հենված: Մոտեցավ նրան:

— Ի՞նչու լես կանգնել, — հարցրեց աղջիկը:

— Նայում եմ;
— Ինչի՞ն ես նայում;
— Աղբյուրի ջրին;
— Ինչու, — զարմացավ աղջիկը;
— Նայում եմ, թե ինչպես ջուրը գնում ե, գնում,
ու չի վերջանում:

Տղան լոեց: Աղջիկը նույնպես: Միայն ջուրն եր իշխում անձայն և գուռի քարին թեթև խշում:
— Ինչու չես յերգում, — հարցրեց աղջիկը:
— Աշակերտը վարպետի մոտ համեստ պիտի լինի:
Աղբյուրը յերգում ե իմ փոխարեն: Նա յե վարպետը:
Աղջիկը քմծիծաղ տվեց:
— Յես չեմ հասկանո՞մ, աղբյուրն ի՞նչ ե յերգում
վոր...

— Ամենամաքուր, ամենաանկեղծ յերգը նա յե
յերգում:

Աղջիկը զարմացած նայեց տղային: Մինչև այդ,
բոլորը յերգում ելին կամ նվազում. նա առաջինն եր,
վոր լուսմ եր. նա տարորինակ կերպով տարբերվում
եր մյուսներից...

— Վոր չպիտի յերգես՝ գնա, — ասաց աղջիկը բար-
կացած:

Տղան գնաց:
Աղջիկը մտավ ներս, պառկեց, բայց քունը չտա-
րավ:

Հետեւալ գիշեր, նորից լսվեց մի սովորական յերգ:
Աղջիկն արթնացավ անախորժության զգացումով: Նա
հասկացավ, վոր ավելի գոհ կլիներ, յեթե յերգի փո-
խարեն լսեր նախորդ գիշերվա լուսթյունը: Մակայն

հակառակ իր ցանկության՝ լեղանակը ներս եր թա-
փանցում համառ և անկոչ:

Յերկրորդ գիշերը սրինդ նվազեցին: Աղջիկն արթ-
նացավ բարկացած: Ձեռքերով ականջները փակեց,
զլուխը կոխեց բարձի տակ և մինչեւ լուս մնաց այդ-
պես պառկած:

Յերրորդ գիշերն աղջիկն արթնացավ լուսթյան
մեջ: Մի քանի ըստե սրտատրով սպասելուց հետո՝
զեր կացավ, շախ ուսերին առավ, Բայց հազիվ դռա-
նը մոտեցած, դրսից լսվեց մի նոր յերգի ձայն: Աղ-
ջիկը զարպացած, ուսերից վար առավ շալը, վորի
ծալը խփվեց փոքրիկ սեղանի վրա դրված ջրի բա-
ժակին ու ցած նետեց:

Բաժակի ձայնի վրա հայրն արթնացավ:
— Զես թողնում, վոր քնեմ, — բողոքեց աղջիկը:
— Ուզմում ես՝ գնամ — վոնդեմ, — առաջարկեց հայրը:
— Հարկավոր չե, հայրիկ: Յես շուտով դրանց ձալ-
նը կլտրեմ, — հանգստացըեց աղջիկը:

Մի քանի որ հետո, նա ամուսնացավ պատահա-
կան մեկի հետ: Հայրն իրենց սենյակներից յերկուսն
առանձնացըեց, տվեց աղջկան: Լուսամուտի տակ
ընդմիշտ ու վերջնական լուցին գիշերավին յերգերը:

Մի տարի հետո, աղջիկը հեռացավ ամուսնուց: Ա-
մուսինն ինչ անտարբերությամբ վոր յեկել եր, նույն
անտարբերությամբ ել գնաց:

Իր մանկության և աղջկության այդ սենյակնե-
րում, աղջիկը մնաց մենակ: Ամեն անգամ, յերբ կես
գիշեր եր լինում, նա հին սովորության համեմատ՝
նորից եր արթնանում, Արթնանում եր, բայց վոչ

վերի չեր պատասխամ: Դիտեր, վոր այլևս լերգ չեր լի-
նելու և գոհ եր զրա համար: Բայց գիտեր նաև, վոր
լության մեջ չեր վերադառնալու աղբյուրի լերգին
ունկնդրող այն տղան: Մի գիշեր,—միայն մի գիշեր,—
նա ինքը վեր կացավ ու գնաց դուքս, ջրի յերգը լը-
սելու համար: Լսեց, վոչինչ չհասկացավ ու վերադար-
ձավ:

Յեկ մինչեւ հիմա աղջիկն ապրում է ալնաեզ:

Ն Ր Ա Ն Ք, Վ Ո Ր Փ Ո Ւ Վ Ե Ց Ի Ն

«...զորովնետե յուրաքանչյուր անդամ
նըանք գալիս են ուրույն ճանապարհով
և յուրաքանչյուր անդամ անսպասելից...»
Բենջենուուր Զելլին ի—«Ինք-
նակենասպառություն», մասն, 2, գլ. 2

Յես, ի հարկե, վատ մարդ չեմ: Վոմանք ասում
են, վոր յես տաքզլուխ եմ: Զափազանցություն ե: Ա-
սել, վոր մի քիչ եմ տաքզլուխ, այդ գեռ վոչինչ:
Բայց վոր բոլորովին, այդ արդեն...

Ճիշտը խոստովանած, նույնիսկ այդ տաքզլուխու-
թյունը՝ վերաբերում ե իմ անցյալին: Ներկայումս
յես սովորական մահկանացու յեմ: Կասեն՝ այդ ի՞նչ-
պես պատահեց: Պատահեց այդ բանն ամառանցում,—
հանգստի տանը: Զովից եր, թե հանգստից, գուցե-
րնության գեղեցկութի՞ննն եր պատճառը, վոր յես
փոխվեցի ի՞նչ իմանաս...

Ի՞նչ իմանաս, թե վաղն ի՞նչ պիտի պատահի քեզ
և այդ պատահմունքն ի՞նչ կերպ պիտի աղղի վրադ-
Ապրում ես, զրքեր ես կարգում, ճառեր ես լսում, մ-

նում ևս մեծ քաղաքներում, այցելում ես գործարաններ ու սովորութեան և այդ բոլորը կարծես վոչինչ, անցան կողքով՝ նույնիսկ ջոշափելով քեզ: Բայց հանկարծ, մի յերկրորդական ամառանոցում, հանգստի մի փոքրիկ տան մեջ, կատարվում ե քո վերածնումը...

Դե հիմա յեկ և ասա, վոր կարեսորն այդ հանգստի տունն եր, իսկ մնացած՝ վոչինչ, կամ ասա, վոր բոլորովին ել այդպես չե: Գուցե այդ գրքերն ու ձառերը, քաղաքներն ու գյուղերը թողել ելին քո մեջ մի-մի բան և դու այդ չեցիր նկատել, իսկ հանգստի տնում յերեան յեկածը վոչ թե ամառանոցի աղգեցությունն եր, այլ այդ ամենի, վոր հոգուդ խորքից գուրս եր լողում գեպի մակերեսը... Կամ գուցե ընդհակառակը, ոյնտեղ, հանգստի տանը, քեզ հետ պատահեց մի բան, վոր առաջ չկար ու չեր յեղել քո մեջ...

Ի՞նչ իմանաս: Վոչ հողեցան ես, վոչ դատական քննիչ: Գրես: Լավ, գրիր: Գուցե ուրիշ մարդիկ յեղացացություններ հանեն և տան քո պատասխանը:

Եես վար իջա փոքրիկ կայարանում և գարման-քով նայեցի շուրջս: Սխալ չեմ իջել: Ա՞յս կայարանը պետք ել ինի... Ստուգեցի: Սխալ չկար: Բայց ուր ե ախր հանգստի տունը, դրա հերն անիծած...

Լուգա ձորն եր, Աջ ու ձախ՝ պատերի նման կանգնած ելին անտառախիտ սարերի զույգ շարքերը: Յետեսում և առջևում՝ վոլորապտույտ ձորի կորչող ծայ-

բերը: Վոչ մի լանջի վրայից չեր յերեում վոչ մի շենք: Դե յեկ ու գտիր հանդսովի տունը:

Մտա կայարանի շենքը: Դիմեցի առաջին հանդիպողին: Շոգից քրտնաթաթախ՝ նա հառաչեց և մելամաղձու կերպով ցույց ավեց մի վոտնահետքի ուղի, վորը գնում եր ուելսերին գուղահեռ:

— Դնա: Թեքվիր: Բարձրացիր:

Գնամ, թեքվեմ, բարձրանամ: Կարձ եր ասկած: Ավելի կարճ՝ քան պետք եր: Բայց յես գնացի:

Իմ մի կողքով գնում ելին ուելսերը, իսկ մյուս կողքով հոսում եր պղտոր Դերեալը: Բացի գրանցից կողքով հոսում եր պղտորը տակ ձգվող նեղ կածանից, ձուկ բացի իմ վոտքերի տակ ձգվող նեղ կածանից, ձուկ բուսել ելին մորու, մասրի և վարի խաղողի թփերը: Բուսել վերև, թե աջ և թե ձախ՝ լանջերը ծածկված Ավելի վերև, թե աջ և թե ձախ՝ լանջերը ծածկված Ավելի նեղ բնավոր, բայց սաղարթախիտ ծառերով:

Կարծում եյի, թե հով պլիտի լիներ: Յեվ իրոք, առաջին բուսեներին հենց այդպես ել թվում եր: Բայց հետո զդացվեց տոթը: Յես ուզում եմ մի յերկու խոսք գրել այդ տոթի մասին:

Նա, — այդ տոթը, ինձ խեղեց վոչ թե իր Փիկիկան, այլ բարորական ազգեցությամբ: Այդ պիկական, այլ հասկանալ Խնդիրն այն ե, վոր տոթն պետք ել լավ հասկանալ Խնդիրն այն ե, վոր զգալի նեղություն այնքան ել հեղձուցիչ չեր, վոր զգալի նեղություն այնքան իմ մարմնին: Սակայն դրա փոխարեն, նա ճընտար իմ մարմնին: Սակայն դրա փոխարեն, նա ճընտար իմ հոգին և այն ել ծանր կերպով: Այդ տոթը եր իմ հոգին և այն ել ծանր կերպով: Այդ տոթը ինձ սախում եր տանջել ու յերազել: Այս, թըն ինձ սախում եր տանջել յես լնկել եմ այս խորն — սկսեցի մտածել յես, — ահա յես լնկել եմ այս խորն



ու անձուկ կիրճը, իսկ այնտեղ, վերեռում, ուր վերջանում են սարերը և յերկինքն եւ սկսվում, ահա այնտեղ, ամենայն հավանականությամբ, սքանչելի յեղանակ ե... Այստեղ նեղ եւ ու փակ, այնտեղ լայն եւ արձակ: Հեռավոր հորիզոններ, մեծամեծ տեսարաններ կան այնտեղ: Այստեղ՝ ցածր, դետնահուպ, այնտեղ՝ բարձր, վերաճբարձ, տիրապետող: Կանգնիր այնտեղ վորես ժայռի վրա և մի հայացքով կլանիր բնության այս ամբողջ կերտվածքն իր բազմապիսի սարու ձորերով, լեռնահարթերով, կածաններով, յերեացող հեռու և մոտիկ դյուղերով...»

Ահա այդ կերպ ազդեց տոթն ինձ վրա: Նա կարծես խլեց ինձ իր հորձանքով և մի թեթև տաշեղի պես սկսեց բարձրացնել դեպի իր մակերեսը: Յես յերեակայությամբ արդեն այնտեղ եյի, բարձրում, ուստի և այնքան դառն եր իրականությունը, վորը կոշտ ոելսի կերպաբանքով խփվեց իմ վոտքին և յես տեսա, վոր դեռ այդտեղ եմ, ձորի հատակում...»

Գնա, թեքիր, բարձրացիր... Այժմ զգուցի, վոր ավելորդ եյին նույնիսկ այդ կարձ բառերը: Այժմ, տանց այդ բառերի լել յես դիտեյի, յես զգում եիի, վոր հանգստի տունը պետք ել լինիր այնտեղ, վերեւում, ամենից վերեւում և ուրիշ վոչ մի տեղ...»

Յես թեքիցի կածանից, անցա ոելսերի վրացով այն կողմ և այժմ արդեն ինձ զգացի սայլի ճանապարհի վրա: Բարձրանում եր սայլի ճանապարհը լանջն ի վեր, կորչում եր անտառի մեջ, հետո նորից եր հայտնվում, ձգվում եր լանջի լայնքով, յետ եր դառնում մինոր զուգահեռով, նորից եր թեքվում,

նորից եր յետ զառնում: Հայկուկան լեռնաստանի սովորական տեսարան: Անսովորը միայն անտառն եր, վորի զով շունչը փուլել եր վողջ ձորի վրա:

Յերբեմն մեծ ծառեր եյին հանդիպում ճանապարհի յեղբերին, և այն ժամանակ նրանց ստվերն իրենց տակն եր առած լինում ճանապարհի մի մեծ պատառը: Իսկ յերբեմն, ծառերը յետ եյին գնացած լինում նրա կողքերից և այն ժամանակ, արեկի կուրացընող պայցծառ լույսն լնկած եր լինում նրա գորշ—սպիտակ փոշու վրա: Յերկու կողմերում, համատարած փոփած եր խիստ անտառն իր կիսախավարի ծանրությամբ: Յուրաքանչյուր ծառ կարծես հրավիրում եր քեզ իր ստվերի տակ՝ պառկելու, սաղարթների բույրը շնչելու և քնելու:

Սակայն հարկավոր եր գնալ: Յես արդեն բավական բարձրացել եյի: Ներքեսում յերեսում եյին փոքրացած կայարանի մի քանի շենքերն ու համարյաննկատելի դարձած ֆերետը, իսկ վերեւում, դեռ չեր ել նշմարվում հանգստի տունը: Ո՞ւր եր թագնվել նա...

Յես արագ քայլում եյի և յուրաքանչյուր քայլի վրա իմ սիրոս հրձիւմ եր ձորից ազատազրվելու մեծ բավականությունից: Կարծես յես ճիգ չեյի անում վերե բարձրանալ այլ մի ուժ ձգում եր ինձ այն բարձրից: Յեվ յերբ վերջապես սայլի ճանապարհը վերածվեց կիպարիսներով շարված մի շքեղ ծառուղու և վերջացավ սարի բարձրավանդակի վրա, հանգստի տան դիմաց, յես արդեն ինձ զգում եյի հանգստացած ու բավարպված...

Նա հանկարծակի յերևաց, — այդ շենքը: Յեվ միայն յերեալուց հետո յես զգացի, վոր նա կարող եր յերևալ և հավանորեն յերեսում եր նաև ցածրից, — ձորից, միայն թե վարժ աչք եր հարկավոր նրան նկատելու համար: Համենայն դեպս յեթե վոչ ամբողջ շենքը, գոնե նրա կտուրի սուրը ծայրը պետք ե վոր յերևար հենց կայարանի մոտից:

Ուրեմն ահա թե ինչ բան ե այս հանգստի տունը... Լեռների բարձրավանդակի մենավոր պալատ՝ շրջապատված մրգի ծառերով ու մշտադալար յեղենիներով: Մի գեղեցիկ, յերկհարկանի շենք, կառուցված մի հարստի ձեռքով՝ իր և իր ընտանիքի համար:

Յես մոռացել եցի, վոր պետք եր մոտենալ շենքին: Յես կանգնել ելի և հիանում ելի մարդկային ստեղծագործությամբ, վորն սքանչացրել և իմաստավորել եր վայրենի ընության այդ անկյունը: Գեղեցիկ եր ներքեսում փոված ձորը, գեղեցիկ եր այդ բարձրավանդակը, գեղեցիկ ելին ձորի մյուս ափի սարերն ու նրանց գագաթների վրա փոված փոքր ու մեծ հարթությունները, գեղեցիկ ելին անտառները, բաց այդ բոլորի մեջ չկար վոչ մի զիտակցական նպատակ, չկար վոչ մի նախագծված որինաչափություն, վոչ մի միտք... Յեվ ուրեմն վորքան սքանչելի պիտի յերեար ինձ այդ մի անկյունը, ուր բնության հաճածարեղ առեղծվածը, — մարդը, — իր ստեղծագործությունն եր կանգնեցրել: Ապրում ենք քաղաքում, ուր

ամեն ինչ շինված ե մարդու ձեռքով և չենք նկատում մեր յերջանկությունը: Այնինչ, անշուշտ մենք յերջանիկ ենք, վորովիհետև մարդու ձեռքով ստեղծագործված ամեն մի իր՝ դա հեքիաթ, դա յերազ, դա սոսապել ե բնության համեմատությամբ:

Յես զարմանում եյի նախամարդու զարմանքով...

Յես կանգնել ելի ակնապիշ և յերեի դեռ յերկար կմայի այդպես, յեթե կողմնակի մի միջամտություն չխանգարեր ինձ...

Ով քաղցր պատահականություն, վոր միշտ ինձ յերեացել ես աղջկա կերպարանքով. այդպես յերեացիր նաև այդ բոպելին: Բայց այդ անդամ դու ստացել ելիր քո ամենագեղեցիկ մարմնավորումը, ամենասքանչելի ելացումը... Դու մոտեցար ինձ և հարց ովեցիր.

— Ում եք ուզում, ընկեր...

Յես քսանվեց տարեկան ելի: Յես ինձ լուրջ մարդ ելի համարում արդեն: Յեվ թվում եր ինձ, վոր այժմ յես, — վաստակավոր համբուրող, — անխոցելի յեմ աղջկա հրապույրի հանդեպ: Բայց յերբ լսեցի «հւմ եք ուզում, ընկեր» խոսքերը՝ արտասանված քո աղջկալին ձայնով, յես հազիվ զսպեցի իմ պատասխանը

— Քեզ:

Յեվ դրա փոխարեն, ինչվոր բան թոթովեցի հաճածատի տան մասին, բնության մասին, իմ մասին:

— Ձեզ գրասենյակն ե հարկավոր, — յեղբակացը եց նա: — անցեք այս կողմով:

Յես գնացի: Յես շնչում ելի յեղենիների բուլը և կուրծքս ուռչում եր մաքուր ու թարմ ողի հորձան-

քից։ Իսկ աչքերիս առջև դեռ փայլատակում եր նրա սպիտակ զգեատը, լես տեսնում եյի նրա բաց թների ցորնագույնը, լես տեսնում եյի նրա մերկ վոտքերը կիսակոշիկների մեջ։ Սակայն մի խաղաղ, անկիրք հուզում պաշարել եր ինձ։ Վտանգավոր ընդմիջում փոթորկից առաջ... Յես գիտեյի, վոր լերը դուրս գամ գրասենյակից, տեղավորվեմ, լվացվեմ ու նախաճաշեմ, վոր լերը վերջացնեմ այդ անհրաժեշտ, մահկանացուական գործերը, իմ առաջին հոգսը պիտի լինի՝ հանդիպել նրան...»

Բայց լեղավ այլ կերպ։

Յեղավ այնպես, վոր գրասենյակից լես գնացի. ուղիղ ննջարան և պառկեցի ինձ հատկացված մահճակալի վրա։ Այդ՝ լերկրորդ հարկումն եր և լուսամուտից լերևում ելին հանգստի տան ոժանդակ շենքերը, այդին, ցանկապատը, ցանկապատի լետեից անցնող ճանապարհը և փոքրիկ մի գյուղ՝ մի քանի քայլ հեռվում։

Յես մտածում ելի։ Յես չեյի շտապում հանդիպել աղջկան։ Յեվ ինչու հանդիպել։ Նա տվեց ինձ այն, ինչ վոր հարկավոր եր։ Նա տվեց ինձ մի քաղցը հանդիպում, նա գեղեցիկ դարձեց իմ մուտքը հանգըստի տուն։ Ի՞նչ գեղեցիկ ե կյանքը, սիրտ իմ սիրելի։ Ի՞նչ գեղեցիկ են կիպարիսները ծառուղու վրա, աղջիկը մուտքի մոտ, և այս ամառանոցը, և այս մահճակալը, և այս փափուկ ներքնակը։ Ի՞նչ հաճելի լին մարդիկ, վոր հանդիպում են քեզ և վորոնք բոլորը քեզ ընկերներ են և վորոնց բոլորին դու ընկեր ետ ինչ լավ ե աշխարհը, ինչ լավ են մտտիկ ու հե-

սու, ծանոթ և անծանոթ բոլոր վայրերը... Այ, դու գեռ չես լեղել, ասենք, Արխանգելսկում։ Բայց զնա այնտեղ լերը վոր կուզենաս և քեզ կհանդիպեն սիրելի մարդիկ, սիրելի դեմքեր։ Մերոնք, — հասկանում ես ինձ, — մերոնք կհանդիպեն... Ինչ լավ ե այդ օժերոնք-ը... Յեվ այնպես կթվա քեզ, վոր այն քո տունն ե, ուր դու վերադարձել ես, և այն ձերոնք են, վոր քեզ հանդիպում են և այն ամեն ինչը և այն բոլոր մարդիկ քեզ ծանոթ են ծնված որվանից և ծընված որվանից ել՝ քեզ սիրելի...»

Վոչ, լես այն չեմ ասում, ինչ վոր ցանկանում եմ։ Գուցե քունս ե տանում այս հաճելի հանգստի պատճառով։ Կամ դուցե իմ այս մտքերը՝ մտքեր են, վորոնք դեռ չունեն վոչ մի ձեւ արտահայտության, վորովհետեւ գեռ չեն արտասանվել վոչ մեկի շրթունքներով, վորովհետեւ գեռ դուրս չեն թռել վոչ մեկի կրծքից։ Ի՞նչպես ասել...

Նու, ասենք այսպես։ Մի տուրիստ ե գալրս Յեկրոպայից այստեղ։ Պարզապես՝ տուրիստ։ Ի՞նչ իրավունքներ պիտի ունենա նա կամ ի՞նչ պարտականություններ։ — զուտ տուրիստական։ Պիտի նայի, զննի, ծանոթանա և վերադառնա։ — ահա նրա իրավունքը։ Պիտի յենթարկվի մեր որենքներին։ — ահա նրա պարտականությունը...»

Իսկ լես Արխանգելսկ կգնամ զժղժալով, ձայնս գլուխս զցած, սրան նախատելով՝ հասարակական գուլքը փչացնելու համար, նրան գովելով՝ իր արտասանած լավ բանաստեղծության համար, յերրորդի հետ շախմատ կխաղամ, թերթում հոգված կգրեմ կա-

յարանապեսի բցուրոկրատ վերաբերմունքի մասին,
քաղկոմից հանձնարարություն կստանամ գնալ ձրկ-
նաբուծարան, ուսումնասիրել արտադրությունը և փո-
խել յեղած անմիջակա վիճակը, միլիցոներից նկա-
տողություն կստանամ փողոցի մեջոնով քայլելու
համար, մի աղջկա հետ կինո կոնամ, շարաթորյակի
ժամանակ քարեր կհավաքեմ...

Այսպես ամեն մարդ գնում ե իր տունը...

Ինչու յեմ մտածում այս մասին ամառանոցում:
Գուցե նրան համար, վոր այս ել իմ տունն ե, ուր յես
յեկել եմ հանգստանալու: Գուցե նրան համար, վոր
այստեղ ել կան անծանոթ մարդիկ և նրանք բոլորը
մերոնք են, յուրաքիններ...

Չիտեմ...

Լուսամուտից ներս ե փշում լեռնային հովը: Մի
անուշ թմրություն պաշարել ե ինձ: Խուզ, շատ խուլ
լսվում ե շշակի ձայնը՝ այնտեղից, ներքեից: Գնացք-
ներ են անցնում... Վորքան հաճելի յե, վոր այստե-
ղից, ամայի այս սարի վրայից, այս փոքրիկ շենքը
կապված ե պողպատե ամուր գծերով մեր ամբողջ
յերկրի հետ, մեր վողջ աշխարհի հետ...

Սուրում են գնացքները...

Յ

Մի ձեռք կամացուկ շոշափեց ինձ: Բաց արի աշ-
քերս: Նա յեր, —այն աղջկել:

— Գուք չեք նախաճաշել

Յես վճռեցի շփոթեցնել նրան:

— Գուք հերթապահ եք, — հարցրի:

— Վոչ:

— Ուրեմն:

Նա զգաց, վոր բռնվել ե, բայց հպարտ պատահ-
եանեց.

— Հենց այնպես, ընկերաբար: Յեթե չարթնացնե-
յի, սոված կմնայիք: Իսկ դուք, գեռ շնորհակալու-
թյուն ել չեք հայտնում....

Այս անգամ արգեն, յես եյի բռնվել: Վեր կացա-
և միասին գնացինք գեղի ճաշասենյակ: Ճանապար-
հին նա ինձ հացըցեց:

— Ինչու յեք ուշ յեկել: Արդեն ամսի 14-ը եւ Այս-
տեղ բոլոր զանվորներս յեկել ենք ամսի սկզբից:

Յեզ չսպասելով պատասխանի, շարունակեց:

— Յերեի ամսի վերջին մեզ հետ միասին թողնե-
լու յեք հանգստի տունը:

— Վոչ, յես պետք ե մնամ ուղիղ մի ամիս:

— Մինչեւ մյուս ամսի կեսը:

— Այս:

Նա ուսերը շարժեց:

— Գուք, ընկեր, ձեր այցելությամբ բոլորովին
խախտում եք հանգստի տան կանոնները: Այստեղ բո-
լորն են լինում մի ամսով, բայց միշտ գալիս են ամ-
սի սկզբին և վերաբառնում վերջին: Ահա տեսեք, ա-
սաց նա և ծիծաղելով ցուց տվեց մատիսով զբած
միքանի տող պատի վրա:

«Ո՞վ ացելուներ, լիցենք իմ իմաստությունը. —
յեկեք ամսի 1-ին և վերադարձեք 30-ին»:

— Ի՞նչ իմաստուն մարդ ե յեկել դրա գրագը,

ժպտացի լես:—Յեվ անիծվածը վոչ մի բացառություն չի սահմանել, վորով արդարացվեր իմ ուշացած ալցելությունը: Մինչեռ, լես՝ զբաղված եյի այնքան կարեոր գործերով...

Մենք ծիծաղելով մտանք ճաշասենյակի:
Յեվ այնտեղ, լես՝ առաջին անգամ ծանոթացան նրանց հետ, ովքեր պետք ե կալմելին իմ միջավայրը մի ամբողջ ամիս: Այսինքն վոչ թե մի ամիս, այլ յերկու շաբաթ:

Նստած ելին նրանք սեղանների շուրջը և նախաձայում ելին: Քառասունից հիսուն հոգի: Բոլորն ել ծանոթ կերպարանքներ, զլխավորապես բանվոր ու գլուղացի յերիտասարդներ: Նրանցից վոչ մեկին յես անձամբ չելի ճանաչում, սակայն նրանք սիրելի ելին ինձ հին մտերիմների պես:

Յես նստեցի և աղջիկն ել իմ կողքին:

Վորքան հարազատ են ինձ այս բոլորը, մի տեսեք: Մտերմության շունչը մթնոլորտի պես տարածվել ե վողջ ճաշասենյակում: Վորքան յուրային են սրանք: Միթե առաջին անգամն ե, վոր տեսնում եմ սրանց: Դե ախր սրանք մենք ենք ու մերոնք: Վոչ մի ձևականություն, վոչ մի անծանոթավարիություն: Ախր մեր ընտանիքն ե սա...

Յես հոգեպես ուրախ եցի, վոր մի ավելորդ անգամ, այդքան փայլուն կերպով ապացուցվում եր իմ արևանգելսկյան թերիալի ճշմարտությունը: Յես կարեք չունեյի այդ ապացուցին, յես առանց այդ ել համոզված ելի դրա մեջ, սակայն և այնպես, ուրախանում ելի, հոգեպես հրճվում:

Բայց հանկարծ, կարծես քնից սթափված, լես զարմանքով նայեցի շուրջս: Մի անակնկալ հանկարծակի բերեց ինձ: Յես նկատեցի, վոր նրանք,— ճաշասենյակում գտնվող բոլորը, բացի ինձանից,— վոչ միայն մտերիմ ելին միջանց հետ, այլև մի ուրիշ կերպ, վորն առաջին հայացքից դժվար եր բնորոշել: Իհարկե, իմ արխանգելսկյան թերիան դրանից չեր պարտվում, սակայն լես զգում եյի արդեն, վոր նա անկարող եր ամբողջովին բացատրել տեղի ունեցածը: Յեվ իսկապես,— այդ ի՞նչն եր պատճառը, վոր թեև մենք բոլորս մտերիմ ելինք միմյանց, բայց նրանք բոլորը, բացի ինձանից, ինչ վոր մի այլ կերպ եյին իրար հետ:

Ի՞նչ բան եր այդ...

Այդ այն եր, վոր նրանք բոլորը վորոշ փոխհարաբերության մեջ ելին իրար հետ: Այդ եր գլխավորը...

Նրանցից մեկը, վոր նստած եր իմ դեմ, ուրախ մի ուսանող եր, վորն իր յուրաքանչյուր շարժումով կամ խոսքով ծիծաղ եր պատճառում բոլորին: Հաս յերևութին, նա հանգստի տան ընդհանուր կոմիկն եր, սիրված զվարճախոսը: Յերկար սեղանների վրայից նա նայում եր հեռու և գլխի ակնարկով հասկացնում եր ինչվոր մի ուրիշին, վոր իր կակառն նա խմում ե նրա կենացը: Այդ մի ուրիշը մեքենավար բանվոր եր, յերեսունինգ տարեկան, բայց պատանու պես աշխուլժ: Հետագալում տեսա, վոր նա ուսանողի զվարճախոսության մշտական ընկերն եր և նրա կատակների սովորական լենթական: Նրանք շարունակ միմյանց հետ եյին լինում, իսկ նրանց շուրջը շարու-

նակ հավաքված եյին լինում շատ ուրիշները, փորովհեան բոլորը գիտեյին, փոր ամեն բոպե նրանք մի նոր բան պիտի հնարեն, մի նոր խաղ պիտի խաղան:

Իմ կողքից յերրորդը մի յերիտասարդ եր՝ վեր քշտած թերով ու դուրս ընկած կլթակով: Նայելով նրա կոկորդին, կարելի յեր յենթաղրել, փոր նա լավ ձայն ունի: Յեկ իրոք, նա յերգիչ եր,—հանգստի տան յերգիչը: Իսկ մի քիչ հեռվում, նախաճաշում եր մի ազլ յերիտասարդ, այս անգամ՝ իսկական աժդահա, փորն իր գոտուց կախել եր մի մանդոլին: Նա գիտեր լավ նվագել, բայց քաղաքում,—իրենց գործարանում և տանը,—քիչ եր զբաղվում դրանով: Իսկ այդտեղ, նա ստիպված եր շարունակ իր հետ կրել նվագարանը, փորովհետև միշտ հարկ եր լինում նվագել, իսկ յուրաքանչյուր անդամ վաղ տալ մանդոլինի յետելից՝ միտ, չուներ: Այժմ մանդոլինը հանգիստ կախ եր ընկել նրա աժդահա մարմից, ինչպես մի փոքրիկ առարկա, ինչպես ճանապարհորդական մի փոքրիկ դանակ:

Նրա դիմաց նստել եր սիրահարված մի գույց: Նըրանք միասին եյին լինում գիշեր ու ցերեկ, բացի իհարկե, քնելու ժամերից: Հանգստացողները լուս սիրում եյին նրանց՝ խուսափելով նրանց խանգարել: Յերբ նրանք գնում եյին անտառ՝ զբոսնելու և հետո նստում եյին այնտեղ՝ հանգստանալու, բոլորը լուս համաձայնությամբ հեռանում եյին նրանց շրջապատից այնպիսի տրամագծով, փորն ապահովեր համբուլըների անլսելիությունը: Կարծես ի շնորհակալություն դրան, այն յերեկոներին, յերբ հանգստացողները կազ-

ձակերպում եյին փոքրիկ յերեկույթներ, սիրահարվածները նրանց համար արտասանում եյին կուպլեաներ, փորոնք ասվում եյին փոխնեփոխ և շատ զվարթ բովանդակություն ունեյին: Նրանք միշտ նույն կուպլետներն եյին արտասանում,—յերեկ ուրիշը չգիտեյին, —բայց միշտ ել ստանում եյին ջերմ ծափահարություններ:

Կար նաև մի ծեր, փորն այդ բոլոր յերիտասարդների մեջ ընկած, աշխատում եր հարմարվել նրանց, Փորձում եր աթուրմա խաղալ, թեև շատ անհաջող: Յեկ փորպեսզի նրա սիրտը չկոտրեն, խաղացողներն իբրև թե չեյին նկատում, փոր նա խախտում եռ ուրենքները, իսկ կուացած տղան միշտ ավելի յեր ցածրացնում իր մեջքը, փոր նա հեշտ թռչի:

Կար նաև մի ուրիշ ծեր: Նա ինչվոր գործարանի պահակ եր: Նա պահակ եր յեղել իր ամբողջ կյանքում: Իսկ այժմ, գալով հանգստի տուն, հենց առաջին գիշերվանից նա սկսել եր պահակ կանգնել: Ինչի՞ն գիշերվանից նա սկսել եյին, բացատրել, փոր ինքն ախր յեկել և հանգստանալու, փոր նրանք պահակի կարիք չեն զգում և ունեն իրենց սեփական պահակը,—վոչ մի ոգուած չեր տվել: Ճարահատված, հանգստի տան վարիչը նրա նկատմամբ թույլ եր տվել ոեժիմի բառառություն: Յեկ այժմ ամեն յերեկո, յերբ բոլոր հանգստացողները ժամի տասնմեկին պառկում եյին քընելու, նա լոնում եր իր չիբուխը, նստում եր հանգըստի տան պահակի մոտ և զրուցում: Յերբ դառնում եր գիշերվա յերկուաը, նա վեր եր կենում, հորանջում և գնում եր քնելու:

— Լավ ուշք դարձրու, — ասում եր նա ճանապարհի կեսից: — Գյուղը մոտիկ է: Կարող են գալ այնտեղից ու մի գիշերում այգու ամբողջ տանձ ու խնձորը քաղել...»

Նա շատ պատմություններ գիտեր: Ունեցել եր հետաքրքիր կյանք և լուրաքանչյուր առիթով պատմում եր այդ մասին: Յերբ ժամի տասնմեկից հետո ննջարաններից մի քանի հանձնակալներ դեռ դատարկ եյին լինում, հերթապահը գնում եր զուրս, ուղիղ գեպի պահակները և առանց սխալվելու գտնում եր յերիտասարդ աղաներին ու աղջիկներին, վորոնք ծերունու շուրջը հավաքված, լսում ելին նրա քաջագործությունների պատմությունները:

Կային յերեք աղջիկներ, վոր բոլոր տղաներից և աղջիկներից ավելի սիրում եյին լողանալ: Նրանք ժամերով դուրս չեյին գալիս այն գեղեցիկ, քանդակագրդ ավազանից, վոր գտնվում եր հանգստի տան լեռներում, մի փոքրիկ բարձրության վրա, սաղարթախիտ ծառերի կանաչ ծածկոցի տակ: Մոտենում եյին տղաներն ավազանին և խնդրում ելին նրանց՝ դուրս գալ, մի քիչ ել թողնել իրենց լողանալու, բայց իզուր: Պատասխանը լինում եր ջրի չըմֆոցը և զվարթ ծիծաղը: Տղաներն սպառնում ելին հանվել: Այդ լուրջ սպառնալիք եր, վորովհետև նրանցից վոչ մեկը լողազգեստ չուներ և ուրեմն, բոլորվին պիտի մերկանար: Այդ սպառնալիքից հետո աղջիկները փոխում ելին իրենց գործելակերպը, այժմ արդեն խնդրելով, վոր թուրլ տան իրենց՝ մի քիչ ել լողանալ: Զանազան անուշ խոսքեր ելին ասում, դիմում ելին «Ճանք

բառով և գինաթափ ելին անում: Ըսդհանրապես տըղաները նրանց չելին սիրում և ուժածով ելին անվանում:

Յեկ այսպես, բոլոր հանգստացողները, բացի ինձանից, վորոշ փոխարաբերության, վորոշ կապակցության մեջ ելին միմյանց հետ: Յես նկատեցի այդ և իսկույն ել նկատեցի, վոր ահա այդ եր կարեվորը և վոչ թե մտերմությունը: Նկատեցի, վոր մտերմությունը բղխում ե հենց այդ փոխարաբերություններից, վոր մտերմությունն ինքնիրեն չի ստեղծվուի, ինչպես չի կարող մտերմություն ստեղծվել այնպիսի մարդկանց միջև, վորոնք վոչ մի կապ չունեն իրար հետ: Յեկ իրոք, կարող ե արդյոք յեկրոպական տուրիստը մեզ մտերիմ լինել կամ մեզ մտերիմ զգալ իրեն, յեթե նա գալիս ե, դիտում ու գնում, առանց հապակցվելու, առանց փոխարաբերության մեջ մուտելու մեզ հետ...

Յեկ այսպես, յս նկատեցի, վոր իմ արխանգելակիան թեորիան թերի յեւ և շատ անկատար: Նկատեցի, վոր իմ ասած մտերմությունը, ի հարկե, շատ բան և բացատրում, բայց չկա մի բան իմ թեորիայի մեջ, վորը բացատրի հենց այդ մտերմության պատճառը: Իսկ պատճառը, ինչպես ասեցի, մարդկանց փոխարաբերությունն ե և մեկի կախումը մյուսից:

Յես վեր կացա և դուրս յելա ճաշասենյալից: Գընացի անտառ, նստեցի մենակ և սկսեցի մտածել:

Բոլոր այստեղ գտնվողներն ունեն իրենց տեղն այս փոքրիկ հասարակության մեջ: Իսկ ով եմ յս: Վըն ե իմ տեղը նրանց մեջ: Ինչի՞ վրա յեւ հենված իմ

մտերիմ վերաբերմունքը դեպի Նրանք և ի՞նչ հիման վրա յես նույնպիսի վերաբերմունք պիտի պահանջեմ նրանցից... Յես յուրավին և հարազատ եմ այսաշժը մեմ ներքնապես, բայց ներքնապեսը բավական չեն Յես պետք եւ գիտենամ, թե վորն եւ ալստեղ իմ տեղը, ինարկեն, յես ազատ ընտրություն կատարել չեմ կարող իմ տեղի նկատմամբ, քանի վոր դա կախված է վորքան ինձանից, այնքան ել նրանցից, այդ հանգըստացողներից...»

Ի գեպ՝ այդ հանգստացողները: Նախքան այստեղ դալս, ինձ թվում եր, թե յես պետք եւ հանդիպեմ մի միաձույլ զանգվածի կամ ամենաշատը՝ միանման մարդկանց: Սակայն այժմ յես գիտակցում եմ իմ սիստը: Միանման կարող են լինել հեռագրասյուներն այստեղից Սրբանդելսկ, բայց միանման լինել չեն կարող մարդկիկ: Բեր յերեք մարդ իրար մոտ, և նրանք արդեն հասարակություն են: Իսկ հասարակության մեջ, թեկուղ լինի նա անդաստկարդ, մարդկանցից յուրաքանչյուրը դարձլաւ առանձին մարդ և և իր առանձին տեղն ունի: Ել ի՞նչպես միանման լինեն մարդիկ, ել ի՞նչպես միապաղադ դառնա կյանքը... Այդ հեռվից ե, վոր բոլորը միանման են յերիում, այդ աղջամուզի մեջ ե, վոր բոլոր կատուները մոխրագույն են...»

Յեվ այսպես, յես պետք եւ գտնեմ իմ տեղը: Իմ տեղը... Դա վոչ մահճակալն ե, վոչ աթոռը ճաշասենակում և վոչ ել ոհմիմը, վորին պետք եւ յենթարկվեմ յես՝ մյուսներին համահափասար: Յեթե այդքանով սահմանափակվեր իմ տեղը և բոլորի տեղը, հանգըստի տունը կվերածվեր կազարմալի, կյանքն այն-

տեղ կդառնար կազարմալական և մարդիկ կլինելին իրոք վոր միանման...

Յես դեռ չգիտեմ, թե ով եւ պակասում նրանց, բայց յես ավելորդ չեմ: Ինձ համար ել, իհարկե, տեղ կա սահմանված: Կոմիկ—նրանք ունեն: Տրագիկ—հարմար չեմ: Սիրահարված—կարելի յե փորձել: Կամ գուցե փիլիսոփամ...

Վոչ, ավելի լավ եւ չմտածեմ, քանի վոր իմ ազատ կամքով չեմ լնտրելու իմ տեղը: Իմ տեղն ինձ ցուցց կտան նրանք...

¶

Յես շատ եմ ունկնդրել մարդկանց սրտերին և շատ եմ լսել նրանց բազմազան մեղեղիները: Յես գիտեմ, թե վորքան հույս ու վոզերություն եւ թպը տում յուրաքանչյուր արնոտ մսակտորի մեջ, վոր սիրտ և կոչվում: Յես հետեւ եմ, թե ինչպես յուրաքանչյուր դգացմունք հետագայում դուրս եւ հորդում սրտից և գործ եւ դառնում: Սակայն ինձ շատ քիչ եւ հանդիպել այնպիսի լավ սիրտ, ինչպես այժմ...

Մութն եր արդեն, յերբ յես գնացի հանգստի տան այգին՝ զբոսնելու: Այնտեղ, ծառերի միջև, գեղի ձորը կախված մի ժայռի վրա՝ գտնվում եր տախտակալա կլոր մի զրուցարան, վոճակորված գեղեցիկ գմբեթով ու սյունակներով: Այնտեղ վոչվոք չկար, սակայն յես ներս մտա ու նստեցի մի աթոռի վրա: Ներքմում, մթության մեջ, խշում եր Դերետը: Հազիվ նկատվում ելին կայարանի մանրիկ կրակներն



այն ահագին ցածրում: Իմ յետեռում, հանգստի տանը, նորից նույն տեսարանն եր.—խավարը և մանրիկ կրակներ: Հանգստի տունն առաջմ ելեկտրականություն չունի և յես այդ բանը նկատեցի միայն յերեկոյան դեմ, յիրք խավարի մեջ մշուշվեցին մարդիկ ու առարկաները:

Հանգստի տունն առաջմ ելեկտրականություն չունի... Ամենից հետաքրքիրն այստեղ «առայժմ» բառն եւ Հանգստի տան վարդիչն այդքառն արտասանեց այնպես, կարծես մահավճիռ եր կարդում խավարի թագավորությանը: Առայժմ... Այս, առայժմ: Հանգստի տունն առայժմ շատ բան չունի: Բայց այդ բոլորը միայն առայժմ...

Թփերը խշխացին: Մոտեցավ մի բարձրահասակ, արծվաքիթ յերիտասարդ՝ ու ու խիտ հոնքերով: Վարդիչն եր:

— Ո՞վ կա այստեղ, Նորեկը: Բարե քեզ:

— Բարեւ: Նստիր: Յես հենց նոր մտածում եյի քո մասին: Ուրեմն, ասում ես առայժմ, համ...

— Ի՞նչը: Հա, ի հարկե, առայժմ... Ժամանակ չի լինում, վոր նստենք մի քիչ խոսենք: Ամրող որն զբաղված եյի կովերով: Կով պիտի պահենք հանգստի տան համար...

Նրա ձայնը մի վայրկյան լոեց խավարում, ապա նորից լսվեց.

— Կով ասացի, ուրիշ բան հիշեցի: Այս շենքը, ուր հիմա հանգստի տան ննջարաններն են, առաջ սովորվի գոմ եր... Կովեր եյին պահում: Անջսաս գործ նույնիսկ ոգտակար: Բայց մի որ, յես, ինչվոր գոր-

ծով յեկա այստեղ... Այն ժամանակ, յես աշխատում եյի կաշեգործարանում: Բանվոր եյի: Յերբ տեսա, թե ինչպես այս հիանալի ամառանցատեղը ծառայում եվոչ իր նպատակին, ուղղակի վրդովվեցի: Միթե կարելի յե այնպես անել, վոր ուրիշներն ասեն,—տեսեք, այստեղ հին միլիոնատիրոջ ամառանոցն եր, իսկ բորբակին իշխանությունը դա գոմ դարձնեց: Ու վը ձըռեցի մտքումս, վոր այստեղ հանգստի ուռն պիտք ե կազմակերպեմ...

Նա լոեց մի քիչ: Նա խոսում եր ծանր հնովով: Կաշեգործարանի հետամնաց, համքարային պայմաններում կատարած իր յերկար տարիների աշխատանքը վորոշ հետք երթողել նրա թոքերում: Յես հարցրի նրան այդ մասին:

— Վոչինչ, —պատասխանեց նա, —այդ ել գտավ իր վերջը: Հիմա մեր գործարանում նոր մեքնաներ են ստացվել, հիմա այլևս վերացվել ե հին ձար զնասակար աշխատանքը: Հա, ուր կիսատ թողեցի: Ուրիշն, վորոշելով, վոր հանգստի տուն պիտի կազմակերպեմ, վերադարձա քաղաք: Ու սկսվեց վազվորց քաղկոմից քաղինուուրդ, այնտեղից ժողովուրդ, հետո սոց սպ, արհմիություններ... Մեկ՝ ինձ չեյին ազատում գուծարանի աշխատանքից, մեկ՝ սովորողի վարչությունը հրաժարվում եր կովերին տեղափոխել, մեկ՝ փող չըշկար: Բայց յես վերջ ի վերջո հասա իմ նպատակին: Իսկ հետո խնդրեցի, վոր ինձ վարիչ նշանակեն՝ մինչև այստեղից գործելը կարգի բերեմ: Նշանակեցին: Եեկա ալստեղ և ինչ տեսնեմ: Ավագանները ցամա-

քած, պտղատու ծառերն անխնամ, շենքերը վերանունոգման կարուա, ամեն ինչ կեղտուա: Բայց...

«Առայժմ» բառից հետո, բնորոշ եր նրա «բայցը»: Նա այդ բառով եր ամփոփում իր հերոսական աշխատանքը, վոր թափել եր՝ նպատակին համելու համար: Այդ բառով եր միացնում յերկու ծալրերն իշխար: Զկար, բայց յեղավ: Չունեյինք, բայց ունենք: Զենք արել բայց կանենք... Յես շատ քիչ եմ լսել, վոր մեն մի հատիկ չառն այնքան մեծ իմաստ ու նշանակություն ունենա, ինչպես այդ «բայց»-ը յերիտասարդ վարիչի բերանում:

Մեր գլխավերնում, զրուցարանի տախտակե առաստաղի մեջ, խուլ դժբում ելին մեղուները: Ամբողջ ցերելը նրանք թռել եյին լուսվա սքանչելի ծաղիկների վրայով և այժմ կարծեք նստել եյին հաշվեհարդարի: Վարիչը նայեց իմ հայացքի ուղղությամբ գեպի վեր և ասաց.

— Մեղը կա: Պիտի քանդեմ տախտակները: Այ թե մայր մեղվին կրոնեմ... Առանց փող ծախսելու, հանգստի տան կից մեղվանոց կկաղմակերպեմ: Այ, պատիր, կտեսնես...

Ցետեռում—հանգստի տան շուրջը և հեռուն,—լրսվում եյին խավարում կորած մարդկանց յերգի ու խոսակցության ձայները: Շըշում եյին այնտեղ հանգըստացողները թևանցուկ զույգերով կամ խմբովին՝ արդեն վարժված շրջակա մթությանը: Մի քանի տղաներ և աղջիկներ ուրախ կանչերով իջան ներքե, դեպի կայարան՝ յելելոյան գնացքին դիմավորելու համար: Մի քանի բոպե հետո նրանց ձայները խլացան

և միայն ծխախոսի կայծերն ելին, վոր գեռ յերևում եյին նրանց շարժվող խմբի միջից:

— Դինամո-մեքենան արդեն գնել եմ... Բազվում... Մոտիկ վոչ մի քաղաքում չկարողացա ճարել: Յերկի շուտով կլինի այստեղ: Լույս կունենանք, Եյ... Լուս վա ձորը կպայծառացնենք: Հինգհարյուր մոմից պակաս վոչ մի լամպ չպիտի ունենամ, սուտ ասողի հերն անիծած: Թող լույսով կշտանան հանգստացողները... Բոլոր ծառուղիներում պիտի լույսեր կախեմ... Ազնիվ խոսք...

— Բոլիք ծառուղիներում...

— Գիտեմ ինչ ես ասում, — ծիծաղեց նա, — սիրահարվածների ճամբան մի քիչ կերկարի, բայց վոչ այնքան... անտառը մոտիկ ե:

Ցես նույնպիս ծիծաղեցի: Հետո նորից նա ծիծաղեց և զրանից հետո նորից յես: Փոքր բան եր, իհարկե, ծիծաղի առիթը, բայց այնքան հաճելի յեր այդ ծիծաղը: Նա մեզ կապում եր միմյանց:

— Գյուղին ել կարող եմ լուս տալ: Շատ չե, բայց չորս-հինգ հազար մոմ: Դա կանի հարյուր լամպ: Բավական ե նրանց: Ախր նրանք ել կաթ պիտի տան ինձ՝ մինչև մեր կովերի ստացվնելը: Բացի կաթից, բանվորական ուժն ել են նրանք տալու: Գիտեմ ինչ քան բանվոր ե մեզ հարկավոր: Այստեղ, ուր հիմի նստած ենք լես ու դու, մեր ճաշարանի շենքը պիտի լինի... Ցերկու հարյուր հոգու համար...

— Ցերկու հարյուր...

Նա հեաց և պատասխանեց.

— Այո: Ցերկու հարյուր: Առայժմ հիսուն մարդ ե

հանգստանում, բայց շուտով յերկու հարլուր պիտի լինի: Գիտես, շենքը պիտի լինի ուղիղ ժայռի վրա, իսկ լուսամուտները պիտի նայեն դեպի ձորը:

Ցես պատկերացրի: Լավ ես մասձել, իմ սիրելի ընկեր, իմ վոգեռված յեղբայր: Ճաշարան՝ լուսամուտներով դեպի ձորը: Այդ հիանալի յեւ Դու ստեղծված ես կարծես հենց այն բանի համար, վոր կյանք մտցնես ալս կիսամայի՞ անկյունը: Հետաքրքիր ե, յեթե յեկող տարի լիս նորից այցելիմ այստեղ, ինչեր պիտի տեսնեմ, վոր առայժմ չկան, բայց պիտի լինեն...

— Ամոթ ե ասելը, — շարունակեց նա, — բայց մեր հանգստի տունն առայժմ բժիշկ նույնիսկ չունի: Դա խայտառակություն ե: Ունեյինք մեկը, բայց կրծատեցի նրան: Շարունակ գանգստվում եր մենակության ձանձրույթից և գլխացավի համար լուծողական եր տալիս: Հիմար տղա յիր...

Ցես ունկնդրում եմ նրան և նրա խոսքերի միջից լսում եմ հաղթանակող մարդկության յերգը: Ուղղակի սլանում ես նրա մտքերի ընթացքով, ուղղակի ծարավում ես, վոր մի շենք ել կառուցվի այս շենքի կողքին, մի ալլեց ել բացվի այս ալլեցի կողքին, աճի մարդու գրոհը բնության վրա, ամրանա մարդու տիրապետությունը, հանգստի տունն ստանա իր յերկորդ ավտոն, փոքրիկ զյուղը վողողվի ելեկտրական լույսով, նվազախումբ լինի, ժողովուրդ գա ու ներքեց, ձորից, անցնող գնացքի միջից մարդիկ նըկատեն, վոր այստեղ վերեռմ, լիաթոք տրոփում ելլանքը...

Ցես գտա իմ տեղը: Բայց գտա վոչ այնպես, ինչպես գիրքն ե գտնում իր տեղը՝ գրադարանի վորեե դարակում: Իմ տեղը: Ցես ինքս ել չեմ կարող վորոշել թե վորտեղ ե նա: Սկզբում թվում եր, թե լիս տիպ պիտի զառնամ վորեե տիպ: Ասենք՝ Փիլիսոփա կամ սիրահար: Բայց հետո նկատեցի, վոր ազգպիսի բան տեղի չունեցավ: Այդպիսի բան տեղի չեր ունեցել նաև մյուսների մեծամասնության հետ: Նրանց մեջ գուցե միայն կոմիկ ուսանողն ու շոգեմեքենայի բանլորն ելին տիպերը՝ յերկու ծերւնչների և յերեք աղջիկների հետ միասին: Իսկ մեծամասնությունը տիպեր չելին: Ցեվ լիս նկատեցի, վոր իր առանձին տեղն ունենալու համար... բոլորովին ել կարեռը չեր վորեե տիպ լինել, վոր բոլոր հանգստացողներն ունելին իրենց ամուր և մի տեսակ՝ անփոխարինելի տեսկել լ:

Նույն բանը տեղի ունեցավ նաև ինձ հետո: Ցես տիպ չդարձա: Մի քիչ փիլիսոփա եյի, մի քիչ սիրահար, մի քիչ ազիտատոր եյի, մի քիչ բժիշկ, այսինքըն մարդ եյի՝ սովորական մարդկանց նման: Ճաշերից հետո շախմատ եյի խաղում: Մեռալ ժամից հետո, յերեկոյան դեմ, խաղում եյի աթուրմա: Ավելի ուշ՝ Փիլիսոփայում եյի հանգստի տան վարիչի մոտ, յերազում եյի նրա հետ: Իսկ ավելի ուշ՝ շրջում եյի անտառով և համբուրում եյի իմ սպիտակազդեստ ընկերուհու: Խավարի միջից լիս չեյի նշմարում նրա գծակրությունը, բայց շոշափում եյի նրա թիերի ցունագույնը և մերկ վոտքերը՝ կիսակողիկների մեջ:

Նա կին եր, ամուսնացած կին, բայց անտառն իր բույրով լցվել եր նրա մարմնի մեջ և նա համբուր եր ուզում: Նա շշնջում եր ականջիս, վոր անհնար և չգրկախառնվելը, յերբ ծառերն են խշում, պսպղում են աստղերը և ակացիաներն իրենց բույրն են տարածում: Յեվ մենք խոստանում եյինք մեկմեկու, վոր այդտեղ պատահածն այդտեղ կմնա և վոչ մի գալոտնիք վար չի իջնի այն վոլոր ճանապարհով:

Իսկ առավոտները յես նորից գնում եյի հանդիպելու հանգստի տան վարիչին, վորը լինում եր ուժանդակ շենքերից վորևե մեկում: Մենք մտնում եյինք այգին, խնձոր եյինք քաղում, լցնում եյինք կարտոֆիլների բուկը կամ հյուսում եյինք ճյուղերով սարքված ցանկապատի վորևե քանդլածքը: Պատահում եր նաև, վոր հավաքում եյինք հանգստացողներին և գնում ելինք անտառի հեռուն՝ մասուր կամ մորի քաղելու: Յերբեմն նստում եյինք հանգստի տան ավտոն, գնում դիտելու լոռվա հնությունները, վոր թագնված ելին լինում վոր լեռան յետեռում: Վնրի ձորի լանջին, վհր անսառի մեջ... Յեվ մեր աշորժակը բաց եր զարմանալի կերպով և մենք ուտում ելինք գալլերի պես: Յերեք որը մի անգամ կանգնում եյինք կշեռքի վրա և հաճույքով նկատում, վոր մեր մարմնի ընդհանուր քաշի վրա ալելացել եկես կիլո բնությունից և անտառներից, լեռներից ու լեռնային արեից, կարտոֆիլի բուկ լցնելուց ու համբույրներից: Յեվ կարծես մոռացել ելինք, վոր ընդամենը մի քանի որ առաջ մենք այնտեղ եյինք, ուրիշ միջավայրում, ուրիշ հոգսերով և գործերով ծան-

րաբեռնլած: Մեղ թվում եր, թե մենք ծնվել ենք հենց ալդտեղ, հենց ալդ մարդկանց մեջ, հենց ալդ մարդկանց իջնում եր դեպի իր վախճանը, մենք նայում եյինք նրան և նրա հետ միասին հայացքով գլորվում հեռու սարերից այն կողմ, ուր պայքարով լցված մի ամբողջ աշխարհ սպասում եր մեզ: Յերազ եր թվում մեղ և այն արեւ, և այն աշշարհը, վոր այժմ վողողվում եր նրա լույսով: Ու խարհը, վոր այժմ վողողվում եր նրա սկավառակը, ու քանի նվազում եր նրա պայծառու թյունը, այնքան ավելի մեզ թվում եր վոր ահա, ուշ մնացած մի ճառագայթ պիտի գրկի մեղ, փաթմթվի մեր մեջքին և տանի իր հետ դեպի այնտեղ, դեպի սարերի լուսավոր յետեւը...

Իսկ հետո, սթափվում ելինք, ծիծաղում, ցրվում, և յես գնում ելի աթուրմա խաղալու, հետո հանդիպելու հանգստի տան վարիչին, իսկ հետո համբուրելու իմ ծանոթունուն: Յերբեմն ալդու նստարաններից մեկի վրա ինձ հանդիպում եր հասակավոր մի կին, ասենք՝ մի բանվորունի, վոր նստած նայում եր անթարթ հայացքով: Նա լել եր լերազում: Կամ հանկարծ, իր ննջասենյակից դուրս եր պրծնում հանգըստացող դերասանը և խավարի միջից վորսալով մեզ, հայտնում եր, վոր այդ յերեկո լերեկույթ պիտի կազմակերպվի: Հայտնում եր այնպես, իբր թե այդ արգելու վորոշված և բոլորի կողմից և միայն տվյալ մարդն ե, վոր տեղեկություն չունի: Առաջարկում եր մասնակցել լերեկույթին:

Մեկը համաձայնում եր, մյուսը խուսափում: Յես սովորաբար հաճուէքով հանձն ելի առնում մի յեր-

կու յերգ յերգել։ Այդ լուրջ սպառնալիքից զզալիորեն գուշանաված՝ դերասանն աշխատում եր իսկույն հեռանալ և թողնել ինձ մենակ։ Նայելով նրա յետեկից, յես, ի նշան պատրաստակամության, մաքրում եյի կոկորդս և սկսում մի մեղեդի, վորից կաթվածահար եյին լինում վոչ մի հանցանք չունեցող ճնճղուկները։

Թիչ հետո, մարդիկ լցում եյին դահլիճ, վորը զբարարանի և ակումբի հետ միասին գտնվում եր ուժանդակ շենքերից մեկում։ Գլխավոր շենքից համարշյա բոլոր նամիթի լամպերը տարվում եյին այստեղ և դահլիճը բավական լուսավոր եր դառնում։ Յես սիրում եյի հեռվեց դիտել, թե ինչպես խավարի միջով դեպի գաճլիճ եյին կուռմ մարդիկ՝ նամիթի լամպերը ձևոքերին բռնած։ Փայլվում, շարժվում եյին աղոտ կրակները և յուրաքանչյուր կրակի ներս տանելուց հետո մի քիչ ավելի լուսեղ եցին դառնում դաշլիճի լուսամուտները։ Հետո կ'ո եյի կենում կանաչների վրայից, թեանցուկ եյի անում իմ սպիտակագեստ ընկերուհուս և գնում այստեղ։ Մուսաքի մոտ մենք թողնում եյինք թեանցուկը և ներս եյինք մտնում վոչ միասին։ Իր ուժ տարեկան յերեխայի մոտ նրատած ջահել մի կին կամ լողանալ սիրող աղջիկներից մեկը նայում եյին իմ ընկերուհու բերանին, վոր կարձրել եր համբուլըներից, ապա նայում եյին ինձ և քրքջում։ Իսկ հետո, ոկովում եր յերեկույթը։

Յեկ այսպես, յես ապրում եյի, յես հանգստանում եյի, յես ունեի իմ տեղն այդ փոքրիկ հասարակության մեջ, թեև այդ տեղը շատ սովորական տեղ եր և առանձնահատուկ վոչինչ չեր պարակում։ Բայց

ալիպես եյին նաև մնացած մեծամասնության տեղեւը։ Վոչվոք ավելորդ չեր և այնքան անհրաժեշտ յինք մենք մեր տեղերով, վոր յերբ մեզնից մեկը յերկար բացակայում եր, մյուսներն անպայման հարցնում եյին միմյանց։

—Ո՞ւր ե այսինչը, ինչո՞ւ չի յերեսում այսինչը...

Ովքեր եյին հարցնում... Յեթե վոչ բոլորը, ապա սրանց մի մասը, վոր կատակներ եր ուղում, կամ մի այլ մասը, վոր նվազ եր ուղում, կամ վարիչը, վոր ցանկանում եր իր սիրտը գեղեց և վորնե մեկին հացանականում են իր վաղված ծրագրներին, կամ շախզորդակից անել իր վաղված ծրագրներին, պատրաստը, վորին խաղընկեր եր պետք և կամ իմ ընկեցանուհին, վորի եյությունն ինտենսիվացել եր այդ քնությունից և վորը տղամարդու համբուլըներ եր ցանկանում։

◆

Մի առավոտ, նտխաճաշի ժամանակ, սիրահարված զուլուզը չերեաց։ Մենք զարմացանք, վորովհետև նըսպուզը վորքան ել վոր սիրահարված, այսուամենայրանք վորքան չեյին ուշանում ուտելուց։ Իսկ յերբ նըսպուզի մինչեւ ճաշ ևս չերեացին և չերեացին նույնիսկ ճաշի ժամանակ, մենք այդ մասին հարցընք վարիչին։

—Ախր նրանք գնացին, —բացատրեց նա ժպտալով։

—Ո՞ւր...

—Յետ ևս հավիտյան չելին մնալու նրանց ժամանակն արդեն լլացնել եր...

Այ թե ինչ... Ուրեմն նրանք գնացել են: Յեկ իւրոք, արդեն ամսի վերջին որերն են: Աննկատելի անցավ ժամանակը...

Ճաշից հետո մենք գնացինք անտառ՝ զրունելու: Մենք մտածկու եցինք և մեղանից փոչ մեկը չեր խոսում: Կարծես լուռ համաձայնությամբ, մենք բոլորս քավեցինք մի ուղղությամբ: Ցերը հասանք մի փոքրիկ նստելատեղի՝ փորված անտառապատ լանջի վրա, ստվերների տակ, մեղանից մեկը կամացուկ ասաց:

—Նրանք սովորաբար այստեղ եյին նստում...

Մյուսներս նայեցինք նրան, կարծես նա բաց եր թողել անտեղի մի խոսք: Բայց բոլորս ի հարկե, մտածում ելինք նույն նյութի մասին:

—Այս, —ասաց մի ուրիշը, —այստեղ եյին նստում...

Մենք անցանք առաջ: Մեկը մեղանից՝ հանկարծ հարցրեց:

—Այն ինչ թղթի կտոր ե ընկած այնտեղ... Ցերմի նրանք են մոռացել...

Բոլորս լետ դարձանք միանգամից, բայց իբրև թե անտարբեր: Սակայն լուրաքանչյուրս ուզում եր ինքըն առաջինը համեմ ու վերցնել թղթի կտորը:

—Գրքի թերթ ե, —ասաց մեկը՝ գետին կունարկ:

Մենք մտսեցանք:

Բանաստեղծություն եր —ծանոթ բանաստեղծություն:

—Կարդացել են... —ասաց մի ուրիշը:

—Իհարկե, կարդացել են:

—Սիրային բանաստեղծություն ե... Ինչպես առւմ են՝ իրենց համապատասխան...

—Այո...

—Իսկ լեռը գնացին, —հարցրի յես:

—Ցերեկ լեռեկոյան են գնացել: Մենք քնած ենք յեղել: Նրանք հրաժեշտ են տվել միայն վարիչին և հերթապահ ծառայողին,

—Պահակին ել —ավելացրեց մի ուրիշը:

—Այո, պահակին եք: Այսինքն՝ պահակներին: Ծերունին դեռ նստած ե յեղել պահակի մոտ:

—Իսկ մեր գնացին...

Մենք զարժացած նայեցինք այդ ասողին: Հարցն ավելորդ եր, բոլորովին ավելորդ:

—Միենույն չե, թե ուր: Նրանք այլևս այստեղ չեն:

—Բայց ախը ովքեր եյին նրանք, —պնդեց նույն հարց տվողը, —այդ ե ինձ հետաքրքրում:

—Նրանք սիրահարվածներ եյին և լեռեկոները մեզ համար կուպիեաներ ելին արտասանում, —պատասխանեց մի տղամարդ: —Իսկ թե ովքեր եյին նրանք ալստեղից դուրս՝ դա չի վերաբերում մեզ:

Նա լուց և մենք այլևս չխոսեցինք: Կանգնած ելինք ալդպես, լուռ ու մտախոհ:

Խփեց մեռյալ ժամի զանգը: Մենք սթափվեցինք և արագ վերադառնք: Բոլորս ել ուշացել եյինք: Վատ ե...

Ցերը մոտեցանք շենքին, մեկը բղավեց:

—Ո՞ւզ եյիք: Մեր կոմիկը գնաց: Շատ փնտրեց ձեզ՝ մնաք բարովի համար:

—Կոմիկը գնանց...

—Գնաց, Մի տեսնեյիք, թե ինչպես սրտառուչ բաժանվեց իր ընկերոջից: Ընկերը կանգնել եր ժայ-

ոի ծայրին ու բերանով նվագում եր, իսկ նա պարելով իջնում եր ձորը։ Այդպես պարելով ել հասավ կայրան։ Հեռադիտակով բոլորս տեսանքը...

Հանկարծ յերևաց կոմիկ ուսանողը։

—Բա ասում եչիք թե գնացել ե,—զարմացանք մենք և անշափ ուրախացանք։

—Ինքը չի գնացողը, այլ իր ընկերը, —մեքենավարը։

Ուսանողը մոտեցավ ու մելամաղձոտ նայեց ներքեւ։

—Գնաց սրիկան, —ասաց նա։

Նա ակներեւ տիսուր եր, սակայն փորձում եր պահպանել իր վոճը։

—Յեկ գիտեք ինչքան տարորինակ հասցե ուներ... Մեռանք ծիծաղելուց։ Յերեակայեցեք. —Լենինական, դեպո, այսինչ։

Մենք ծիծաղեցինք, բայց բռնազրոսիկ եր ալդ ծիծաղը։

—Ուրեմն վերցրիր հասցեն։

—Այու Բայց դատարկ բան եւ Վոչ յես կհանդիպեմ, վոչ նա։

Յես ուզում եյի պատասխանել բայց հանկարծ յերեաց հանգստի՝ տան վարիչը։

—Ի՞նչ եք անում այստեղ... Մեռյալ ժամի զանգը վաղուց եւ խփել։ Մարշ դեպի ննջարան։

Մենք ցըլեցինք մեր ննջասենյակները։ Իմ ննջասենյակում բոլորն արդեն քնած եյին։ Յես պառկեցի, բայց քունս չեր տանում։

Վոչ յես կհանդիպեմ, վոչ նա... Ճիշտ ե ասում ուսանողը։ Ինչի՞ յե պարտադրում հանգստի տնում

հանդիպման մի ամիսը։ Բացարձակապես վոչնչի շանդիպեցին, ապրեցին, իսկ հիմա բաժանվում են։ Այլևս հազիկ թե կյանքի ջրապտույտները մի անգամ ևս նրանց իրար մոտ բերեն։ Իսկ յեթե այդպես ե, ուրեմն ել ի՞նչ կարիք կա հետագա հանդիպման կամ նամակագրության խոսումների. Յերբ քանդվի այս փոքրիկ հասարակությունը, մեղանից յուրաքանչյուրը կվերադառնա ժամանակավորապես թողած իր նախկին միջավայրը, նորից իր նախկին յուրալինների հետ անմիջական փոխհարաբերության մեջ մտնելու, կապակցության մեջ մտնելու...»

Իմ ննջասենյակում՝ վեղկերը փակ եյին։ Կիսախավարի միջից յես լսում ելիք քնածների հանդարտ ու կանոնավոր շնչառությունը. —քնելու տրամադրող այդ միջազգային մեղեդին։ Արևի մի բարակ շերտ վեղկերի ճեղքից ընկել եր քնած մի կոմէրիտականի վրա և թրի նման կիսել եր նրա կերպարանքը։ Մի ուրիշ շերտ ընկել եր հարեւան մահճակալին։ Հետո ուրիշ շերտեր՝ նույնպես բարակ ու սուր։ Ննջասենյակը կարծես շերտավոր վագր լիներ։ Յես նայում եյի նրան և ինձ տիրապետում եր անհաղթելի թմրությունը, մեղկ հանգստությունը։ Խաղաղվում ելին հույղերս, մաշվում տպավորություններս, բթանում զգայարաններս և յես զգում եյի, վոր քնում եմ,

Յերեմի շատ չելիք քնել, —համենայն դեպս մեռյալ ժամի ավարտման զանգը դեռ խփել, —յերբ խաղաղ արթնացա. Գուցե յերազ եյի տեսել և այժմ մեղմ ու աննկատելի տեղափոխվում եյի հեքիաթա-

կան աշխարհից դեպի իրականը։ Սակայն աչքերս
արդեն բաց ելի արել, բայց դիմացս դեռ տեսնում
եյի մի անուշ պատկեր։ Սենյակի կիսախավարում
կանգնել եր մի աղջիկ կաշվե վերաբերույով, կաշվե
գլխարկով, ինչպես ոդանավորդ։ Նա ձեռքին բռնել
եր մի փոքրիկ ճամբրուկ և նրա դեմքը մի քիչ թախ-
ծոտ եր։ Նա կարծես սպասում եր իմ արթնանալուն։
Յերբ լես աչքերս բաց արի, նա թեթև ժպտաց, մի
քայլ մոտեցավ և ասաց։

—Վեր կաց, գնում եմ։

Ո՞վ ե գնում, նա, իմ սպիտակ աղջիկը։ Դե նա, ի
հարկե պիտի գնա։ Բայց լես այս ինչնեւ մոռացել ելի
այդ բանը...

—Գնո՞ւմ ես...

Դրսում հոնդաց հանգստի տան ավտոն։ Լսվեցին
ձայներ, Արագ խոսում ելին։

—Գնանք, ուշանում եմ, —շտապեցրեց աղջիկը։

Յես վեր ցատկեցի։ Սենյակում վոչ վոք չկար բա-
ցի մեղանից։ Բաց արի մի փեղկ։

—Համբուրիր և գնանք, Ավտոն սպասում եւ։

Նա մոտեցավ ինձ՝ ճամբրուկը ձեռքին։ Յես վեր-
ջին անգամ իմ շուրթերի մեջ հավաքեցի նրա շուր-
թերը։ Նա կամաց վար զցեց իր ճամբրուկը մահճա-
կալի վրա և փաթաթվեց ինձ։ Իսկ հետո, արագ պոկ
յեկավ և վերցրեց ճամբրուկը։

—Գնանք։

Դուրս կալիս, լես շշնջացի նրա ականջին։

—Ալստեղ պատահածն այստեղ կմնա...

—Ի՞նչը, —կարծես սթափվելով հարցրեց նա, —ախ,
չա, Դե, այդ կարեռ չե։ Յես աղատ մարդ եմ...
Յերբ անցնում եյինք ճաշասենյակի մոռով, նա
հանկարծ կանգ առավ և ցուց տվեց պատը։
—Հիշո՞ւմ ես, կարգացինք մեր հանդիպման առա-
ջին որը...

«Ո՞վ այցելուներ, լսեցէք իմ իմաստությունը։ —
յեկեք ամսի 1-ին և վերադարձեք 30-ին։»

Յես ցնցվեցի։ Անծանոթ իմաստասերի խոսքերն
այս անգամ այնքան ել անհմաստ չթվացին ինձ...
Յես արագ ցած իջա, յերբ իմ ընկերուհին արդեն
նստել եր ավտո։ Վորոշեցի յես ևս նստել, գնալ կա-
յարան։ Նրան ճանապարհելու, բայց ավտոյում տեղ
չկար. իսկ նա, կարծես հասկանալով իմ մտադրու-
թյունը, կուցավ դեպի ինձ ու շշնջաց։
—Կարիք չկա...

Ավտոն շարժվեց, Յես բռնեցի նրա ձեռքը և ա-
մուր սեղմեցի։ Ավտոն սլացավ։ Բոլոր մնացողներս
խմբվեցինք ժայռերի վրա և սկսեցինք նայել հեռա-
ցողներին։ Նրանք գնացին դեպի վայրեջքը, հետո
թեքվեցին, կարծես յետ ելին գալիս, բայց այդ վո-
լորապտույտներն ելին, վոր ստեղծում եյին վերադար-
ձի պատրանքը։ Ավտոն իջնում եր միշտ ավելի վար,
միշտ ավելի վար...

Յես կարծես նոր միայն սթափվեցի քնից։ Այդ
ինչպես Գնացին։ Նաև իմ աղջիկը։ Բայց ինչնեւ իմ,
ինչնեւ իմ։ Հիշեցի «Լենինական, դեպո, այսինչ»-ը...
ինչի՞ յեն պարտադրում հանգստի տնում հանդիպման
յերկու շաբաթը, Բացարձակապես վոչնչի։ Հանդիպե-

ցինք, ապրեցինք; իսկ հիմա բաժանվում ենք. Արդյո՞ք մենք նորից կհանդիպենք մեկ մեկու... Թեկուզ և հանդիպենք: Բայց այդ հանդիպման ժամանակ ալլա չի լինի անտառը, չեն լինի լեռները, այս արբեցնող բնությունը չի լինի, ուրեմն և չեն լինի մեր համբույրները:

Են, հրաժեշտ քեզ, սպիտակազգեստ աղջիկ՝ յոր նազույն թերով՝ ու մերկ վոտքերով...

7

Նորից մի յերեկո իջավ հանգստի տան վրա: Տըխուր յերեկո: Հանգստացողներն զգալիորեն սակավացել եին, խաղաղվել եր շենքն ու. շենքի շրջապատը: Քանի թուփ եր թափուր մնացել իր տակ նստող զույգերից, քանի տեղ եր դատարկվել: Այլևս վոչ վոք չեր հիշում սիրահարված զույգին կամ կոմիկ բանվորին, քանի վոր նրանցից հետո գնացել եր նաև դերասանը, գնացել եյին յերկու ծերունիները, հասակավոր կինը, ջահել տիկինն իր ութ տարեկան տղայի հետ, մանղուին նվագողը... Լողանալ սիրող յերեք ընկերուհիներից գնացել եր մեկը և այժմ յերկուսը շրջում եյին շարունակ միասին՝ իրենց հեռացած ընկերունու պերն ևս տարածելով իրար վրա: Յերեկը նրանք բոլորովին չելին լողացել և ըստ յերևութին տրամադրություն ել չունեյին հետագալում լողանալու իսկ տղաները նըրանց ալլա չելին չարացնում և ոճաձուկ այլևս չեյին անվանում:

Այդ յերեկո, ավելի քան յերբեն, զգացվեց լուսի կարիքը: Խավարն ուղղակի համար եր մարդու—մի

քան, վոր տեղի յեր ունենում առաջին անգամ: Յավալի յեր գիտակցել, վոր մթան միջից յուրաքանչյուր քայլափոխում դուրս չպիտի լողան հանգստացողների ծանոթ կերպարանքները: Քանի դեռ կային նրանք, նրանք լրացնում ելին լույսի թերին: Իսկ այժմ վոչ լուս կար և վոչ հասարակություն...

Այս յերեկո, ավելի քան յերբեն, յես պայծառ գիտակցել թխադեմ յերիտասարդի գործնական խոսքերի ամբողջ պողպիան.

—Շուտով լուս կլինի, ելեկտրական լուս: Յես այսոր նորից հեռագիր տվեցի, վոր շտապեն ուղարկել դինամոն Բագվից: Ախ, զգվելի ղանդաղկոտություն... Իսկ, գիտես, մենք շուտով ուղիո յենք ունենում... Դժվար ե առալժմ հեռախոսի գործը, բայց այդ ել կարգեմ...

Նրա խոսքերն այսոր հնչում են կարծես իբրև հուսիսի խոսքեր՝ ասված ինձ համար, մյուսների համար: Նա կարծես չի պատմում իր ծրագրները, այլ միխթարում ե մեզ: Հավատացեք նրան: Քանի նա այստեղ ե, ամեն որ մի նոր նորություն կմտնի հանգըտի տունը: Գուցե դուք դեռ չեք տեսել կովերին: Նըրանք արդեն այստեղ են, պահեստի յետեկի քարեշենքում:

Նրա խոսկելու ընթացքում զրուցարան հավաքվեց հանգստացողների համարյա ամբողջ կազմը: Նրանք լուս հետեւում եյին վարիչի խոսքերին և յերուածեր, վոր բոլորը թախծոս են:

—Ե՞ն, բացականչեց հանկարծ վարիչը, — լես պիտի հեռանամ հանգստի տնից, տղաներ...

Վոչ վոք ձայն չհանեց։ Այնքան անսպասելի ելի՞ն
Նրա խոսքելը։

Ցես ելի միայն, վոր հարցրեցի թերահավատ։

—Կատակ ես անում։ Ի՞նչու պիտի հեռանաս։

—Վոչ, կատակ չեմ անում։ Վատ ե մի տեսակ։
Հազիվ վարժվում ես հանգստացողներին, հազիվ կապ-
վում ես նրանց հետ, մեկ ել տեսար՝ նրանք գնացին
և լեկան ուրիշները։ Ակսիր նորից նույնը։ Ե՛հ։

Մենք լուռ ելինք նորից։ Բայց և իսկուն, մեկը
խավարի միջից զվարթ պատասխանեց։

—Մի տիրիր, մեզանից հետո կդան մեզ նման-
ները։

—Գիտեմ, —պատասխանեց նա, —կդան ձեզ նման
մարդիկ։ Բայց չե վոր միշտ սիրելի լեն նրանք, ում
հետ լնտելացել ես արդեն... Ե՛հ, միք հեշտացնի, տը-
ղաներ, ամեն աշխատանք ունի իր դժվարություն-
ները։ Կդնամ անպայման...

—Չես գնա, —ծիծաղից լողանալ սիրող ազջիկնե-
րից մեկը։ —Դու այնքան շատ ես սիրում քո հանգը-
տի տունը։ Կդնամ միթե...

Նա ձայն չհանեց։

—Դե լավ, թողնենք փիլիսոփայելը, —բղավեց մի
յերիտասարդ, աշխատելով ստեղծել զվարթ տրամադ-
րություն։ —Ավելի լավ ե՝ գնանք ակումբ, մի բան
կազմակերպենք...

—Ի՞նչ կազմակերպենք։ Դերասանը չկտ, մանդո-
լինք գնաց, կուպլետ արտասանողներ չունենք։
Ցերգիչ յերիտասարդը մի քանի նոտա բաց թողեց։
Վոմանք ծիծաղեցին։

—Հա, դե դու կաս, ի հարկեւ Բայց մի ծաղկով խո-
գարուն չի գա։

Նորից լուռթյուն։ Բան չեր դուրս գալիս և տրա-
մադրությունը մնում եր նույնը։

—Իսկ կոմիկը գնաց... —Զիգ ավեց մեկը։ —Գնաց
իր ընկերոջ նման։

—Ուսաննղը։

—Այո, նա։

—Միթե։

—Իսկ միթե դու չգիտես։ Մենք բոլորս ճանապարհ
որեցինք նրան։

Իսկ ինչպես գնաց։

—Գնաց սովորական։ Ի՞նչ կատակ պիտի աներ ա-
սանց իր բարեկամի։

—Ե՛հ, գնանք քննենք, —առաջարկեց մեկը։ —Հիմա
զանգը կիսիի...»

Յեզ մենք գնացինք մտանք մեր ննջարանները,
իսկ զանգը դեռ յերկար ժամանակ չխփեց...

8

Առավոտյան, յերբ արթնացա, հանգստի տանը հա-
մարյա վոչ վոք չեր մնացել։ Այն ննջասենյակում, ուր
յես ելի տեղափորված, ինձանից բացի այլևս վոչվոք
չկար։ Նախաճաշի ժամանակ, սեղանների մոտ նստո-
ւել եցին միայն մի քանի հոգի և զեռ նրանց մի մա-
սըն ել քիչ հետո պետք ե ճանապարհվեր։ Մենք լուռ
կինք և յեթե խոսում եյինք ել, ապա խոսում ելինք
չամարյա շըուկով։

Հետո, հանկարծ, լսվեց ավտոյի հռնդոցը։ Մենք

բոլորս գուրս յեկանք, յենթադրելով, վոր նոր հանգըտացողներ են յեկել. Սակայն ավտոն դեռ նոր եր գնում կայարան: Գնացողները մեզ հրաժեշտ տվեցին և նստեցին ավտոն: Մենք բութ հայացքով պատասխանեցինք նրանց և ապա ցրվեցինք տարբեր կողմեր:

Յես փորձեցի մտնել անտառ: Սակայն անրուժելի մի կարոտ ինձ յետ պահեց: Ինչու գնալ այնտեղ՝ յերբ իմ դիմաց չպիտի յերեա իմ սպիտակ աղջիկը, վորը շարժվի իր նստած տեղում և տեղ անի ինձ իր կողքին: Շուտ գնաց անիծվածը, ափսոս: Թե գուցե յես ինքս ուշ յեկա... Վոչ, ավելի լավ ե թեքվել այս կողմ, գեպի ոժանդակ շենքերը, մտնել խոհանոց կամ պահստան և զբուցել աշխատակիցների հետ...

Յես առաջ ել առիթ ելի ունեցել հանդիպելու հանգստի տան ծառալողներին, խոսել նրանց հետ, սակայն շատ սակավ: Նրանք ամբողջ որն զբաղված ելին իրենց գործերով, իսկ յես՝ անտառներով ու ժայռերով: Յեվ միայն այժմ յես կարողացա մոտիկից տեսնել, թե վորքան սքանչելի և հարգելի կին եր այդ տնտեսուհին, վորն աշխատում եր զարմանալի յեռանդով, գիշեր ու ցերեկ, առանց հարցնելու, թե վորն ե իր գործը և վորն ե ուրիշինը: Յես կարողացա մոտիկից տեսնել, թե ինչպես վարիչն ու իր աշխատակիցները շարունակ զբաղված եյին այն հոգսերով, վոր համեղ պատրաստվեցին ուտելիքները, վոր լրիվ լինելին կալորիաները, վոր զվարճալի և ուրախ անցներ հանգստացողների մի ամիսը: Դակ հետո նուանցներ հանգստացողների մի ամիսը: Դակ հետո նուանցներ անդրադարձա դեպի տնտեսուհին: Յես նրանք

տեսել եյի ուշ գիշերներով իր սենյակում նստած, անկողինների համար սավաններ կարելիս, յես նրան տեսել ելի լուսաբացից առաջ վտաքի վրա, յերբ նա մեզ համար վաղ նախաճաշիկ եր պատրաստում, վորովհետև մենք գնալու ելինք մոտակա Ալլահիերգու պղնձահանքերը՝ եքսկուրսիալի: Մի քրոջական մեղմ արտահայտություն կար նրա գեմքին և նա մտահոգված եր բոլոր հանգստացողներով՝ հալրազատ քրոջ պես: Բոլորը հարգում ելին նրան, բոլորը պատկառում նրանից և լսում նրան: Մի զարմանալի ազգեցություն ուներ մեզ վրա այդ կինը: Մենք սիրում ելինք նրան: Ու յերբ հանգստացողները պետք ե հեռանալին, հարգեշտի ժամանակ նրանք անպայման պետք ե հանդիպելին այդ տնտեսուհին, իսկ կանալքու աղջիկները համբուրվելին նրա հետ: Յես տեսել եյի մի քանի անգամ, թե ինչպես նա արցունքն աչքերին, եր ճանապարհ դնում հանգստացողներին, վորոնց հետ վարժվել եր այդ մի ամսվա ընթացքում,

Յեվ այժմ, իմ մենակությունից և իմ մտքերից մի կերպ խուսափելով, յես մտա նրա մոտ: Յես յենթադրում ելի մի քանի բոպե լուռ նստել այնտեղ, տեսնել իմ հանդեպ նրա համակրելի, հարգելի կերպարնքը և ամոքվել: Յես կարող ելի նաև ոգնել նրան մի աշխատանքով և հոգեպես բավարարվել: Սակայն յերբ ներս մտա, հանկարծ զգացի, վոր յես յեկել եմ հարցնելու նրան ինձ տանջող մտքերի պատասխանը: Յեվ համոզված ելի չգիտեմ ինչու, վոր նա իներք րան կասի, կասի ալն, ինչ վոր հարկավոր ե ինձ...

—Տնտեսուհի, —հարցը նրան, —ի՞նչ կասես այն —

մասին, վոր նրանք գնացին և մնացինք միայն մի քանի մարդ, մենակ ու տիտուր:

Նա նաև լինձ, ժպտաց այնպիսի ժպտով, ինչպես մայրն է ժպտում իր հիմար լերեխալին: Իսկ հետո պատասխանեց, առանց աշխատանքն ընդհատելու.

—Ինչի՞ դեմ ես բողոքում... Նրանք վոր գնացին, պետք ե գնալին, իսկ նրանք, վոր գալու են, պետք ե դան: Մեր հանգստի տունը կառուցված ե հենց դրա համար, վոր շարունակ գնան հները և գտն նորերը...

—Գնան հները և գան նորերը... Իհարկե՛, Բայց հնարավոր չե՞ արդյոք անել այնպես, վոր փոփոխությունը տեղի ունենա վոչ թե այսպես հանկարծ, այլ աստիճանաբար: Թող գնա մեկը, գա մի ուրիշը, գնա յերկրորդը, գա մի այլ յերկրորդը: Վատ ե, յերբ փոխվում են բոլորը միանգամից...

Նա ժպտաց.

—Ուրեմն այդ ի՞նչպես: Փոփոխվել վոչ թե միանգամից, մի կամ յերկու որում, այլ հետզհետե, միշտ ու ամեն մը: Այդ դեպքում մը լր կմնա կայուն պլանը, հանգստացողների հաշվառումը, ել մը լր կմնա յուրաքանչյուր ամսավերջի ավլում-մաքրումն ու թեթև վերանորոգումը, վոր հնարավոր ե միայն այս պայմաններում, յերբ մի կամ յերկու որով դատարկ ե մնում հանգստի տունը...

—Ճիշտ ե, այդ ամենը բավական կդժվարանա, պատասխանեցի յես,—բայց այդ վեր պլանն ե, վոր անպատիժ կերպով կարող ե աչքաթող անել մարդկացին հոգին: Դուք պիտի մտածեք վոչ միայն շենքի հարմարությունների մասին, մսի և կովերի, ամսեկան

պլանի, ճշգրիտ հաշվառման, այլև մեր հույզերի ու մեր մտքերի: Ապա թե վոչ, կեսից յեկող ինձ նման մեկը վարժվում ե մի միջավայրի, բայց հանկարծ պոկվում ե այդ միջավայրը և հեռու գլորվում: Մարդը մնում ե մննակ: Յեկ հետո հանկարծ նրան շրջապատում ե մի այլ միջավայր՝ իր նոր մարդկանցով: Յեկ մարդը պետք ե մոռանա նախկին ներին և կապվի նորերին...

Տնտեսուհին նայեց ինձ մտածող հայացքով, լուս մաց մի քիչ, ապա հանդարտ խոսեց.

—Այդպես կարող են մտածել միայն մնացողները, այսինքն յես և քու, վոր փոքրամասնություն ենք. Վոչ գնացողները և վոչ յեկողները չեն լինի մեր վիճակում և չեն ունենա մեր այս մտքերը: Ել ուրեմն միթե իմ, քո, վարիչի, —այս փոքրամասնության, —շհերի համար արժե խախտել մեր հանգստի տան կայուն պլանը, դժվարացնել հաշվառումը, խանգարել վերանորոգումը...

—Ուրեմն ի՞նչպես, —բացականչեցի յես.—միթե պիտի տիրենք մենք, վոր կեսից ենք յեկել... Միթե նորից պիտի տիրենք մենք, վոր կեսից պիտի գնանք: Յեկ միթե նույնիսկ մեր սիրելի տնտեսուհին չպիտի գտնի միսիթարության և վոչ մի խոսք մեզ, կեսից յեկողների համար... Վարն ե մեր լուծումը...

Տնտեսուհին ժպտաց, վեր կացավ, թեանցուկ արեց ինձ և լուս դուրս յելավ առանց պատասխանի: Մենք յեկանք դեպի գլխավոր շենքը, բարձրացանք սրա սանդուխքներով վերև, յերկրորդ հարկ ու յերր հասանք ալնտեղ, նա ցուց ավեց ինձ պատի վրա

լեղած մի գրություն, իսկ ինքը մտավ ճաշասենլակ՝ ձաշի պատրաստություն տեսնելու համար։ Յեվ յերբ բորդ անգամ յես կարդացի։

«Ո՞վ այցելուներ, լսեցեք իմ իմաստությունը, — յեկեք ամսի 1-ին և վերադարձեք 30-ին»։

Յես ցնցվեցի՝ հանկարծակիի յեկած։ Այս անգամ տեսաւ, վոր հիմար խոսքեր չեյին այդ խոսքերը, այլ իրոք վոր իմաստության խոսքեր, թեև ինձ համար այնքան ուշացած իմաստության...»

❶

Ճաշի ժամանակ, իմ կողքին նստեց ոձաձկներից մեկը, — միակը, վոր մնացել եր յերեք ընկերուհիներից։ Մեզ մոտ վոչ վոք չկար և համարյա վոչվոք չկար վողջ ճաշարանում, բացի մի հաշվապահից ու կոլտնտեսուհուց, վորոնք նստել եյին մի հեռու անկյունում։ Յես հարցըրի աղջկան։

— Ե, չես լողանում։

— Վոչ, — պատասխանեց նա զվարթ, — ճանձրալի յեառանց ընկերուհիների։

— Իսկ լինը ես գնալու։

— Վաղը։

Նա գեղեցիկ ցնցեց կարճ կտրած մաղերը և ըսկուց ուտել։ Աղջիկ եր նա, իսկական աղջիկ։ Ուտելիս, սեղանի տակ նա շարժում եր վոտքերը և կիսակոշիկները քսքսում հատակին։ Կարճ, կես թղանոց գուլպաներից վերև սեացել եյին նրա վոտքերը և տեղ չանգոռովկել անտառի մացառներից։ Յերբեմն, յերբ նա անտառում արագ վագում եր, նրա առանց

այն ել կարճ գուլպաների փողերը ցած եյին իջնում և յերեռում՝ եր, վոր նրա վոտքերը գուլպաների մեջ սպիտակ եյին մնացել։ Նա ամենից աշխույժն եր յերեք ընկերուհիներից և այժմ զվարճալի լեր տեսնել նրան այդպես խելոք ճաշելիս և միայն իր անհանգիստ վոտքերը շարժելիս։

Յերբ վերջացրինք ճաշելը՝ դուրս լեկանք շենքից, անտառ գնալու համար, նա թեանցուկ արեց ինձ և մենք դեռ չեյինք հեռացել մի՛քանի քայլ, յերբ լետեսից լսվեց ավտոյի հոնդոցը։ Մենք արագ յետ դարձանք, տեսնելու համար, թե ինչ ընկերներ և ընկերուհիներ ե ըներում մեզ համար հանգստի տան ավտոն...

Ճենքի մոտ փոշի բարձրացավ։ Դուրս վաղեցին վարիչը, տնտեսուհին և ուրիշները։ Ավտոն կանգ առավ և այնտեղից սկսեցին իշնել վեց հոգի՝ ճամբրուկներով և վերարկուները թեւրին գցած։ Նրանցից յերկուաը տղամարդ ելին, իսկ չորսը կանալք։ Բացի մի տղամարդուց, բոլորը յերիտասարդներ եյին և ըստ յերեռույթին իրար անծանոթ։ Ամենալն հավանականությամբ, նրանք վար ելին իջել տարբեր վագոններից և միայն ավտոյում ելին հանդիպել մեկ մեկու։

Յես և աղջիկն ավելի մոտեցանք նրանց։

Յեկվորները մի քիչ քաշվում եյին և առաջին ըռպելին չգիտեցին ինչ անել։ Հետո բարեկցին վարիչին, վորն ուղեկցեց նրանց՝ տեղավորվելու։

— Յես այլևս քեզ հետ անտառ չեմ գա, — Ժալտաց

ռածուկը: — Այժմ յես նորից կգնամ լողանալու, Նը-
րանց հետ...

Այս խոսքերով նա մտավ շենք, իսկ յես մնացի
մենակ:

Այսպես ուրեմն, արդեն սկսեցին գալ նրանք, — այդ
նորերը: Իսկ ինձ թվում եր, թե նորից պիտի վերա-
դառնան ուրախ ուսանողն ու նրա բարեկամը, պիտի
վերադառնա ջահել տիկինն իր ութ տարեկան յերե-
խայի հետ, ծերունի պահակը՝ չիրուխը բերանին և
ամեն ինչ նորից նույնը պիտի լինի: Ամեն յերեկո
դերասանը մեզ դահլիճ պիտի հավաքի, սիրահարված
զույգը կուպլեաներ պիտի արտասանի, հաղթանդամ
յերիտասարդը մանղոլին պիտի նվազի և հանգստի
տան ջահել աշխատակիցները պիտի պարեն դարձալ
իրենց զույգապարը... Ինձ այդպես եր թվում, բայց
ահա յեկել են բոլորովին ուրիշները... Տեսնես ի՞նչ
տիպեր են նրանք: Տեսնես կամ նրանց մեջ մեկը, վոր
փոխարինի մեր կոմիկ ուսանողին, կամ մի ուրիշը,
վոր այն կոմյերիտականի նման նստի ժայռերին և
քերգի ձորն ի վար...

Յես գնացի անտառ: Բավական հեռացա զառիվալր
զանցով: Իմ վոտքերս սայթաքում ելին խոտերից և
վար թափած փշե տերեններից: Հետո, գուցե պատա-
հաբար, յես հայտնվեցի այնտեղ, ուր սովորաբար նըս-
տում եր սիրահարված զույգը: Նստեցի նրանց տե-
զում: Այնտեղ, դեռ մինչև այժմ, ընկած եր զրքի
թերթիկը և մի կողմում դիզված ելին կոտրատված
չոր ճյուղեր: Խոսելիս, հավանաբար, նրանք գետնից
վերցրել ելին ալդ ճյուղերը, ձեռքի մեքենալական

շարժումով կոտրատել և լցրել այնտեղ: Իմ անձնական
փորձից գիտելի, թե վորքան սովորական զբաղմունք
և պառկել անտառում առանց մտքերի և ծառերից
ընկած փոտած ճյուղերը կոտրատել...

Ի՞նչ ամուր ե կապվում մարդ իր միջավայրին,
սատանան տանի: Ընդամենը միայն յերկու շաբաթ
ե, վոր յես անց եմ կացրել այդ մարդկանց շրջանում,
իսկ այժմ արդեն կարոտում եմ նրանց: Կարոտում
եմ դուրս ընկած կլթակով յերգչին, կարոտում եմ
սպիտակ զգեստով կնոջը, կարոտում եմ ծերուկին,
վոր աթուրմա յեր խաղում, կարոտում եմ բոլոր
մլուսներին: Յեվ կարոտում եմ վոչ թե նրա համար,
վոր նրանցից մեկը կոմյերիտական եր, մլուսը կու-
սակցական, յերբորդը բանվոր կամ կոլտնտեսա-
կան, չորրորդը յերգիչ կամ զվարճախոս: Վոչ, դրա հա-
մար չե, վոր կարոտում եմ նրանց, քանի վոր ամեն-
տեղ և միշտ կարող եմ հանդիպել այդպիսիների: Յես
կարոտում եմ նրանց վոչ վորպես ալդպիսիների, այլ
վորպես մարդկանց: Յես կարոտում եմ նրանց հակա-
նեհանվանե, հատկապես այսինչին, առանձնապես
այնինչին, անձնապես յերբորդին...

Զառիվայրի վերևում խշիշոց լսվեց: Նայեցի: Գա-
լիս եր ոճածուկը: Զայն տվեցի նրան: Նա յեկավ,
լուր նստեց կողքիս:

— Այնուամենայնիվ, դու յեկար անտառ, — ծիծա-
ղեցի յես:

Նա չպատասխանեց: Կարծես մտածկոտ եր: Բայց
հետո, յերբ խոսեց, նրա ձախնի մեջ չկար վոչ մի աը-
խուր շշտ:

— Ի՞նչ տիպեր են յեկել, յերևակայել չես կարող՝
Մեկն ընդհանրապես չի սիրում լողանալ, յերկրորդը
սիրում ե, բայց ինքն ինձ դուր չի գալիս, — շատ
հպարտ աղջիկ ե, յերրորդը լողանում ե, բայց այն-
քան լուրջ ե, վոր նրա հետ լողանք ընդունելը յերևի.
հավասար ե զեկուցում խելու։ Իսկ չորրորդին բժիշկ-
ներն արգելել են առաջմ սառ ջրում լողանալ...

— Այդպիսու։ Իսկ ինձ թվում եր, թե նորից պիտի
կաղմակերպվի ձեր ոճաձկների խումբը.. Լավ խումբ
եր, ապնիվ խոսք...

— Ել չի կաղմակերպվի։ Ափսոս իմ ընկերուհինե-
րը։ Լավ աղջիկներ եյին։

— Կարոտմամբ ես նրանց։

— Ի հարկե, կարոտում եմ։

Հեռավոր ոճաձկներ.. Յերևի այս րոպեյիս նրան-
ցից մեկը կանգնած ե վորևե դաղդյահի մոտ, իսկ
մյուսը նստել ե գրասեղանի յետեւ.. Կարմող ե արդյոք
նրանց մի ընկերուհին, առանց նրանց, կաղմակեր-
պել հին յերրորդությունը։ Նու, մի րոպե յենթադր-
բենք, թե կաղմակերպեց։ Ո՞վ պիտի այլքս նրանց
ոճաձուկ անվանի, ով պիտի սպառնա հանվել և լո-
ղանալ նրանց հետ միասին... Վորպեսզի կաղմակերպ-
վի նախկին յերրորդությունը, վոչ միայն հարկավոր
են ընկերուհիներ, այլև անհրաժեշտ են այն յերիտա-
սարդները, այն կոմյերիտականները, այն շախմա-
տիստները... Մի խոսքով, հարկավոր ե, վոր յերա-
կանգնվի մեր նախկին փոքրիկ հասարակությունը..
Իսկ ինչու վերականգնվի... Միթե յեկվորներն ավե-
լի վատերն են, Միթե նրանց մեջ չկան նույնպիսի

մարդիկ, մտերիմ, սիրելի... Պետք ե վարժվել սրանց,
ինչպես յերկու շաբաթ առաջ վարժվեցինք նրանց,
ովքեր գեռ չեցին փոխվել։ Ճիշտ ե, այժմ այդ գժվար
եւ Յերկու շաբաթ առաջ այդ հեշտ եր, վորովհետեւ
մենք չունեցինք յետ պահող հուշ, իսկ ալժմ կա այդ
հուշը...

— Ի՞նչ ես մտածում, — հարցրեց ինձ աղջիկը։

— Վոչինչ, — պատասխանեցի։ — Մեկը պատի վրա
մատիտով գրել եր, վոր հարկավոր ե գալ ամսի սկզբ-
ըին և գնալ վերջին։ Ըստ յերեսույթին նա յել ինձ
նման կեսից ե յեկել...

— Իսկ յես վաղը յերեկոյան գնում եմ, — ժամաց
նա։ — Այսքան եմ կարոտել մեր տղաներին, իմ ըն-
կերուհիներին... Ի՞նչ յերկար ե տեսում մի ամիսը...

— Իսկապես, — բացականչեցի յես, ամիսը տեսում ե
բավական յերկար։ — Մոռանում ես, վոր մինչ այդ
ապրել ես ուրիշ տեղ, ուրիշ միջավայրում։ Այսինքն
վոչ թե մոռանում ես, այլ կորցնում ես այդ միջա-
վայրի անմիջական զգացողությունը քո շուրջդ ու քո
մեջ։ Այդ միջավայր թվում ե քեզ հեռու, անմիջա-
կան կերպով քեզ չվերաբերող։

— Ճիշտ ե, գիտեմ։ Յես ինքս ուզում եմի ասել այդ
մասին, բայց չեմի կարողանում միտքս արտահայտել.

Յես նայեցի նրան։ Ափսոս, անուշ աղջիկ, վոր ըը-
նության մեջ վոչինչ չի կրկնվում։ Այլապես, գու հի-
մա կրոնելիք սպիտակ աղջկա տեղը, վորովհետեւ, գի-
տեմ, այս սքանչելի անտառը քեզ ել ինձ նման գե-
պի սեր ե մզում... Բայց մի կին, ուրիշի կինը, —
գեռ չմարած իր հուշով ինձ յետ ե պահում մի նոր

գրավչությունից: Գիտեմ, կանցնի այդ, բայց այդպես
և առաջմ: Այս ըովելիս ինձ ավելի քաղցր են րա
անմարմին հուշը, քան քո գեղեցիկ հայացքը, վորով
նայում ես ինձ և անտառին...

— Գնանք, — հարցը եց նա:

— Գնանք, — պատասխանեցի լես ու վեր կացա:

10

Այսոր այն որն ե, իբրև պիտի գա հանգստացող՝
ների գլխավոր մասսան: Վաղ առավոտվանից յես վոտ-
քի լելա և սկսեցի սպասել: Այժմ ավտոն պիտի գա
քի բերի նրանց, ովքեր պիտի գառնան մեր միջավայ-
րը: Զարմանալի յե: Հավաքում ե ավտոն մինչ այդ
բը: Իրարմանալի յե: Հավաքում ե ավտոն մինչ այդ
անձանոթ մարդկանց, բերում ե այստեղ, իսկ
այստեղ նրանք պիտի կապակցվեն, պիտի կազմա-
կերպվեն իբրև հասարակություն... Յես նորից զար-
մանում եմ նախամարդու զարմանքով, թե վորքան
մանում եմ նախամարդու զարմանքով, թե վորքան
հետաքրքիր բան ե կյանքը... Ահա հոնդաց ավտոն
այստեղ, ներքեռմ, ճանապարհի վրա: Ահա լավեցին
ուրախ բացականչություններ: Յերկի նրանք արդեն
ուրախ բացականչություններ: Յերկի նրանք արդեն
այստեղին այս շենքի կտուրի սուր ծայրը: Ահա յե-
նկատեցին այս շենքի կտուրի սուր ծայրը: Ահա յե-

նկատեցին այս շենքի կտուրի սուր ծայրը: Ուածուկը ներսումն եր:
հին և մյուս ծառայողները: Ուածուկը ներսումն եր:
նա պատրաստվում եր կայարան գնալ՝ լերեկուան
նա գայացքով մեկնելու համար: Ավտոն լեկավ և դեռ
գնացքով մեկնելու համար:

զիվ կանգնած, այնտեղից վար ցատկեցին կենսուրախ,
աշխուժ տղամարդիկ, կանայք, իերիտասարդներ, աղ-
ջիկներ: Մի վայրկանում հանգստի տունը կարծես
լիցավ մարդկանց բազմությունից: Ավտոն շտապ
վերադարձավ՝ ներքեռում մնացած ուրիշներին բերե-
լու:

Նորեկները զվարթ սկսեցին դիտել իրենց շրջա-
պատը, հիանալ կամ զարմանալ: Մի քանիսը վար
գրեցին իրենց ճամբրուկները և վաղ տվեցին դեպի
մարզափայտերը, վոմանք շենք մտան, իսկ վոմանք
անմիջապես ագահ հայացքները հառեցին դեպի զով
անտառը:

Ասել, թե նըանք բոլորովին անձանոթ եյին մեկ
մեկու, չեր կարելի: Կալարանից մինչև այստեղ, նը-
րանք արդեն կարողացել եյին վորոշ մտերմություն
հաստատել միմյանց հետ: Յերբ նրանց տվեցին մահ-
ճակալներ, նրանք սկսեցին տեղավորվել ըստ ծանո-
թության, իրար կողքի, միենույն ննջասենցակում:
Իհարկե նրանց մեջ կային նաև հին ընկերներ, վաղե-
ի ծանոթներ կամ միենույն վայրերից և գործարա-
սից յեկածներ, բայց այդպիսիները քիչ եյին:

Յես սկսեցի փնտրել: Յես փնտրում եյի մեր կո-
ժիկ ուսանողին, իմ սպիտակագեղստ աղջկան, ծիրուկ
պահակին, ոճածկներին, բայց չկար նրանցից և վոչ
մեկը: Ըստ լերեւութին, չկար վոչ մի համապատաս-
խան մարդ՝ նրանց թափուր տեղերը լրացնող: Դե-
ւավ, բնչ կա վոր, լերեկ նրանք կզան ավտոնի յերկ-
որդը գարձին կամ ավելի ուշ: Բայց այդ դեպքում
մվքեր են սրանք, այս կոմիերիտականները, այս բան-

վորհերը, այս մանածագործուհիները... Նախկին հանգըստողներից վերոնց են արդյոք համապատասխանում սրանք: Ըստ յերեսութիւն և վոչ մեկին...

Ավտոն նորից յեկավ և նորից բերեց մի բեռ՝ հար և նման իր առաջին բերին: Նորից ուրախ մարդիկ, նորից կյանքով լի, նորից կարու՛ անտառի և բնության: Յես նալում ելի նրանց և նրանց մեջ առայժմ ինձ համար չկար վոչ մի կոնկրետ անձնավորություն, չկար վորեւ մարդ՝ հականե-հանվանե: Նրանք դեռ կերպարանքներ ելին, ընդհանուր կերպարանքներ՝ կոմյերիտականի, բանվորի, գեղջկուեւ, մարմարզների կամ ընթերցողների և կամ ուտողների: Սակայն վորքան ել ընդհանուր կերպարանքներ լինելին նրանք, այնուամենայնիվ նրանց մեջ յես կը նկատեյի մեր գերասանի նման մեկին՝ յեթե նա գտնվեր, կնկատեյի հասակավոր այն կնոջը, վոր մի որ անշարժ նստած նստարանի վրա, նալում եր բնությանը: Կնկատելի նրանց:

Բայց նրանք չկային:

Վոչ, նրանք չկային նույնիսկ այն ժամանակ, յերբ ավտոն դատարկվեց յերրորդ անգամ և գնաց իրեն հատկացված տեղը՝ հանդստանալու:

Ախ, յես ինչու յեմ ափսոսում նրանց, ովքեր փոխվեցին: Միթե վատ են սրանք, միթե նույնպիսի ընկերներ չեն սրանք: Ինչու յեմ ափսոսում անդարձ մեկնողներին...

Յեվ իմ ականջներում չարունակ հնչում եր, — յեկեք ամսի մեկին և վերադարձեք 30-ին...

Գանք ամսի մեկին... Այդ, իհարկե, շատ լավ կը-

լինի, անծանոթ իմաստասեր: Իսկ յեթե մենք յեկել ենք ամսն 15-ին... Այն դեպքում, ի՞նչ մենք պարտավոր ենք մեր համակրանքով շարունակ մնալ նրանց հետ, ովքեր փոխվեցին... Վոչ, անծանոթ իմաստասեր, դու խոսել ես միայն նրանց լեզվով, ովքեր գալիս են սկզբից: Իսկ ովքեր կեսից են գալիս, դու նրանց բոլորովին նկատի չես առել: Դու պարզ ասում ես. — յեկեք սկզբում և վերադարձեք վերջում: Իսկ մեզ համար դու վոչ մի որենք չես սահմանել: Մեր մասին վոչ մի բացարություն չես տվել...

Բայց վոչ... Յես գիտեմ, ով անծանոթ իմաստասեր, վոր այդպիսի մտքեր դու չելիր ունենա, այդպիսի խոսքեր գու չելիր գրի, յեթե ինքը անձամբ յեկած չլինեյիր ամսի 15-ին: Դու յել ես կեսից յեկել, սիրելի ընկեր, դու յել ես մտածել ու փիլիսոփայել, դու յել ես փնտրել լուծում ու վճիռ, և հետո, ձեռնաթափ, անհույս ու թախծուտ, հայտարարել ես, վոր միակ լուծումն ե՝ գալ ամսի մեկին ու վերադառնալ 30-ին...

Յեվ ահա այստեղ եր, վոր յես անսպասելի կերպով մտածել սկսեցի իմ յերբեմնի տաքզմության մասին...

Իսկապես, յես առաջին անգամ իմ վողջ կյանքի ընթացքում տեսնում ելի, թե վորքան դժվար ե անցումը, փոփոխվելը: Ի՞նչ տեսնել — զգում ելի, ապրում ելի այդ դժվարությունը: Հիշում ելի, թե ինչպես անցլալում յես մեղադրում ելի ուրիշ շատ շատերին, վոր նրանք չեն վերածնվում այնպիսի արագությամբ, ինչպես յերեխայական թղթե գորտն ե վերածվում

ծտիր! Յես չեյի ճանաչում մարդկային հոգին: Յես, յես, վոր այժմ այսքան հիվանդագին, այսքան դժվարությամբ եմ մի կոմիցերիտականից անցնում մյուսին, մի մարդկային խմբից անցնում հար և նման մի այլ խմբի, յես մեղադրում եյի ուրիշ շատերին, վոր նրանք պարով ու թմրուկով չեն վերածնվում...

Իսկ այժմ, յես սովորում եյի չճրահանգել հոգուն, այլ հարգանքով խոնարհվել նրա անցումի ծանր և արյունոտ վայրկյանի առաջ...

11

Յես պատահաբար գլխի ընկա այսոր, վոր իզուր եմ փնտում յեկվորների մեջ ոձաձկներին, մանդուլին նվագողին և բոլոր մյուսներին: Զգացի պատահաբար, վոր այն, ինչ յեղել ե յերկու շաբաթ առաջ, կարող ե և չկրկնվել յերկու շաբաթ հետո: Ավելին.— Ճի կարող կրկնվել յերկու շաբաթ հետո...

Յես մտածում եմ ոձաձկների մասին: Իզուր եմ մտածում: Յեկվորների մեջ չկա վոչ մի ոձաձուկ... Յեթե վերադառնան նույնիսկ այն յերեք ընկերունիները, այժմ նրանք այլս ոձաձուկ չեն լինի, վորովհետեւ ուրիշ են այս յեկվորները և ուրիշ են նրանցից յուրաքանչյուրի տեղերը:

Ուրեմն իմ տեղս ել պիտի փոխվի... Ալգպես ե յերեում: Իհարկե, յես դարձյալ չեմ դառնա կոմիկ կամ տրագիկ, սիրահար կամ փիլիսոփա, չեմ դառնա տիպ, բայց կդառնամ բոլորովին ալլ բան, քան հիմա լեմ...

Պիտի փոխվեմ յես՝ ուզեմ, թե չուզեմ... Ուրեմն ավելի լավ չեմ, վոր փոխվեմ իմ կամքով, վորպեսզի այն տեղը, վոր պիտի հասնի ինձ, ընտրված լինի վոչ միայն նրանց ցանկությամբ, ալլեւ իմ...

Յեվ յես մըցահրավեր նետեցի պատի վրա իր խոր փիլիսոփայությունը թողած անծանոթ իմաստաներին: Դու ասում ես՝ պետք ե գալ ամսի մեկին և վերադառնալ 30-ին: Իսկ յես կապացուցեմ, վոր կարեւմ ի յե գալ 15-ին և գնալ մյուս 15-ին... Կտեսնես, վոր կապացուցեմ: Կարեորն այն ե, վոր յես մոռանամ, թե ինչպես խավարում աղոտ առկայծում եյին նավթի լանջերը, վորոնք գնում եյին դեպի գահին, վոր յերեկոյան, անտառի խավարից, վոր յես մոռանամ պարող բանվորին, վորը հենց այնպես պարելով ել հասավ կալարան, վոր յես մոռանամ, թե ինչպես մի կին, ամեն որ իրիկնադեմին հանդիպում եր ինձ և ներքուստ ցանկանում,—վոչ,—ներքուստ պահանջում, վոր մենք գնանք անտառ և յես համբուրեմ ու գգվեմ իրեն...

Իսկ այնուհետև, յերբ յես մոռանամ ալդ ամենը, կտեսնեմ, վոր կան կյանքում և ուրիշ գեմքեր և ուրիշ գեպքեր՝ նույնքան սիրելի... Յես կընտելանամ ըրպանց հետ այնպես, ինչպես մի որ ընտելացա նըրպանց հետ...

Իմ մտքերիս թելն ընդհատվեց: Բայց ինձ խանչ գարողը մի ալլ միտք չեր, այլ իմ խաղընկերս, վորի գետակն ահա յերկու որ ե, վոր յես շարունակ շախմատ եմ խաղում:

— Եեկ խաղանք մի քիչ:

Եես ակումբ գնացի և մենք նստեցինք խաղասեղանի մոտ: Խսկույն մեր շուրջը հավաքվեցին տղաներ և աղջիկներ, վորպեսզի հետևեն խաղի ընթացքին:

— Դե, ի՞նչ, շարենք այսպես խաղի մեր քարերը...

Մի յերեսնամյա գեղեցիկ կին ամենից շատ ե հետաքրքրվում խաղով: Յերբ ել վոր խաղանք, — մենք թե ուրիշները, — նա կդա, կնստի և կսկսի դիտել: Նա չի խանգարի մյուսների նման, տեղի անտեղի ցուցմունքներ չի անի: Սակայն նրա աչքերը, բառերից ավելի պերճախոս, արտահայտում են մերթ քաջալերանք, մերթ դժոխություն:

Ահա մեզ մոտեցավ մի նիհար յերիտասարդ՝ չափազանց լուրջ դեմքով: Նա լրջություն չի ձևացնում և իրոք այդպես ե նրա դեմքը բնականից: Սակայն չըկա հանգստացողների մեջ ավելի զվարճակի արարած, քան այդ յերիտասարդը: Հենց գալու որվանից, նա մտավ յերեխակի դերի մեջ և այդպես ել մնաց: Հենց առաջին որը գտավ տակառի մի ժանգոտ ողակ և սկսեց զլորել: Գլորում եր լուրջ՝ դեմքով, մտախոհ, ինքնամփոփի: Խսկ յերբ գալիս եր ճաշելու, նա ողակը թելով կապում եր վորևե ծառից, վորպեսզի չփախչի ձիռ պես: Խսկ հետո, ավելի հանգիստ լինելու համար, ճաշելիս նա մերթ՝ մերթ մոտենում եր լուսամուտին և նայում ներքեւ, թե տեղն ե արդյոք ձին: Մենք ծիծաղում եր լուրջ յերեցարան կ անդադար կարդում: Մարդում եր ընթերցարան կ անդադար կացած ինքը կանց հետ խոսում եր շատ սակավ և յերբեք ինքը չեր լինում սկսողը: Յերբ յես հետաքրքրվեցի, թե ով չեր լինում սկսողը: Յերբ յես հետաքրքրվեցի, թե ով չեր լինում յեկավ, վոր նա Քիզիկումաթեմատիկան ինստիտուտի ասպիրանտ ե:

Եես խաղը տարվեցի ու վեր կացա: Յերեսնամյա գեղեցիկ կնոջ աչքերն ուղղակի հանդիմանում ելին ինձ: Յես հարց տվեցի նրան:

— Միթե հնարավոր եր այլ կերպ...

— Դուք շատ անփույթ խաղացիք, — ասաց նա՝ հոգնակի գիմելով ինձ,

— Դուք այդպիս եք կարծում, — պատասխանեցի:
յես՝ նույնպես հոգնակի:

— Թեև յես շախմատիստ չեմ, բայց ինձ այդպես և
թվում, — կը կնեց նա: — Դուք խաղացիք ուղղակի սի-
րահարվածի պես...

Մենք ծիծառեցինք և յես վերցրի նրա թեր.

— Թույլ կտմք ձեզ ուղեկցել անտառ:

— Այդպես հանկարծակի՞: Իսկ յեթե յես անտառ
չեմ գննեմ...

Յես շփոթվեցի: Նրա աչքերն ուղղակի ամաչեց-
նում. Եին ինձ:

— Դնանք, — ծիծառեց նա ինձ վրա, — յես անտառ
եմ գնում:

— Դուք տիկին եք, — հարցրի յես նրան՝ ճանա-
պարհին:

— Այսինքն ինչ եք հասկանում տիկին ասելով:
Յեթե հասկանում եք մի կինարմատ, վորն ամուսին
ունի, յես այդպես չեմ:

Ինձ զվարճացրեց խոսակցության այդ տոնը և յես
յերես առա.

— Իսկ ուրիշ իմաստնի...

Նա լրջացավ: Յես վախեցա: Բայց նա մտածեց և
պատասխանեց.

— Յես ամուսնացած եյի: Իմ ամուսինը, ինչպես
ասվում է, միանգամայն նոր աշխարհի մարդ եր, ա-
կայն մի բացառությամբ: Նա խանդոտ եր: Զեր կա-
րող տանել վոր յես աշխատեյի և իմ աշխատավայ-
րում հանդիպելի ուրիշ մարդկանց հետ: Ուղղակի
տանջվում եր: Փորձում եր մտածել այլ կերպ, գի-

տակցում եր, վոր հիմարություն և արածը, բայց վո-
չինչ չեր ոգնում: Նկատի ունեցեք, յերկտասարդ,
այս կենցաղային մանրամասնությունը, կյանքում
ձեզ պետք կդա:

— Իսկ հետո, — հարցրի յես՝ նրա պատմությունից
հետաքրքրված:

— Հետո այն, վոր յես նրան ապահարզան առա-
ջարկեցի: Նա համաձայնեց: Յեզ յերբ արդեն զգաց,
վոր յես այլևս իր կինը չեմ, մոռացավ խանդելը: Ի-
հարկե, մենք նորից հանդիպում եյինք միմյանց,
զբունում, կինո կամ թատրոն գնում, հաճախ միա-
սին գիշերում, բայց այժմ նա չեր խանդում ինձ,
վորովհետև յես նրա կինը չեյի, յես աղատ մարդ ելի,
ինչպես ինքը: Տարորինակ են լինում յերբեմն մար-
դիկ, յերիտասարդ: Յեզ յես այս բոլորը ձեզ ասում
եմ միայն նրա համար, վոր տեսնեք, թե վորքան հի-
մար բան և խանդը...

— Շարունակեցեք, — հետաքրքրվեցի յես, — իսկ ինչ
յեղակ հետո:

— Յեզ ինչ, — ծիծառեց նա. — շարունակությունն
ալիս ձեզ չի կարելի լսել...

Յեթե նա ասեր՝ ձեզ չի կարելի լսել, վորովհետև
գուք փոքրիկ եք, յես չեյի զարմանա: Ընդամենը
չորս տարով եր ինձանից մեծ այդ կինը, բայց յես
ինձ յերեխա եյի զգում նրա մոտ: Յեզ վորքան
կըթված ու վորքան փորձված եր յերեսում:

Հանկարծ հիշեցի, վոր այնտեղ, հանգստի տանը,
յես գործ ունեմ:

— Ներեցեք, — ասացի շտապ-շտապ, — յես զործ ու անմ այնտեղ: Մոռացել եյի...»

Յեվ վորպեսզի շատ անքաղաքավարի չթվամ, ա-վելացրի.

— Յերեկոյան գարձալ միասին կդանք անտառ, յեթե այդ դժվար չի ձեզ: Յես շատ եմ ցանկանում հանդիպել ձեզ հետ...

Յեվ արագ գնացի, համարյա վազ տվեցի: Այդ ինչպես կարող եցի մոռանալ, վոր այնտեղ ինձ ըս-պասում են մի քանի տասնյակ մարդիկ...

Յերբ հասա շենքի մոտ, նրանք արդեն հավաքվել ելին ալդում, պայմանավորված տեղում: Նրանք այն հանգստացողներն ելին, վորոնք ցանկություն ելին հայտնել զրուցներ ունենալ գիտական նյութերի շուրջը: Յես մոտեցա նրանց և դեռ տեղ չհասած, ըսկ-սեցի խոսել.

— Ուրեմն, ընկերներ, գալով փշատերե ծառերին, պետք ե ասել վոր զրանց սաղարթների բուլըն ա-մենից առողջարարն ե թոքերի համար: Ահա այս ե պատճառը, վոր այս հանգստի տան նախկին հարուստ տերը յեղենիներ ե տնկել այստեղ: Ինչպես զիտեք, լոռում սովորաբար յեղենիներ չկան: Սակայն հին ժամանակներում, ինչպես յերեսում ե, այս անտառնե-րում բավական քանակությամբ յեղել են նաև այդ ծառերից: Որինակ, մի քանի հին դամբարանների վրա քանդակված են յեղենու կոկոններ... Հանգստի տան ավտոն գնացել ե քաղաք՝ մթերք բերելու: Յերբ նա վերադառնա, կմնդրենք վարիչին, վոր նա ավ-տոն տրամադրի մեզ՝ եկակուրսիայի գնալու դեպի

այդ գամբարանները և այլ հսությունները, իսկ թ-դիլ եք գուշ արդյոք պղնձի հանքերում...

— Վոչ, վոչ, չենք յեղել, — լսվեցին ձայներ:

— Ուրեմն կզնանք նաև հանքերը: Ահա տեսնում եմ, վոր ձեր մեջ նստած են մի քանի հանքափորեր: Խնդրենք նրանց, վոր հետևյալ զրուցին նրանք պատ-մեն մեզ իրենց աշխատանքի մասին: Հարկավոր է նախապատրաստված գնալ տուն...

12

Յերեք կոմյերիտականներ կազմակերպեցին դառնալ զուռնա: Զուռնաները բերեցին հարեան գյու-ղից, իսկ դառնա՝ վոչ մի կերպ գտնել չկարողացան: Հարցը լուծվեց նրանով, վոր վարիչը տրամադրեց մի գուցը:

Յեվ ահա, նվազախումբն սկսեց նվագել: Դուրս յեկավ սպասածից ավելի հաջող: Բոլորն ուրախացան, վողեռվեցին և վորոշեցին հարսանիք կատարել: Մի յերիտասարդ հագավ աղջկա շորեր, մյուսը դարձավ փեսա և սկսվեց պսակը: Զուռնալի ձայնը լսելով, գյուղից նույնպես մարդիկ յեկան: Հետո կոմյերիտա-կանները վորոշեցին կնունք ևս կատարել բայց ար-դեն մութն եր: Ստիպված՝ հարսանիքը վերջացրին և հենց այդպես նվագելով, մտան դահլիճ, ուր յերե-կութ պիտի տեղի ունենար:

Յես պիտի արտասանելի այդ յերեկույթում: Յերբ բարձրացա բեմ, հանկարծ աչքովս ընկավ յերեսնամ-բա տիկինը, վոր նստել եր վերջին աթոռներից մեզի

Վրա և ինձ եր նայում: Յես շփոթվեցի, բայց հետո
 արտասանեցի բավական հաջող և ստացած ծափահա-
 րություններ, թեև վոչ այնքան շատ:
 Իջնելով դահլիճ, յես մոտեցա տիկնոջը,
 —իսկ յերգել չգիտեք, —հարցրեց նա:
 —Գիտեմ: Յես նույն հաջողությամբ կարող եմ
 յերգել: Ուզմում եք...
 —Վոչ, վոչ, խնդրում եմ, —անհանգստացավ նա:
 Հանկարծ էիծեցի, վոր յես ժամադրվել եյի նրա
 հետ:
 —Զգնանք անտառ, —հարցրի նրան,
 —Յես ձեզ եյի սպասում: Դուք ինչ վոր ցանկա-
 նում ելիք ինձ հետ հանդիպել:
 —Այո, յես ալդպես ասացի: Գնանք,
 Ճանապարհին, յերբ խոսակցության ուրիշ նյութ
 չկար, յես հարցրի նրան.
 —Ճիշտն ասած, ինձ հետաքրքրում ե ձեր պատ-
 մությունը: Իսկ թնչ լեզավ հետո:
 Նա ժպտաց, թեը հանեց իմ թեփ միջից և խոսեց.
 —Ամուսինս ամուսնացավ: Դրանից հետո նա
 այլևս ժամանակ և հնարավորություն չունեցավ ինձ
 հետ հաճախ հանդիպելու: Բայց այսպես թե այնպես,
 մենք դարձյալ հանդիպում եյինք, շրջում միասին,
 գիշերում... Նա շատ եր սիրում մեր աղջկան:
 —Զեր աղջկան:
 —Այո, իմ և իր: Նա ծնվել եր մեր ամուսնացած
 շրջանում: Այժմ նա չորս տարեկան ե:
 —Իսկ վհրտեղ ե հիմա:
 —Ամուսնուս մոտ: Խնդրեցի նրա կնոջը, վոր պա-

հի նրան, մինչև յես վերադառնամ հանգստի տնից՝
 Նա ուրախությամբ հանձն առավ պահել, վորովհետև
 առանց այդ՝ իր կյանքն անցնում ե բավական ձանձ-
 րալի: Ամուսինս, վոր նախկին խանդուն ե, չի թող-
 նում նրան վոչ աշխատանքի գնալ և վոչ ել յերկար
 ժամանակով տնից բացակայել: Ինչ տարորինակ տի-
 պեր կան կյանքում, այնպես չե, յերիտասարդ...

Յես նայեցի նրան: Մինչդեռ քիչ առաջ նրա գեմ-
 քը վայրում եր չմարած սիրո հիշողությունից, այժմ
 նրա աշխերում խաղում եր արհամարհանքը: Յեվ այդ
 յերկու զգացումների միաժամանակ, մի մարդու նկատ-
 մամբ...

—Այո, —պատասխանեցի յես վճռականորեն, —տա-
 րորինակ մարդիկ շատ կան աշխարհում և նրանց մի-
 մասը զարմանալի լավ ե, իսկ մյուս մասը՝ զարմանա-
 լի վատ... Դուք, ինչ, աշխատում եք այժմ...

—Իսկ ինձ ով ե պահում, —ժպտաց նա: —Խեղան-
 գամ իո չեմ...

Յես ամաչեցի: Ինչ արի կին ե: Յես քիչ եմ
 տեսել ալդպիսի արի կին: Յուրաքանչյուր շարժու-
 մից, յուրաքանչյուր խոսքից զգում ես, վոր ինքն ե
 իր գլխի տերը և չունի իրեն հրամալող մեկը: Յեվ
 միթե, իրոք, մի ինչ վոր խանդ կարող եր կաշկան-
 դել նրա շարժումները... Յես նայում ելի և մտովին
 պատկերացնում նրան իրը և տանտիկին՝ իր ամուս-
 նու համար ճաշ յեփելիս... Վոչ, նա ծնված չեր խո-
 հանոցի համար!

Նա ձեռքը մեկնեց դեպի իմ ճակատը և սկսեց
 մաղերս խառնել: Սաղարթների միջից վար ընկած

ապաղերի լույսով աղոտ լեռնում եյին նրա գեղեցիկ գիմագծերը:

— Եսիր, լերիտասարդ, — դիմեց նա ինձ և նրա ձայնը մի քիչ խոռվաճույզ եր: — Դու ինձ դուք ես դալիս... Չեմ ասի, իհարկե, վոր բախտն ե մեզ իրար մոտ բերողը, վոր դու աշխարհի ամենալավ տղան ես, վոր...

Յես հանկարծակիի յեկատ նրա խոսքերի իմաստից ավելի՝ ինձ քաղցր բորբոքեց նրա դուռով խոսելը: Յես զբկեցի նրան, սեղմեցի. կրծքիս և մենք մոռացանք աշխարհը:

Յերբ մենք վերադարձանք, յերեկույթն արդեն վերջացել եր և բոլորը ցրվել: Եյին իրենց ննջասենակները:

— Բարի գիշեր — ասացի յես լերենամլա տիկնոջը և ձեռքը բռնեցի:

— Յես այսոր լերջանիկ եմ: Շնորհակալություն... Նա ժպտաց.

— Մենք վաղը նույնպես կարող ենք հանդիպել, վամլը...

Յես ցնցվեցի:

Այդ ինչպես եյի մոռացել, վոր վաղը յես պետք է արդեն վերադառնամ:

13

Նախաճաշի ժամանակ շատերը տխուր են: Այսքան եմ պատճառը... Յես չելի լենթադրում...:

— Իսկապես, — շարունակում ե համոզել ինձ մենք:

աեղանի մյուս ծայրից: — Կաց ևս մի քանի որք եղաւք ես գնում ալդքան շուտու: Կաց և լավ հանգստացիք:

— Յես պոանց այն ել լավ եմ հանգստացել, — Ժպտում եմ նրան: — Իսկ քաղաքում գործերս սպատամ են ինձ:

— Ափսոս, — ասում ե մի ուրիշը: — Կգնացինք միասին եքսկուրսիայի: Ավտոն արդեն վերադարձել ե: Նորից կդնալինք մորի քաղելու...:

Վարիչը մտնում ե ներս:

— Կաց, ելի, ինչ տարորինակ տղա լես, — ասում ե նա ինձ՝ ընկերական հանդիմանությամբ: — Այս մոտ որերս լես արդեն սպասում եմ դինամո-մեքենային: Մենք շատ յերազեցինք միասին, իսկ հիմա աչքովդ կտեսնեցիր...

Յես տատանվում եմ: Յերեսնամլա կինը, վոր ինձ մոտ ե նստած, նայում ե և ժպտում: Այսու սիրելի կին, իմ տատանման մեջ դու յել կաս, վարիչն ել նիհար յերիտասարդն ել՝ իր ժանգոտ ողակով կամ փայտե ձիով, դառւլզուռնաշիներն ել, հասակավոր այն զույգն ել, վորն այս լեռնալին արեկ տակ տաքացնում ե իր սիրո աշունը: Բոլորդ, բոլորդ, ում հետ ապրել եմ ընդամենը յերկու շաբաթ: Յես հիշում եմ հստակ, վոր գեռ վոչ մի անգամ չեմ տարել շախմատի իմ ընկերոջը: Դա խայտառակություն ե, բայց ժամանակ չունեմ: Ի դեպ, չմոռանամ վարիչին ասելու, վոր դռնակի մոտ, ալգու ցանկապատը պետք ե նորոգել: Իսկ տնտեսուհին...: Ամենից ավելի յես նրան պիտի կարոտեմ: Յեվ միայն հիմա յեմ գգում: Յե-

վորքան վաս ե, վոր յես քիչ անդամներ եմ առիթ
ունեցել հանդիպելու նրան և խոսելու...

Դրսում լսվեց ավտոյի ծանոթ հռնդոցը: Յես վեր
կացա:

—Դե, մնաք բարե, —բացականչեցի բոլորին:
Վողջ մնաք...

—Գնաս բարե, գնաս բարե, բարի ճանապարհ,
ձայն տվեցին չսրս կողմից: —Գնաս բարեվ...

—Վաս ե, վոր զնում ես, —ասաց մեկը, յերբ ձայ-
ները մի քիչ հանդարտվեցին: —լավ կլիներ, յեթե մեզ
հետ յեկած լինեյիր և մեզ հետ ել գնայիր...

Ինչպես... Ամսի մեկից մինչեւ 30-ը՝ Դարձյալ այդ
իմաստությունը...

—Վոչ, —ժպտացի յես, —կարելի յէ նաև 15-ից մին-
չեւ մյուս 15-ը: Ի՞նչ կա վոր...

Ցեվ արագ դուրս յելա, բայց նախքան ցած իջնե-
լը, հանեցի մատիտս և անծանոթ իմաստասերի խոս-
քերի տակ գրեցի իմը: —

«Կարելի յէ նաև զալ ամեն որ և գնալ ամեն որ»:
—Շատ ճիշտ ե:

Յետ շրջվեցի: Նա յեր, իմ յերեսնամյա ծանոթու-
թիւ:

—Ճիշտ ե: Իսկ դու չես ափսոսում, վոր մենք բա-
ժանվում ենք...

—Իհարկե դա լավ չե: Բայց մյուս բոլորը քեզ նը-
ման յերիտասարդներ են և նրանց մեջ անպայման
կլինի մեկը, վորն ինձ թևանցուկ կանի մինչեւ ան-
տառու Բարի ճանապարհ, սիրելի յերիտասարդ...

Յետ ավտո նստեցի: Շենքից դուրս յեկան բոլոր

հանգստացողներն ինձ ճանապարհ դնելու, ինչպես մի
որ յես եյի ճանապարհ դրել բոլոր հանգստացողնե-
րին:

—Ե՞ն, մնացեք բարով...

—Բարի ճանապարհ...

Ալլան հոնդաց, ցնցվեց, բարձրացավ փոշի և
հանգստի տունն ու հանգստացողները յետև մնացին:
Յետ խորապես ափսոսեցի, վոր բաժանվում եմ նրան-
ցից: Նրանք, այդ նորերը, իմ միջից արդեն չնշել
եյին նրանց, ովքեր գնացել եյին յերկու շաբաթ ա-
ռաջ: Յեվ յես զգում եյի, վոր ճիշտ գրեցի իմ իմաս-
տությունն այն հին իմաստության տակ:

Շենքն անհետացավ: Յետ ժպիտով դարձա գեպի
շոփերը և հարցը:

—Միայն ինձ համար ես լծել ավտոն...

—Վոչ, —բզավեց նա մեքենայի հռնդոցի միջից: —
յետ գնում եմ կայարանից հանգստի տուն տեղափո-
խելու մեր դինամո-մեքենան:

1 9 3 3

U T U F 3 E R E F U

Յեկ ահա յեկալ ժամանակը, Գոհարիկ, վոր յիս
պրեմ մեր սիրո մասին:

Ինչով յեկալ այդ ժամանակը, Ի՞նչը ցույց տվեց,
վոր արդեն յեկել ե այն,—իս չգիտեմ: Միայն զգում
եմ, վոր չգրել՝ այլևս անհնար ե:

Սակայն, Գոհարիկ, գու անշուշտ ինձ լավ կհառ-
կանաս, յեթե ասեմ, վոր միայն ներքին մղումը չե,
վոր ինձ ստիպում ե նստել և գրել: Վոչ, ի հարկե-
միայն ներքին մղումը չե: Ինձ գրելու յե հարկադը-
րում իմ քաղաքացիական պարտականությունը, յես
գիտակցում եմ, վոր յեթե անհայտության մեջ թող-
նեմ մեր պատմությունը և այն իմացվի պատահա-
կանորեն, մի ուրիշի կողմից, ապա յես արժանի կը-
լինեմ զատվելու քրեական որենոգրքի բոլոր կետերի
համաձայն: Դես ավելին, Գոհարիկ.—յիս ինձ կմեղա-

դրեմ նաև քաղաքական որենսպրքի մի քանի կետերով, փորոնց համարները, ափսոս, լավ չեմ հիշում։ Բայց յես թվաբանությունից միշտ թույլ եմ յեղեւ, — հիշում ես, Գոհարիկ։

Պատկերացրու մեր դատավորությունը, վոր կարող եր տեղի ունենալ։ Յերեակայիր հետևյալ մեղադրական յեզրակացությունը։ —

«Հանուն Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության։ Մեղադրական ակտ՝ ընդդեմ քաղաքացի Աղամիք։

Այստեղ, Գոհարիկ, անհրաժեշտ հմ գտնում բացատրել, թե ինչու չի հիշատակվում մեղադրյալի հայրանունն ու ազգանունը։ Բայց վոչ, կարիք չկա, Դու անշուշտ առանց ինձ եր դվիս կընկնես։ — ինչ հայրանուն կամ ազգանուն կարող եր ունենալ Աղամը…

«Քաղաքացի Աղամը մեղադրվում է իր համագործակից քաղաքացունի Յեվալի հետ միասին ապակա ժարդկությունից դիտավորյալ կերպով աշխարհի ըստեղծագործության պատմությունը թագցնելու մեջ։ Ի ինելով դեպքերի կենտրոնում, ինչպես նաև ունենալով գրական մեծ շնորհք, — վորին ապացույց կարող է լինել ժումանակի բոլոր քննադատների բացասական կարծիքը նրա մասին, — քաղաքացի Աղամը կարող էր և պարտավոր եր գրել, մանավանդ վոր նրա աշխատանք յենթակա յեր վարձատրության՝ հանրապետության մեջ զոյտություն ունեցող ընդհանուր կանոններով։ Հետևաբար և, մեղադրյալն անձնական վոչ մի ֆաստ չեր կը գրելուց և նույնիսկ ընդհակառակը բարեկարգ գործություն ունեցած է»։

Այս հանդամանքը գալիս ե ասելու, վոր հանցանքը կատարվել ե չարամտորդեն»։

Այստեղ, Գոհարիկ, յես նորից պետք ե ընդհատեմ և ասեմ, վոր այս մեղադրական յեզրակացությունը յես կլսեյի առանց բողոքի քրթմանցի, վորովհետեւ այստեղ ասված ամեն ինչը տեղին կլիներ»։

«Կոնկրետացնելով մեղադրականը, դատարանս հարկ ե համարում նշել, վոր քաղաքացի Աղամը մեղադրվում ե վոչ այնքան աշխարհի ստեղծագործության ընդհանուր պատմությունը թագցնելու մեջ, — այդ պատմությունն իր հիմնական գծերով հայտնի յերկորիկ։ — Վորքան վոր վերոհիշյալ ստեղծագործության ընթացքում իր և քաղաքացունի Յեվալի, — մեր նախամոր, — ներքին աշխարհի ըստեղծագործումը չարամտորեն թագցնելու մեջ։ Ի նընկատի ունենալով և ապացուցված համարելով քաղաքացունի Յեվալի մեղսակցությունը և այն, վոր նակարող եր մատնել չարագործին, բայց այդ չի արել, — նրան ևս, առնել կալանքի տակ»։

Յեվ դու, Գոհարիկ, ինչպես և յես, իրավունք չըպիտի ունենայիր տրտունջի ծպտուն անգամ հանելու»։

Բայց այդ բոլորը տեղի չի ունենա, Գոհարիկ։ Դրա փոխադրեն տեղի կունենա մի ուրիշ բան։ — պատմությունը կիմճճի»։

Յերեակալիր, թե ինչպես մի քանի հարյուր, գուցե և մի քանի հազար տարի հետո, կակալի պատմաբանների մեծ ու կատաղի բանակորիմն այն մասին, թե ների մեծ ու կատաղի բանակորիմն այն մասին, թե արգյուք իսկապես, գորություն ունեցել են Աղամն ու

Յեվան, թե վոչ։ Մեկը կվերցնի աստվածաշունչը և տող առ տող վերլուծելով կժխտի այդ հիմար պատմությունը, մյուսը սեղանի վրա կշպրտի իմ ու քողեղնած լուսանկարները և կապացուցի, յերրորդը զույգ ձեռքերով բռնած՝ թափ կտա Յեմելյան Յարուսլավսկու հակակրոնական հոդվածների ժողովածուն, շորբորդն իր բոլոր մատները թքոտելով, զայրացած կթերթի ալու վիպակը։

Յեվ, ով գիտե, Գոհարիկ, կլինի արդյոք մի սըրամիտը, վոր վեր կենա և հանգիստ ժպիտով վերջ դնի վեճին։

—Ի՞նչ կա վոր, —ասի նա, —գուցե առաջին Աղամի ու Յեվան գոյություն չեն ունեցել, իսկ յերկրորդներըն ունեցել են...

Պետք ե հավատալ ապագա մարդկանց ընդունակություններին, Գոհարիկ։ Այդպիսի մի մարդ անշուշտ կճարվի։

Պատմությունը չի խճճվի։

1

Յես հիշում եմ իմ ու Գոհարիկի սիրո յերազկոտ յերեկոները։ Սկսվում եր այն բանից, վոր իրիկնամուտի լույսն ու իրիկնամուտի խավարը խառնվում եյին իրար։ Մարդկանց աչքերը շաղվում եյին այդ խառնուրդից, վոր թեթև ամպի եր նման, —քաղաքի վրա իջած նոսր մասախուղի։ Մարդիկ անցնում եյին այդ կիսիրականության միջից՝ արագ քայլերով ու թերը թափահարելով, սպիտակ գոգնոցներում պարեն պահած և գոգնոցի փեշի ծայրն ափի մեջ հավա-

քած, յուղոտ, բայց իրիկնամուտի մեջ այլևս չփալող բանվորական հագուստներով, գրքերը կամ պորաֆելաները թեսերի տակ դրած, ամառային գաղջ յերեկոյի դեմ ոձիքների կոճակները քանդած և գնում եյին տուն։ Նրանց հանդիպում եյին արդեն զբոսանքի յելածները, թատրոն, կինո կամ այլուր գնացողները, վորոնք բռլորը քայլում եյին համր ու հանգիստ, վորովհետև մինչև իսկական յերեկոն՝ դեռ շամժամանակ կար։ Փողոցների լուսերն անդամ դեռ վառված չեյին։ —վոչ ելեկտրականը, վոչ նավթի լամպերը։

Յես նստած մեր փողոցում, դարբասի մոտ, տանից գուրս բերած աթոռի վրա, չնկատելով, վոր արդեն կիսախավար ե, գիրք եյի կարդում։ Անցորդները յերեկի զարմանում եյին, վորովհետև իրիկվա այդ ժամին անհնար եր ջոկել գրքի մանր տառերը։ Սակայն այդ անհնար եր միայն նոր կարդալիս, իսկ նա, ով սկսել եր կարդալ դեռ արև յեղած ժամանակ, կարող եր շարունակել մինչև աստղերի դուրս գալը։

Յես չեյի տեսնում անցուդարձ անող մարդկանց։ Յես միայն լսում եյի նրանց փափուկ, իրիկնային՝ հանդարտ վոտնաձայները մայթերի վրա և մեկ ել նկատում եյի նրանց հազիկ նշմարելի ստվերը՝ գրքի եջերով սահելիս։ Բայց հանկարծ, կարծես ինքնիրեն, «բուֆ» անելով, արագ փակվում եր հաստափոր գիրքը և ձեռքերիս միջից անհետանում։ Յես նայում եյի վերև, իմ առջեռում կանգնած եր լինում Գոհարիկը։

—Յեղմվ, —ասում եր նա, —խալարում կարդալով գիրքն ես փշացնում։

Վոչ! Ա՛, բոլորովին վոչ! Յերբեք: Նա ինձ չեր խը-
րատում երբեկ ավելի խելացի կամ ավագ: Իսկ յերբ
յեռ ինքս ելի գնում նրանց տուն և նրան հանդի-
ողում եյի նույն կերպ և ափսոսում խավարի մեջ վը-
շացող գիրքը, յես ևս չելի խրատում նրան իբրև ա-
վելի խելացի կամ ավագ: Յեզ այդ եր մեր սիրո ա-
ռաջին, ամենաքաղցր առավելությունը: Մենք ընկեր-
ներ ելինք:

Մենք ընկերներ եյինք՝ ամեն ինչում հավասար:
Տարիքով հավասար, հասակով հավասար, կրթությամբ
հավասար: Իսկ յերբ մի որ ակումբում ֆիզիկական
ուժի մրցումներ յեղան, դուրս յեկավ, վոր մենք այդ-
տեղ ել ելինք միմյանց հավասար:

Յեզ ահա այդ եր պատճառը, վոր նա ինձ համար
«քնքուշ յերեխա» չեր, «իմ հեղ աղջիկ» չեր, «անդին
մանկիկ» չեր: Յեզ նաև այդ եր պատճառը, վոր նա
ինձ համար «ո, տիկին» չեր, «դուք, ինձ շղթալող»
չեր, «իմ տիրուհի» չեր: Մենք հավասարնեք ելինք:

Հանդիմանությունից նեղված՝ յես վերցնում եյի
գիրքը նրա ձեռքից և մտնում բակ: Նա նույնպես,
մննում եր, և մենք լուր քայլում ելինք մինչև մեր
ընակարանի դուռը: Մտնելով տուն, մենք անմիջա-
պես մոռանում ելինք գիրքը և աշխուժանում: Գոհա-
րիկը մոռենում եր տատին, գլխաշալի ծալը յետ եր
պանում նրա ականջի վրացից և մի քիչ բարձրացրած
ձայնով խոսում:

— Բարե, տատ:

Պառավը ժամում եր և պատասխանելու փոխարեն
նքա մազերն եր շոյսում,

— Ելի յեկել եմ՝ թոռանդ տանեմ:

— Ճար, որենքն եղած եր, — զվարթ համաձայնվում
եր պառավը:

Յեզ մենք յերեքով ծիծաղում եյինք:

Իսկ յերբ յես հագնում եյի իմ բաճկոնը, Գոհարի-
կը կիսատ չեր թողնում իր խոսակցությունը պառա-
վի հետ և չեր շոտապում դեպի ինձ՝ բաճկոնը պահե-
լու: Յես չեմ հիշում մի դեպք, յերբ նա ինձ վորեւ
ծառալություն մատուցած լիներ: Նաև չեմ հիշում,
վոր յես ինքս նրան մատուցած լինեյի նման ծառա-
լություն: Մենք միմյանց ոգնության կարիք չելինք
զգում և հազիկ թե աշխարհի վորեւ տղամարդ իրոք
կարիք ունենա, վոր կինը հանի իր կողիկները, կամ
վորեւ կին, վոր տմուսինը հագցնի նրա վերաբերուն:

Յես, արգեն պատրաստ, կանգնում եյի սենյակի
դռան մոտ, իսկ Գոհարիկը պառավի հետ խոսակցու-
թյամբ տարգած, կարծես չեր ել նկատում ինձ: Յերբ
վերջապես մի քանի րոպե հետո մենք դուրս ելինք
յելնում, վոչ յես եյի ներողություն խնդրում նրան
սպասեցրած լինելու համար, վոչ նա ինձանից՝ նույն
բանի համար: Յեզ մենք, մեծագույն սիրով լցված
իրար հանդեպ, թեանցուկ ելինք անում՝ միմյանց
ավելի մոտ լինելու համար և թեքում դեպի կալա-
րան տանող յերկար փողոցներից մեկը:

2

Մենք սիրում ելինք մեր քաղաքը: Որվա հոգաե-
րավ աարգած, մենք ցերեկները չելինք նկատում
նրան, բայց յերեկոյան մեր զրոսանքի ընթացքում

81

նա մեղ հետ եր, մեր շուրջը և մեր մեջ: Գնալով գեպի կայարան, մենք լուս և ի ինքնամփոփ նայում ենք իրինային աղջամուղջի՝ մեջ իր մանրամասնությունները կորցրած յերկար փողոցին: Միհարկանի աների տափակ կտուրներով յերկու շաբքերն ուղիղ գնում ենք դեպի կայարան՝ ճանապարհին մի քանի անգամ յելով և իջնելով խաչկարուկ պառկած բլուրների վրա: Բարձրանալով և իջնելով փողոցների հերթական յելեջը, մենք գիտեյինք, մենք զգում ենք, թե ինչպես նույն ըոպեյին մեր աջ ու ձախ կողմերում նույն յելեջն ենին կատարում նաև զուգահեռ մյուս փողոցները: Յեկ իրոք.—յերբ իջնում ենք փողոցի ամենացածր մասը, մեր առջև կանգնում եր քարե մի վոչ մեծ, կամարակապ կամուրջ, վորի տակով անցնում եր քաղաքի առվակներից մեջը: Նայելով աջ ու ձախ, մենք տեսնում ենք նըման կամուրջներ նաև մյուս փողոցների վրա: Ի գեպ՝ վոչ վերելքները, վոչ վայրեջները, վոչ կամուրջները, վոչ առվակները, բոլորովին ել մեծ չեին: Զարմանալի ներդաշնակությամբ նրանք համապատասխանում ելին միհարկանի քաղաքի սեաքար ընակարաններին, կարծես ծնվել ելին դրանց հետ միաժամանակ: Մենք քայլում ենք լուս և ուշադիր, խկ մեր յերկու կողմում, կիսախափարից դուրս լողացող բնակարանները հետզետե ձեւք եյին բերում իրենց կորցրած մանրամասնությունները: Հավասարվելով մեղ, նրանք կանգնում ենին միանգամբան անվթար՝ պարզ գծապերով իրենց սեաքար պատերի լուրաքանչչուր կարմրաքար դարդաքանդակը, սե քարերի բու

րանքները յերիզող սպիտակ գծերը, նույնիսկ տանտիրոջ անունը՝ փոլագրված դարբասի ճակատի կարմիր քարի վրա: Լուսամուտափեղերը բաց ելին զեպի ներս, լուսամուտափակների յետեից յերեւմ եր սենյակի տեսարանը՝ տամնինդ կտոր յելած: Ինչպես փողոցում, այնպես ել բնակարաններում, ոեւ լույսերը վառված չելին:

Ցուրաքանչյուր լուսամուտից բուրում եր գուրս նայող վորեե ծաղիկ, վորեե աղջիկ, վորեե մեխակ, նարգիզ, բաղեղնարույս, կին: Սենյակների լիակատար խավարից յերկաթավանդակների յետեից, յերեւմ եյին աղջամուղջի ընդհանուր զարշով ծածկված կարմիր բաժակաթերթեր, սե աչքեր, սպիտակ՝ պսակաթերթեր, կարմիր շրթունքներ, կանաչ տերեններ, սե հյուսեր, վորոնք բոլորը կարծես սպասում ելին, թե ահա, փողոցում ինչպոյ բան կպատահի, բայց չեր պատահում: Վոչ, անհանգստություն կամ տագնապ չկարայի սպասման մեջ և խաղաղ ելին բոլոր հալացքներն ու շնչառությունները:

Յերբ մենք հասնում ելինք փողոցի անկյուններին, ապա կանգ ելինք առնում և նայում: Սովորաբար անկյունն ունենում եր մի խանութ, յերբեմն յերկու կամ յերեք, պատահում եյին նաև ավելի շատերը՝ շարքով ձգված: Խանութներում արգեն վառվում եյին զաղի լամպերը կամ ելեկարական լույսերը և տիրում եր զվարթ ճոխություն ու բազմամարդություն: Դրա հակառակ, վոչ անկյուններում, այլ բնակարանների շարքերի մեջ, հանգիպում ելին մի ցուցափեղկավոր միախակ կըպակներ՝ նավթի փոքրիկ

շամպով ազոս լուսավորված։ Դրանք կամ կոչկակտրի արհեստանոց եյին, կամ լավաշի փուռ, կամ մանրութիւնառանոց՝ մասնավոր մարդկանց պատկանող։ Դրանց աերերին չենք միշտ տեսնում եյինք շտապելիս, կըպակը հավաքուելու և փակելու գործի վրա, մինչդեռ փողոցի անկլունների խանութները բաց եյին մինչև կես գիշեր՝ իրենց ներսից հորդող ուժեղ լույսի տակ առնելով մալթի, սալահատակի և դիմացի պատի մի կամ միքանի լայն շերտ՝ նայած ցուցակեղերի քանակութիւն։

Փողոցի անկլուններում կանգ առնելով, մենք նայում եյինք դեպի խաչաձեռղ փողոցի խորքը, Յեթե մենք բոլորի ցածրումն եյինք, ապա խաչաձեռղ փողոցը ձգվում եր ձորի նման։ — ափերի վրա տներ, իսկ մեջտեղում՝ առվակը, իսկ յեթե բոլորի բարձրումն եյինք, ապա խաչաձեռղ փողոցը ձգվում եր ինչպես հարթ դաշտի վրա, և իրոք, իր յերկու ծայրերով հանդչում եր արձակ դաշտում, — ուղղակի արտերի մեջ։

Ամբողջ ճանապարհին մենք վոչինչ չեյինք խոսում, — բոլորովին վոչինչ։ Մենք անշափ սիրում եյինք մեր քաղաքը՝ ինչպես վոր նա կար, և յերկուսս միմյանց հետ, միմյանց թեանցուկ, ավելի շուտ այդ քաղաքի հետ եյինք, քան թե իրար հետ։ Կարծես մենք յերկուսով միացել եյինք այդ յերլորդին սիրելու համար։

Մեր քաղաքում չկային վոչ զարհութելի խուզեր՝ կենդանի մեռելների համար, վոչ հրաշալի պալատներ՝ ճոխությամբ ու փարթամությամբ լցված։ Մեր քա-

զաքում համարլա բոլոր բնակարանները միանման եյին, ինչպես և միանման ելին դրանց բնակիչները։ Բնակարանները յերկու սենյակից, մի ժիջանցքից և մի բակից բաղկացած տներ ելին, մարդիկ՝ իրենց արդար քրտինքով ապրող արհեստավորներ, իսկ հետագա բանվորներ, ծառալողներ։ Ինձ և Գոհարիկին պատմում եյին, — իմ տասու եր պատմում, ուրիշներն եյին պատմում, — վոր յեղած մի քանի մի քիչ ավելի լավ տներում, իրենց գավառական խեղճ ճոխությամբ, ապրելիս են յեղել տեղական հարուստները, իսկ մի քանի, մի քիչ ավելի վատ տներում՝ տեղական մուրացիկները։ Իսկ մեծամասնությունն ապրել ե կիսուքաղց թե կիսակուշտ, — լավ չեմ հիշում, թե ինչպես եյին ասում պատմողները, — բայց մի կերպ ծալրը ծալրին հասցնելով։

Այդ պատահել եր վոչ շատ վաղ, — ընդամենը մի քանի տարի առաջ, բայց վոչ էես, վոչ Գոհարիկը, այդ չեյինք հիշում։ Հիշում եյինք միայն մի անորոշ չշուշ, վորից բան հասկանալ չեր լինում։

Իսկ այժմ, քաղաքում ապրում եյինք յես ու Գոհարիկը։ Ուր ել նախեցինք, վոր լուսամուտից ել ներս, վոր փողոցով ել առաջ, բոլոր մարդիկ նման եյին ինձ ու Գոհարիկին, — նույնիսկ հասակավորները և ծերուսները։ Վոչ, իհարկե արտաքին նմանության մասին չի խոսքը, այլ մի ուրիշ բանի, վոր բղխում ե ներսից և թառում ժպիտի մեջ, աշքերի, խոսքերի շարժուձերի... Յես հաղիկ չեյի դիմում բոլոր աղջիկներին Գոհարիկ անունով։

Յեկ քաղաքն իր միհարկանի տափակ կտուրավոր

բազմաթիվ բնակարաններով, երքն եր այդ բոլոր մարդկանցով։ Բնակարանները, —և դա շատ զարմանալի յեր, —բոլորովին ել նեղ չեյին գալիս նոր, առվելի լավ կյանքի համար, վոր վիճակված եր նրանց։ Կարելի յեր նույնիսկ յենթագրել, թե այդ բոլոր բնակարանները, շատ տարիներ առաջ, կառուցված եին չեղել հենց այդպիսի լավ կյանքի համար։

Այս, կարելի յեր այդպիս յենթագրել և դա շատ ձիւտ եր։ Բնակարանները կառուցվել ելին լավ կյանքի հաշվով, բայց ավագ, լով կյանքը յերբեք չեր մըտել այնտեղ։

Մեղ ալդպես եյին պատմում և մենք իրավունք չունելինք չհավատալու, վորովհետեւ յուրաքանչյուր վոք պատմում եր իր մասին։

Իսկ այժմ, յերբ մենք անցնում ելինք մեր սիրած բաղաքով, նրա յուրաքանչյուր բնակարանը նման եր մի ծաղկամանի։ Վոչ միայն լուսամուտների գոգերից, այլև սենյակների խորքերից մեղ ժպառում եյին զըվարթ ծիծաղի բաժակաթերթերը, խաղաղ յերգերի պոակաթերթերը, ոո՞ն խոսակցությունների աճող տեսքները...»

8

Յերբ հասնում եյինք կայարան, կայարանի շենքը մեր դիմաց արդեն հուրիստում եր ելեկարական բազմաթիվ կրակների մեջ։ Մեր յետեռում, անհաշիվ մանը կետերով, պլալում եր քաղաքը։

Բայց պատահում եր, վոր մենք չելինք գնում ուղղակի կայարան, այլ թեքվում ելինք մեր այդ սովու-

բական փողոցը խաչաձեռղ փողոցներից մեկը և գընում։ Իսկ այդ փողոցները չունեյին վոչ խանութիւններու կրպակներ, վոչ՝ նույնիսկ ելեկտրական վորեն լապեր։ Մեր աչքի առաջ, դռներից, դարբասներից, դռւրս եյին գալիս բնակելչները, կինն աթոռը դնում եր շեմքի մոտ և ձեռքերով պահում, իսկ ամուսինը բարձրանում եր աթոռի վրա և նավթի պլալացող փոքրիկ լամպը, հաճախ նույնիսկ ճրագը, գնում մուտքի վերևում ամրացված ապակեպատ ֆոնարի մեջ և վերադառնում ներս։ Յեղ լամպերը, առկայծելով վողջ փողոցի յերկայնքով, լուսավորում ելին լոկ իրենք իրենց և գուցե նաև ֆոնարի յետերի, թիթեղլա պատը։ Ուրիշ լույսի աղբյուր, բացի այդ լամպերից, փողոցում չկար։ Բնակելչները լամպերը վառելուց գեռ մի ժամ առաջ դուրս գալով փողոց, փակում եյին իրենց բոլոր լուսամուտափեղկերը և մտնում ներս։ Մանելով ներս, փակում ելին նաև դարբասներն ու դռները։

Ահա այդ եր պատճառը, վոր յես ու Գոհարիկը մեր սիրո յերազկոտ յերեկոնիերին գառնում եյինք պլալացող լուսամուտների վորորդներ։ Գնալով մինչև այդ փողոցի համարյա ծայրը, հարկ յեղած դեպքում թեքվելով գեպի շարունակ նոր ու նոր փողոցներ, մենք աշխատում եյինք գտնել վորեն անփեղկ լուսամուտ, կամ այնպիսին, վորի տերը մոռացել կամ ավելորդ եր գտել փակել այս։ Դեռ հեռվից նկատելով պլալացող քառանկյունին, մենք արագ մոտենում եյինք, կանգնում դիմացի պատի տակ և նախում լուսամուտից ներս։

Յեկ մեր առջև բացվում եր մի զարմանալի կյանք՝
վորի մեջ վոչինչ չկար գաղտնի ու հանցավոր, բայց
վորն ընդունված եր կողմանակի մարդկանց աչքերից
թագցնել հազար ու մի միջոցներով:

Ո՛, ինչեր չեինք տեսնում մենք այդ լուսամուտ-
ներից...

Մենք տեսնում եինք ընտանիքներ, վոր նստել
եյին իրիկնաթեյի, ուր բոլորը թեյն ափսեների
մեջ լցրած, բռնել եյին հինգ մատների պատվանդա-
նի վրա և փոթացնում եյին: Ֆոթոցը չեր լսվում,
բայց մենք լսում եինք այն:

Մենք տեսնում եյինք հասակակիցների, վորոնք
սեղանների մոտ նստած, խոնարհել եյին գրքերի և
տետրակների վրա: Նրանց մեջ հաճախ մենք ճանա-
չում եյինք մեր դասընկերներին:

Մենք տեսնում եյինք տատերի ու պապերի, վոր
պատմություններ եյին անում ուշադիր լսող իրենց
թոռներին, տեսնում եյինք նաև թոռների, վորոնք
պատմություններ եյին անում ավելի ուշադիր լսող
իրենց տատերին ու պապերին:

Մենք տեսնում եյինք կարի նստած կանանց, վո-
րոնք, չգիտես ինչու, նստած եյին լինում անգործ,
իսկ նրանց մեքենաները կանգնած եյին լինում ան-
շարժ: Մեր տեղը փոխելուց հետո եր միայն, վոր
հասկանում եյինք եյությունը.—կանաչք ունկնդրում
եյին այցելության յեկած իրենց ընկերունու խոսակ-
ցությանը:

Մենք տեսնում եյինք ծխախոտի սպիտակավուն
մառախուղ և այդ մառախուղի մեջ պղտորված ելեկ-

տրական լապտերի տարտամ պատկերը: Ապա տես-
նում եյինք մարդկանց, վոր նստած ու կանգնած, ժո-
ղով եյին անում: Յերբ բացվող ողանցքով հեռանում
եր ծխի մի մասը, բանից գուրս եր գալիս, վոր նը-
րանք նստած են խնձույքի:

Մենք տեսնում եյինք տղամարդկանց, վորոնք վո-
րեկով իրենց տեղական բեխերը, համբուրում եյին
իրենց կանանց լերեսը և հորանջում: Պատերի վրա
մենք տեսնում եյինք նկարներ, բայց թե ինչ նկար-
ներ՝ չեյինք կարող վորոշել:

Յեկ վերջապես, մենք տեսնում եյինք իրենց ան-
կողիններում հանգիստ քնած յերեխանների:

Մի յերեկո Գոհարիկը կասկած հայտնեց, վոր բո-
լոր պլալացող լուսամուտները բաց են լոկ այն պատ-
ճառով, վոր գաղտնի կամ հանցավոր վոշինչ չեն
թագցնում: Մենք սկսեցինք վիճել: Ապացուցելու
կամ ժխտելու համար՝ հարկավոր եր նայել փակ
փեղկերից այն կողմ: Դա թվում եր անհնար: Բայց
յերբ փորձեցինք, գուրս յեկավ, վոր ծալվող փեղկի
յուրաքանչյուր ճեղք, գուրս թուած վոստի յուրաքան-
չյուր անցք՝ մի մեծ դարբաս եր գեղի ներս:

Յերբ սկսեցինք նայել, առաջին խել յերեկոյան
պարզվեց, վոր այստեղ ևս, չկար վոչ մի զաղանի կամ
հանցավոր բան: Այն ժամանակ Գոհարիկն ասաց, վոր
ինքը չեր վնատրում գաղտնի կամ հանցավոր տեսա-
րաններ, այլ վախենում եր, թե զրանք գոյություն
ունեն, և այժմ ուրախ ե, վոր սխալիկ ե: Յես
նույնիսկ չլսեցի Գոհարիկին մինչև վերջ, վորովհետեւ
առանց նրա ասելուն ել, հասկանում եյի նրան:

Նրանք բոլորը պատկանում եյին մեզ.—թե պըլ-պլացող և թե փակ լուսամուտների լեռնում ապրող-ները։ Նրանք իմն եյին և Գոհարիկինը։ Մենք շրջում եյինք փողոցներով, տիրաբար նայում ներս, ստու-գում, թե ամեն ինչ կարգին ե, և ապա նոր գնում կայարան։

4

Հասնելով կայարան, մենք տեսնում եյինք կառ-քերի յերկար շարքը՝ կայարանի շենքի մոտ սպասե-լիս։ Կառապանները նստած եյին իրենց տեղերում բաց-կապույտ, հաստ համազգեստով կամ սև ժիլետի-տակ հագած կարմիր, լայն բլուզով, գլխներին դրած հատուկ կառապանի ցիլինդր։ Նրանց ձեռքում հանգ-չում եր մտրակը; իսկ աշու ու ձախ կողմերում խո-րանարդածե լապտերներն եյին պլազում մոմի լույ-սով։ Մենք իսկույն անցնում եյինք կայարանի կա-ռամատույցը և այստեղ գտնվող բոլոր միուսների հետ միասին սպասում եյինք յերեկոյան գնացքի ժամանելուն։

Իսկ այնուհետև, Այնուհետև, սկսվում եր մեր սի-րո յերազկոտ յերեկոների ամենազեղեցիկ մասը։

Սպասելով, վոր բոլոր քաղաք գնացողները գնան-և կայարանը հանդարտվի, մենք դուրս եյինք գալիս-գեպի կառքերի շարքն այն ժամանակ, յերբ այստեղ մնացած եյին լինում ընդամենը մի քանի կառք։ Մեր սովորական կառապանը, վոր անշուշտ սպասում եր մեզ, անմիջապես մտրակում եր ձիերին և առաջ գա-

լիս։ Յես ու Գոհարիկը նստում եյինք կառք, կառքը գնում եր։

Ինչքան յերկար եր գնում կառքը մինչև քաղաք, ա, ինչքան յերկար։ Յեվ ինչ համաշափ, ինչ միալար եյին պտտվում անիմսերը, վորոնց պտույտի շշուկը մենք լսում եյինք շարունակ։ Ինչպիսի՞ ներդաշնա-մենք լսում եյինք շարունակ։ Ինչպիսի՞ ներդաշնա-կությամբ եյին հնչում ձիու սմբակները սալաքարե-րի վրա։ Փայլուն փոքրիկ յերկաթներով, ու բարակ, նուրբ փոկերով ձիասարքն ինչպիսի՞ դուրեկան տակ-տով եր յելնում-ընկնում ձիերի մեջքերի վրա և տով եր յելնում-ընկնում ձիերի մեջքերի վրա և թեթև ձայն արձակում, —ցապ, ցապ, ցապ... ցապ, ցապ, ցապ... ցապ, ցապ... Մենք չեյինք նայում ձիերի վոտքերի շարժ-քերւն, բայց տեսնում եյինք նրանց լախն, կլոր գա-վելուն, բայց տեսնում եյինք նրանց լախն, կլոր գա-վակները, վորոնց մկանները կծկվում եյին ու բաց-վում, կծկվում ու բացվում։ Լապտերների լույսն ըն-կել եր նրանց գավակներին և կարծես նոր միախն, կել եր նրանց թափկել սալաքարերին։ Իսկ ձիերի շար-ժումներից այնպիսի զարմանալի ձայներ եյին դուրս գալիս, կարծեք ճոճուան նոր կոշիկներ եյին առաջ գալիս։ Յեվ մենք, —յես ու Գոհարիկը, —լուռ և շարժվում։ Յեվ մենք, —յես ու Գոհարիկը, —լուռ և շարժվում եյինք փողոցին։ Կառապանն անշուշտ ընկած, նայում եյինք փողոցին։ Կառապանն անշուշտ ընկած, նայում եր մեզ և վոչ մի անզգույշ շարժում կամ հասկանում եր մեզ և վոչ մի անզգույշ շարժում կամ ձայն չեր անում՝ մեր լուռ եքստազը խանգարող։ Յեվ ձայն չեր անում՝ մեր իմ ու Գոհարիկի քաղաքին, նա- յացում եյինք մենք իմ ու Գոհարիկի քաղաքին, նա- յացում եյինք մենք իմ ու Գոհարիկի քաղաքին, մութ ստվերնե-յում արդեն քնած բնակարանների մութ ստվերնե-յում արդեն պաջև վառվող նավթի լամպերին, ան-դին, դռների առջև վառվող նավթի լամպերին, կը յուններում հանդիպող լուսառատ խանութներին։ Այսուններում մենք շարժվում եյինք մեր տեղից և Անկյուններում մենք շարժվում եյինք մեր տեղից

նայում խաչաձեռղ փողոցն ի վեր՝ ուր լիակատաբ խավարի մեջ, կարմրավուն կետերով, հազիվ պլազում եյին դռների վերևում ամրացված մանրիկ կը ակները: Իսկ հետո, յերբ հասնում եցինք հետեյալ անկյունին, ուր լուսառատ խանութն եր իր պայծառ ցուցափեղ-կերով, մենք սկսում եցինք անչափ ուրախանալ այդ լուսի համար և նույնը ցանկանալ բոլոր մութ փողներին:

Հատկապես մեղ դուր եր գալիս ճանապարհի այն տեղը, ուր շրջապատի մթության մեջ, կողք-կողքի կանգնած եյին հինգ խանութներ՝ ութ ցուցափեղկե-րով: Բացի այդ, անկյան մյուս կողմում նրանք ունեյին ևս ամբողջ յերեք ցուցափեղկ: Այդ արդեն մի ամբողջ լուսագետ եր մեղ համար, վորով անցնուած եր մեր կառքը բավական ժամանակ: Ո՛, դեռ հեռվից, ինչպիսի՞ սիրով և անհամբերությամբ եցինք մենք սպասում մեր ճանապարհի այդ կետին... Իսկ այնու-հետեւ, մեր կառքը, մի քիչ ավելի արագացրած ընթաց-քով, իջնում եր փողոցի հերթական վայրեջքը: Ան-միջապես առվակի վրա, մեր ձախ կողմում, կախված եր գմբեթավոր սեաքար բաղանիքն իր ընդարձակ բակի մեջ, Նրա մի քանի մեծ ու փոքր գմբեթները լոկ աստղերի լույսով եցին լուսավորված լինում, իսկ գմբեթների արանքները մութն եցին և խորը: Խո-տերն ու կանաչը, վոր բանել եցին գմբեթների քո-բերի արանքում, այժմ համարյա աննկատելի եցին, Փողոցում, հենց բաղանիքի բակի դռան մոտ, կար-կաչում եր աղբյուրը: Կամուրջի տակով հոսելով, առ-

վակր, մի քիչ այն կողմում մտնում եր կամարակապ գետնուղին: Նրա վրա կառուցված եյին տներ:

Հետո մեր կառքը սրնթաց բարձրանում եր փողո-ցի վերելքը: Վերելքի բարձրում, մեր մի կողմում արդեն լավաշով՝ իբրև ցուցանակ, իսկ մյուս կողմում՝ մեկն այն արիստոկրատական շենքերից, ուր առաջ ապրել եցին բոլորովին խորթ մարդիկ, բայց այժմ, նույնպես պատկանում եցին ինձ ու Գոհարիկին:

Մի անգամ ևս իջնելով վայրեջքն ու բարձրանա-լով վերելքը, հենց վերելքի ծայրին, մենք տեսնում եյինք դիմացը, ներքեռում, փովող նորաբաց հրապա-րակը: Դա քաղաքի կենտրոնն եր: Կառապանը, վոր կարծեք ինքն ել եր թմրած և ինքնասույզ, ի տես դիմացի լույսերի և բազմության՝ խկույն աշխուժա-նում եր, բացականչում, մտրակը շվացնում: Մենք կտրուկ ցնցումով վերադառնում եցինք այս աշխար-հը, նայում իրար, ժպտում: Մինչ այդ, կառքն աղ-մուկով իջնում եր հրապարակ և կանգ առնում կա-ռաջարի վերջում: Ո՛, ինչպէս հասկանում եր մեղ այդ կառապանը:

Մենք իջնում եյինք վար, բարի գիշեր մաղթում իրար և մեր յերրորդ սիրեցյալին, ապա գնում մեր տները:

Վոչ: Յես չեմ հիշում, վոր Գոհարիկը, յերբեք ինձ ճանապարհ գրած լիներ: Յեկ յես ել նրան:

Ո, Գոհարիկ... Յես ինչքան եյի սիրում քեզ մեր այդ պայծառ սիրո յերազկոտ յերեկոներին... Քաղաքն ամբողջ՝ լցված եր քո սիրով և ուր ել վոր գնալու լինեյի, քո բույրն եյի առնում, վորովհետև դու ինձ հետ եյիր, ինձ մոտ: Դու քո սիրով և քո ներկայությամբ գեղեցկացնում եյիր այն ամեն ուղիները, վորով անցնում եյինք, այն ամեն լուսամուտները, վորոնց նայում եյինք, այն ամեն ծաղիկներն ու աչքերը, վորոնք տեսնում եյինք: Ո՛, հին իմ ընկերուհի, արդյոք դրա համար չե՞ր քաղաքը ցերեկով անտեսանելի, վոր դու ինձ հետ չեյիր: Արդյոք դրա համար չե՞ր նա անհետաքրքիր:

Հեշիր, Գոհարիկ, մի անդամ մենք խմբովին գնացել եյինք մոտակա մի գյուղ: Այնքան լավ եր գլուղը, այնքան լավ եր մեր ուրախ ընկերախումքը և այնքան հաճելի անցավ մեր ժամանակը: Մինչև հիմա յել յես քաղցրությամբ եմ հիշում մեր այդ որը: Ամեն ինչ հիշում եմ, Գոհարիկ, ամեն մի մանրամասնություն, բայց քեզ չեմ հիշում: Յերբեմն ինձ թվում ե, թե դու չկայիր մեզ հետ, բայց չե՞ր կայիր: Չե՞ր վոր քաղաք վերադառնալուց հետո դու ինձ ասացիր.

— Մենք գլուղում այնքան լավ ժամանակ անցկացրինք խմբովին, իսկ դու առանձնացել եյիր և չքաշել,

Վոչ, յես չեյի առանձնացել ու չքաշել, Յես ձեզ

հետ ելի, ձեր կողքին, և ինչպես յես քեզ, այնպես ել ըստ յերեսութին դու ինձ, չեյիր նկատել...

Հասկանում ես, Գոհարիկ... Մենք միմյանց համար գոյություն ունեյինք միայն այն ժամանակ, յերբ յերեքով միասին եյինք: Քաղաքն առանց քեզ, դու առանց քաղաքի՝ դա տարորինակ կլիներ: Մեր սերը կապված եր մեր փողոցների հետ, մեր պլազող լուսերի, այդ լույսերի արանքով անցնող դանդաղասահ կառքի, լուսառատ խանությների, յելնողընկնող ձիասարքի ցալցապի, գլորվող անիմլսերի, և նորից՝ փողոցների, փողոցների, փողոցների...

Փողոցների, վորոնց գրավչությունը կապված եր քո հաճելի ներկայության հետ, քո թեսի ջերմ հպումի, քո շնչառության խաղաղ եքստագի, իմ ու քո խորախոր սիրոն...

Իմ ու քո խորախոր սիրո, վորը կապված եր բաց լուսամուտների հետ, յերկաթավաքնդակների, դրանց յետելից ժպտացող կանանց ու ծաղիկների, մարդկանց ու յերեխաների, յերգի ու գրքի, խնճույքների, ծխախոսի ամպի... Կյանքի...

Կյանքի, վորի հետ կապված եր մեր սերը, կապված եյին մեր սիրո յերազկոտ այն յերեկոները...

6

Պատահում եր յերբեմն, վոր լիալուսին եր լինում: Այդ յերեկոները, յերբ կայարան գնալիս թեքվում ելինք խաչաձեռող վորեւ փողոց ու գնում, մենք չեցինք տեսնում պլազող վորեւ նավթի լամպ:

Լուսնոտ յերեկոներին վոչ մի բնակիչ չեր վառում
եր փոքրիկ կը ակը:

Ո՛, այնքան քաղաքներ կան աշխարհում, վոր յես
չգիտեմ, կպատկերացնեն արդյոք մեր քաղաքը նը-
րանք, ովքեր չեն յեզել այնտեղ յերբեմ: Կպատկե-
րացնեն, որինակ, թե ինչ և նշանակում լուսնի սա-
ռը, համատարած լույսով վողոված բոլորովին ան-
լույս և անմարդ փողոցներ: Մեր փողոցները լայն ե-
յին: Տների միհարկանի լինելն ավելի եր լայնացը-
նում դրանց: Մի քանի անկյուններում կայի: տներ,
փորոնց բակը գտնվում եր վոչ թե բնակարանի յե-
տեռում, այլ առջևում և ուներ միայն ցածրիկ պատեր:
Այդ հայաթը կարծեք լուծվում եր փողոցի հետ և նո-
րից, ավելի լայն դարձնում այն: Իսկ մի քիչ այն
կողմում, այդ լայն և ուղղաձիգ փողոցի տները հան-
կարծակի վերջանում ելին հասած ցորենի արաերի
մոտ: Այնտեղ տարածված եր գաշաբ: Յերբ նայելիք
յետ, ուղղաձիգ այդ փողոցի հետու, հակադիր ծայ-
րում նույնպես, հազիվ նկատելի է երպով կտեսնե-
լիք գարճյալ նույն դաշտը: Յեկ այդ ամբողջ փողոցը,
և նրան զուզանեռ է ամ խաչաձեռող լույսը փողոցները՝
լուս, անմարդ, քնած: Յեկ այդ քնած տեսարանը
փոված եր լուսնի անշարժ ու պաղ լույսի մեջ՝ կար-
ծեք քարացած: Յես մինչև հիմա չեմ կարող գորոշել
լավայի տակից պեղված քաղաքի տպավորություն եր
թողնում այդ, թե աստղադիտակով յերեացող լուս-
նային պեյզաժի: Ինչպես հարյուրավոր տարիներ ա-
ռաջ մեռած քաղաք՝ նա միհարկանի եր, սեաքար,
լայն, ցածր: Ինչպես յերկրի վրա տեղափոխված լուս-

նային պեյզաժ՝ նա ողագուրկ եր, հստակ, սառը, ան-
մարդ: Յեկ վորքան լավ եր, վոր հանկարծ չեր յերե-
վում ուշ տուն վերադարձող կամ պատահաբար անց-
նող վորեն մարդկային արարած: Անշուշտ, թե լիս,
թե Գոհարիկը, կսարսափելինք այդ գերբնական հայտ-
նությունից: Բայց միհնուուն ժամանակ, ինչպիսի-
ցանկություն ունելինք մեղ նման եակներ տեսնե-
լու այդտեղ: Այնքան ուժեղ եր մեր այդ ցանկու-
թյունը, վոր մենք համաձայն եյինք թեկուզ տնային
գողի հանդիպել թեկուզ զրամաշորթի, պատրաստ ե-
լինք պլովիկ ու ծեծվել, միայն թե նայելինք նրանց
յերեսին, ձեռքերին, վոտքերին:

Յեկ վորքան մեծ եր լինում մեր ուրախությունն-
ու հրճվանքը, յերբ լավայի տակից պեղված լուսնա-
յին պեյզաժից շատապ վերադառնալով քաղաքի կենա-
րոն, տեսնում ելինք ելեկտրական տաք, կենդանի-
լուսավորություն և մարդկանց, շատ, շատ մարդկանց,
փորոնք վոչ միայն շարժվում ելին, այլև ձայներ ար-
ձակում...

Յեկ մենք, այդպիսի գեղքերից հետո, ավելի ե-
լինք սիրում քաղաքի կենտրոնը, վոր բոլոր կողմե-
րից արշավող անլուսության և անմարդության դի-
մաց նման եր ամուր, վատահելի միջնաբերդի:

Յեկ մենք, անչափ սիրում ելինք հետեյալ լուս-
նոտ յերեկոյան նորից գնալ թափառելու այն տարո-
րինակ աշխարհում, աղա վախով ու կարոտով յետ-
փախչելու, աղաստանելու մեր հարազատ, մեր սիրելի
միջնաբերդին:

Այնտեղ ապահով ելինք մենք յերեքս:

Բայց կար նաև ավելի հետաքրքիր մի վայր: Դա զոչնչացման Շոսեն եր: Ի՞նչպես եր դրա խակական անունը՝ մենք չգիտեյինք: Մենք ցերեկով յերբեք չեցինք յեղել այդտեղ: Նույնիսկ իրիկունով, միայն մի քանի անգամ եյինք այցելել:

Վոչնչացման Շոսեն գտնվում եր կայտարանի բոլորովին հակադիր կողմում, քաղաքի մյուս ծայրում: Աննկատելի վերելքով քաղաքից բարձրանալով գաշտ, նա գնում եր գեղի գիմացի հետո լնոները: Նա յերկար եր, բավականին յերկար, և գնաճն ու վերադառնալը խլում եր մեղանից մեր ամբողջ յերեկոն:

Շոսեյի յերկու կողմերում կային բնակարաններ, նույնիսկ խանութներ, կային հայաթներ, ջրհորներ... Թաղաքից գուրս գալու կետում, մի բարձր ոյան վրա, վասվում եր ելեկտրական լապտերը, ապա բնակարանների լուսամուտներից յերեւմ եյին հաճախակի լույսեր, դռների վերեւում նավթի լապտերներ... Էնդհաճուր առմամբ, շոսեն լուսավոր եր, մարդաշատ և տներով լի: Բայց քանի մենք բարձրանում եյինք վերե, այնքան ավելի, աստիճանաբար, համարյա աննկատելիորեն, սակավանում ու նվազում եյին աըները, լույսերը, մարդիկ: Հանկարծ մենք նկատում եյինք, վոր գնում ենք համարյա լրիվ մթության միջով: Քիչ հետո վերջանում եյին նաև մնացած մի հատուկենությունը առաջանում էր կայանի մասին հատուկենությունը լույսերը, վորից հետո խավարը դառնում եր լիակատար: Մենք չեյինք տեսնում, քայլում եյինք, վոր մեր շուրջը դատարկ ե, այ-

ևս չկա վոչ մի բնակարան, վոչ մի շունչ: Իսկ դիմացը, հեռվում, կանգնած եյին սարերի սկ սիլուետները, վորոնք այժմ այնքան մոտ եյին թվում, վորկարծեք մենք առնում եյինք յերեկոյան հովից գեղասահան նրանց ջեռ քարերի բույրը: Թվում ե թե նըրանք շարժվում են մեղ վրա:

Յեկ մենք շտապում եյինք փախչել վոչնչացման շոսեյից, յետ կոչել, նորից կյանքի կոչել նրան: Մենք զնչասպառ քայլերով, համարյա վաղելով, վերադառնում եյինք յետ և փոխանակ ուժասպառվելու, ավելի ուժ առնում աճող լույսերից, տներից, մարդկանցից: Մենք հանգստանում եյինք միայն այն ժամանակ, յերբ ոյան բարձրից լուսավորող ելեկտրական լապտերն ավետում եր վոչնչացման Շոսեյի ավարտումը:

Բայց մենք գետ լիապես չեյինք խաղաղվում, մինչեւ վոր չշարունակեյինք մեր քայլերն աշխույժ փողոցներով և չհամեսեյինք քաղաքի կենտրոն: Այստեղ միայն, մենք անդրադառնում եյինք, թե ուր եյինք քիչ տառջ, և փշաղղվում:

Ապա այնուհետև մենք գնում եյինք կենտրոնից վոչ հեռու անմարդ մի փողոց, վորի անկյուններից մեկում ելեկտրոկայանն եր: Ելեկտրոկայանի շենքը մի սովորական սենյակ եր, կայանն ինքը՝ մի փոքրիկ մեքենա: Պատերն ու հատակը մրոտ ելին և մազութոտ, առաստաղից կախված վառվում եյին յերկու ուժեղ լապտերներ և չըմփոցով պատվում եր փոկը: Մի առուցգատես ծերունի քնած եր լինում հենց մեքենայի մոտ, գետնի վրա, մի յերիտասարդ շրջում

Եր մեքենայի շուրջը՝ մեքենայի լուղոտ մտաները մի աթով սրբելով և ուշադիր նայելով մեքենային:

Մենք հենվում ենք բաց լուսամուտի գոգին և նախում ներս: Մենք անչափ ուրախ ենք, վոր անխափան աշխատում եր այդ խորհրդավոր մեքենան և ինչ վոր հեռու, խավար փողոցում, անփույթ վառվում եր ելեկտրական լապտերը: Մենք պատրաստ ենք մեր արյունը տալ՝ իթե լիներ դրա կարիքը, վորպեսզի այդ մեքենան ավելի արագ աշխատեր և ավելի շատ լամպեր կախվեցին խավար փողոցներում:

Առաջին որերին, աշխատող յերիտասարդը մեզ նայում եր չափազանց անբարյացակամ: Մի անգամ մոտեցավ լուսամուտին,—մեզ թվաց թե ուզում եր բարկանալ—վերցրեց մեքենայի լուղի յերկար խողովակով թիթեղե ամանը լուսամուտի մոտից, թափանցող նայեց մեզ ու գնաց:

Հետեւալ յերեկոյան, յերբ մենք դնացինք, լուսամուտի գոզն ամբողջովին ոծված եր մաղութով: Մենք այլևս չենքնք կարող հենալ: Կանգնեցինք, նայեցինք մի քիչ, հոգնեցինք ու վերադարձանք:

Այնուհետեւ մի շաբաթ շալունակ մենք ժամանակ չկտանք այնտեղ գնալու: Իսկ յերբ դնացինք, լուսամուտի գոզը մաքուր լվացված եր,—ավելի մաքուր, քան առաջ,—այնտեղ փոփած եր մի մեծ լրագիր, իսկ լրագրի վրա մի փափուկ թաղիք, վորպեսզի հենվելիս մարդու արմունկները չցավին...

8

Այս, դարմանալի փոփոխություններ եյին տեղի ունենում մարդկանց հետ մեր պայծառ սիրո այդ յերագիոտ յերեկոներին:

Մի անգամ, յերբ մենք անցնում եյինք քաղաքի կենտրոնից գարձալ վոչ հեռու, բայց անմարդ մի փողոցով, մենք տեսանք մի քանի դատարկաշրջիկների: Մենք գիտեյինք,—նրանք հետևում են մութ անկյուն վորոնող սիրահարված կամ սիրաբանող զույգերին, բռնում են նրանց՝ անհարմար մի վայրկյանում, ծաղրում են կամ հայնոյում, նույնիսկ կորիմեր սարքում:

Յերբ մենք անցանք նրանց մոտով, նրանք նայեցին ձևացրած անփութությամբ և վոչինչ չասացին: Բոլորը յերիտասարդներ եյին՝ իմ և Գոհարիկի տարիքի:

Դեռ չենք հասել փողոցի անկյունին, յերբ անմիջապես մեր յետեւում փոթկոց լավեց և յերեք տղաներ, վոր լուռ յեկել ենք մեր յետելից, ծիծաղելով յետ վաղեցին դեպի իրենց ընկերները:

—Փիլիտովա յեն, —բացականչեց նրանցից մեկը, —թող գնան, գործ չունենք...

Յես և Գոհարիկը պատրաստ եյինք վաղել նրանց յետելից, բռնել և համբուրել: Թեև ծաղրական ձեռվ, բայց և այնպես նրանք գիտակցում եյին, վոր իրենք վոչինչ չունեն մեր հետեւու: Յերեկի մեր յետելից զալիս նշմարել ենքն մեր չափից ավելի մոգեռլամ, լուրջ և ինքնասուլղ դեմքերը, յերեկի նկատել ենքն...

վոր երոտիկ վոչինչ չկա մեր թեանցուկի կամ քոյշ-
լերի մեջ, և իրենց հոգու մի մաքուր հեռվում հար-
գանք եյին զգացել մեր սիրո հանդեպ:

Այնուհեաւ միշտ, վորքան ել անցնեյինք մենք
այդ փողոցով, կմեյինք յերիտասարդներից մելի կի-
սաձայնը, վորով նա զգուշացնում եր մեզ չճանաչող
իր վորեե ընկերոջը:

—Մեր փիլիսոփաներն են, թող գնան:

Բայց մի անգամ, նրանց մեջ ուժեղ կորիվ ծագեց
և նրանք վերածվեցին կատաղի գաղանների: Սկսվեց
բռնցքակուիվ, տուրուղմիոց, փայլատակեցին փոքրիկ
դանակներ:

Գոհարիկը ձեռքն արագ քաշեց իմ թեկի միջից և
շտապ շշնչաց:

—Յես պիտի մոտենամ...

Անհեթեթ կլինի նույնիսկ յենթագրել, թե յես
դիմադրեցի նրան և մի կողմ քաշեցի, կամ գոնե
ինքս ել նրա յետեկց մոտեցա, վորպեսզի նրան ող-
նություն ցույց տամ: Գոհարիկը, ինչպես ասել եմ,
կարիք չեր զգում իմ ողնությանը, իսկ յենթարկվել
ինձ՝ նրա մտքովն անգամ չեր անցնում: Ի դեպ, իմ
մտքով ել չեր անցնում նրան յենթարկել ինձ: Այդ-
պիսի վայրենի բան Գոհարիկի հանդեպ... Յերբեք:

—Ապա, շնոր, ընդհատեցեք, —ասաց Գոհարիկը
խիստ ձայնով՝ մոտենալով նրանց:

Մի վայրկյան բոլորն ապշած նայեցին, ապա նո-
րից շարունակեցին իրենց գործը:

—Չեզ հետ չեմ, —բարկացավ իմ լավ ընկերունիւս
և բռնեց մեկի թեկրից: —Կաց, բավական ե:

—Թհնդ, —գոռաց նա և թեթև փորձ արեց թերեն
ազատելու: Բայց թեթև փորձով ազատվել Գոհարիկից՝
հնարավոր չեր:

Բոլորը թողեցին կոիլը և հավաքվեցին նրանց
յերկուսի շուրջը:

—Թհնդ, —այս անգամ ավելի բարձր վորոտաց յե-
րիտասարդը և ավելի ուժգին ցնցեց թերերը:

• Գոհարիկը շրթունքն ատամների մեջ առնելով, իր
ուժեղ մատներով պինդ սեղմեց կովարարի թերերը:

—Խելոք վոր կենաս, կթողնեմ: Թե չե թերդ
կթուլացնեմ: Խոսք տուր:

—Թող ասում եմ քեզ, —ջղայնությունից համար-
յա լաց յեղավ յերիտասարդը, բայց այլևս թերերը չը-
ցնցեց: Ակներե եր, վոր նա Գոհարիկից ուժեղ եր
առնվազը տաս անգամ, բայց մի ինչ վոր բան նրան
թուլ չեր տալիս իր ամբողջ ֆիզիկական ուժը գոր-
ծադրել. —Թհնդ, թե չե կհայնոյեմ...

Ո՛, վորքան ծիծաղելի կլիներ, յեթե յես առաջ
վաղեյի՝ բացականչելով. —Եյ, Եյ, քաղաքացի, չհամար-
ձակես հայնոյել: Նույնիսկ վոչ թե կովողները, այլ
Գոհարիկն ինքը կդառնար դեպի ինձ և կհ որցներ. —
դժւ ինչու մեջ ընկար, ով կանչեց քեզ...

—Յես գիտեմ, վոր չես հայնոյի, —ժպտաց Գոհա-
րիկը. —ապա, հայնոյիր: Իհարկե չես հայնոյի:

—Ազնիվ խոսք, կը հայնոյեմ:

—Չես հայնոյի: Դու այլքան վատ տղա չես: Յես
հաստատ գիտեմ, վոր դու վատ տղա չես:

Յեվ յերիտասարդը չհայնոյեց: Նա սկսեց բողոքել
Գոհարիկին, վոր իրեն վիրավորել են, վոր հայնոյել

են իրեն, ապա արդարունալու համար մեջ ընկավ հայնոյողը, բոլորն սկսեցին Գոհարիկին պատմել, թե ինչպես յեղավ գեպքը, ով սկսեց կոփը, ով եր մեղավորը և այլն: Գոհարիկը բարկացավ ինչ վոր մեկի վրա, գովեց յերկրորդին, հանդիմանեց յերրորդին, բոլորի քաջալերական հայացքների տակ վանդեց, հեռացը ծորբորդին՝ սպառնալով ձերբակալել տաք հետո ծիծաղեցը բոլորիս և բոլորս միասին գնացինք քաղաքի կենտրոնը և իրար բարի գիշեր մաղթեցինք ու ցրվեցինք:

Ահա այդքան մենք սիրում եյինք իրար:

¶

Քաղաքում ավտոներ յերեացին: Նրանց փայլուն, գեղեցիկ կերպարանքներն սկսեցին փայլատակել ու չքանալ մերթ այս փողոցում, մերթ այն: Արեք փայլում եր նրանց կապույտ լաքի վրա, փորը սակայն, որվա ընթացքում, ծածկվում եր փոշու նկատելի շերտով:

Մարդիկ, վորոնց աչքերի առջև տարիներ շարունակ ավտոն սպակերացել եր իրեն փուրգոնի գղրդոցով բեռներ փոխադրող կոպիտ մեքենա, այժմ զըժկամակությամբ եյին նույն անունը տալիս այդ փոքրիկ, կոկիկ մարդարաներին: Նրանք իրենց սրտում անշուշտ պատրաստել եյին մի ուրիշ, սիրալիի անուն, վորը սակայն, ի թիվս ուրիշ շատ ու շատ լավ բաների, արտահայտել չեյին կարողանում:

Յես և Գոհարիկը, վոր մեր աշխատանքի ժամե-

ցին հաճախ լսում եյինք փողոցով անցնող ավտոների ձայնը, մեր սիրո իերազկոտ յերեկոներին յերբեք չելին տեսնում նրանց: Գուցե պատճառն այն եր, վոր գործնական որը վերջանալուն պես կանգ եյին առնում նաև նրանք, գուցե ընդհակառակը, դեռ շարունակում ելին ոլանալ նրանք քաղաքի այլևայլ կողմերում՝ գործ չունենալով միայն մեր սիրո փողոցների հետ: Ինչպես ել վոր լիներ, այնուամենայնիվ այդ այդտակերանում եյին իրեն գործարանի պարսպի յետեից լավող ախորժալուր ձայն: Յեվ մենք, դեռ չըտեսած, արդեն սկսել եյինք սիրել նրանց: Իսկ յերբ տեսանք առաջին անգամ, վոչ միայն չհիասթափվեցինք, այլև, — այդ արդեն անսպասելի յեր, — սիրեցինք ավելի շատ:

Մենք գնում եյինք մեր անլույս և անմարդ փողոցներից մեկով, ուր նավթի լամպերն արգեն վառված եյին՝ չլուսավորելով անգամ իրենք իրենց: Միան նրանցից մեկը, վորն ավելի մեծ եր և վորի պատրույդն այնքան անգթորեն ներքեւ չեր քաշված, մուգ-գեղնավուն լույսի մի մեծ պատառ եր նետել գետնին, մայթի վրա: Երջապատի խավարի մեջ այդ թվում եր լույսի մի ամբողջ հեղեղ: Մենք կանգնել և նայում եյինք, թե ինչպես այդ լույսի տակ թափուր ննջում եյին տան դռան մոտ զրված յերկոտ յերկարամուն քարերը: Գուցե մենք դեռ վերջալույսի ժամն եյինք ապրում և տեսնում եյինք կանանց՝ այդ քարերի վրա նստած, անցնող զարձողին նայելիս: Կամ գուցե մենք մտովին հմայություն եյինք անում,

ուրիշներին անհասկանալի, բայց զորավոր քառեր եւ ինք մըմջում, վորպեսդի անմիջապես ծագեր տրմը և այդ քարերից մեկի վրա հանգչեր շատավ լվացված և գործի գնացած տանտիրոջ պղնձե փոքրիկ ջրամանը՝ լուսաբացային սառը ջրի մնացորդով։ Կամ, վորպեսդի հավանական ե, մենք չեինք ուզում, մենք չեյինք կարող լուսի այդ փոքրիկ կղզուց հեռանալ կեպի շրջապատի համատարած մթությունը։

Բավական ժամանակ մենք կանգնած եյինք այդպես, յերբ հանկարծ փողոցի մի ծայրում լսվեց ճշակի ծանոթ ծայնը, ապա անկյան յետելից թեքվելով, սկսեց դեպի մեղ գալ մի մարդատար ավտո։ Նրա լավտերներից ժայթքող լույսի յերկու հորձանք վողողեցին սալահատակն ու մեղ, և մենք, նայելով նըրան, վոչինչ չկարողացանք տեսնել, լինելով սակայն, նրա կողմից տեսանելի։ Մենք նույնիսկ ամաչեցինք, — կարծես այդ լուսը մերկացրեց մեղ կամ բռնեց հանցանքի մեջ։ Մի վայրկյան մատանցինք գուրս գալ լույսի սպիտակ գաշտից, բայց տեղ չգըտանք, իսկ այդ բոպեյին, գուցե ավտոյից ծիծաղում եյին բռնված զույգի վրա, գուցե հաշվում ելին, թե քանի կոճակ կաշարված Գոհարիկի վերնաշապկին։ — շդիտեմ, մենք նրանց չեյինք տեսնում։

Վերջապես ավտոն իր արագ սլացքով յեկավանցավ մեր մոտից, և մենք, նրա և մեր հավասարվելու մի վայրկյանում տեսանք մի քանի ստվերներ նրա մութ, ծածկված կառքի մեջ։ Նաև տեսանք, թե ինչպես շոֆերը կողքի վրա գուրս թեքվեց լուսամուտից և դինեց մեղ։

Մենք նայեցինք ավտոյի յետեկից։ Փողոցի խորաքը, վոր նման եր մի ոև զանգվածի, այժմ նուրանում և հալվում եր արշավող լույսից, այժմ նրա միջից գուլա եյին լողում պատեր, գոներ, լուսամուտներ, կտուբներ, հորիզոնական ձգված կարմիր ջըրհորդականներ։ Այս վերջինները չեյին ընկնում լույսի գաշտի մեջ, բայց նրանց վրա անդրադարձում եր ներքեկի լույսը Մենք զգում եյինք, թե ինչպես յերկու ուժեղ լավտերներն առաջ եյին սլանում վատահու տիրաբար և ինչպես տանում եյին իրենց հետ մեր բուռն, մեր բուռն շնորհակալությունը...

...Մենք նայեցինք մեր շուրջը։ Համատարած մըթություն եր, վոչինչ չկար։ Մենք կանգնած եյինք մի նվազ, խավարախառը լույսի անոգնական շրջանակում։ Ամեն կողմից արշավող մթության լեզվակներն անգթորեն մխրճվում ելին այդ լույսի շրջանակից ներս, մխրճվում եյին մինչև նրա սիրտը՝ չթողնելով լույսի մի փոքրիկ, գոնե հինգկողեկանոցափ մաքուր կորիկ։ Խավարը ծածկում եր լույսի ամքող այդ թույլ շրջանակը։

10

Մի յերեկո, յերբ յես ու Գոհարիկը գուրս յեկանք կայաբանի շենքից՝ քաղաք վերադառնալու համար, չլսվեց մտրակի ծանոթ ճայթյունը և մեր սովորական կառապանը չմոտեցավ մեղ։ Առաջին վայրկյանին այդ բանը մեղ տարորինակ թվաց, ապա համակացանք, վոր նա, անշուշտ գտել եր ավելի վճարող

մի ուղևորի և գնացել։ Ի՞նչ կա վոր։ Հո նա պարտավոր չեր ամեն լեռեկո մեզ տեղափոխել։

Սակայն մենք տատանվում եյինք ուրիշ կառքով գնալ։ Կհասկանար արդյոք նոր կառապանը մեզ, ամբողջ ճանապարհին չեր ճոճի մտրակը և չեր հայովի ձիերին, չեր արագացնի կամ դանդաղացնի նրանց ընթացքը, և, — ով գիտե, ամեն ինչ կարող ե պատահել, — չեր կանգնի արդյոք բաղանիքի դռան առջեր աղբյուրի մոտ, վորակեսզի այստեղ դրված տախտակետաշտից ձիերը ջուր խմելին...

Մենք կանգնած եինք անորոշ վիճակում։ Կառապանները, տեսնելով, վոր մեր կառքը չի մոտենում, և անդրադառնալով, վոր նա չկա, իսկույն, բոլորը միասին, շարժվեցին դեպի մեզ, Բայց Գոհարիկը նըրանց կանգնացըց։

— Վոտքով գնանք, — դիմեց նա ինձ։

Նույն բոպեյին, կալարանի շենքից գուրս յեկավ մեզ ծանոթ հասակավոր մի ընկեր՝ անծանոթ մի ուրիշի հետ, — ըստ յերեսույթին, նորեկի։ Մեր ծանոթը սիրում եր Գոհարիկին, — մենք այդ գիտեյինք։ Բայց նա ինքը յերբեք չեր խոսել այդ մասին իմ ընկերուհու հետ։ Գուցե նրան յետ եր պահում մեր սիրահարված լինելը, գուցե իր տարիքը, վոր զգալիորեն տարբերվում եր Գոհարիկինից, կամ գուցե այն, վոր նա ինձ նման բարձրահասակ չեր և նեղիղան, այլ ավելի ծանըր ու հաստ, իսկ նրա քունքերի մի քանի սպիտակ մազերը չելին կարող մրցել իմ ճակատին իջած խիտ գանգուրի հետ։ Ինչն ել վոր լիներ պատճառը, նա

Գոհարիկի հետ միշտ վերապահ եր ու քաղաքավարի թագըրած տիրության մի նկատելի ստվեր դեմքին։
— Գոհարիկ, — ուրախացավ նա այս անգամ, ըստ յերեսույթին ինձ չնկատելով։ — Ինչու յես կանգնել։
— Քաղաք եմ իջնելու, — ասաց Գոհարիկը,
— Ուրեմն գնանք միասին, — ասաց մեր ծանոթը խնդությամբ լի և դիմեց իր ուղեկցին, — ծանոթացիր, — մեր պայծառ կոմյերիտուհիներից մեկը։
Նրանք ձեռք տվեցին միմյանց։ Նույն բոպեյին, մոտիկ մժության մեջ վառվեցին յերկու լուսեր և մի բաց մարդատար մոտեցալ շենքի աստիճաններին,
— Գնանք, — դիմեց Գոհարիկն ինձ։

Մեր ծանոթը նայեց։ Մի վայրկան թախիծը պատեց նրա լայն, պայքարներում խոնջացած ճակատը, ապա նույն զվարթությամբ նա դիմեց նաև ինձ։

— Դու ել ես այստեղ։ Չտեսա, սիրելիս, բարե քեզ։
Նա բաց արեց ավտոյի դռնակը։ Գոհարիկն ու յես անամոթաբար նստեցինք ավտոյի յետին, ավելի փառավոր նստելատեղում։ Ուզում եյինք, վոր մեր առաջին տպալվորությունն ավտոյից՝ լիներ լիակատար, նաև չեյինք ուզում ցցվել յերկու հասակավոր մարդկանց առջեռում։ Մեր ծանոթը նստացրեց նաև իր ընկերոջը, ապա նստեց ինքը և կամացուկ, առանց շրիկոցի, կարծես վախենալով, վոր իրեն չկասկածեն տանջող թախիծի մեջ, դռնակը փակեց։ Այսուհետեւ ամբողջ ճանապարհին նա շարունակ խոսակցում եր իր ընկերոջ հետ՝ քաղաքավարությամբ ուշադրություն չդարձնելով մեզ, և ապացուցելով, վոր հրավիրելով նստել ավտո, նա վոչ թե նպատակ ուներ զը-

բուցել Գոհարիկի էամ ինձ հետ, այլ պարզապես մեղ տանել քաղաք:

Ավտոն պոկվեց իր տեղից ու սլացավ:

Յեվ տեղի ունեցավ մի անհավատալի բան:

11

Մի վայրկյանում, մենք կայարանի առջևի հրապարակից արդեն մտել եյինք դեպի քաղաք գնացող փողոցը: Հետեյալ վայրկյանին, մենք արդեն անցել եյինք փողոցի հարթ մասը և ցած եյինք իշնում նրա փոքրիկ վայրեջքով: Մենք վերելքը բարձրացանք և իջանք այնպես, ինչպես անիմսերի տակ ընկնող մի հողակույտի վրա: Տները մեր յերկու կողմերում սլանում եյին գահավեժ արագությամբ և նրանք բոլորը կարծես սարքված լինելին հորիզոնական ձգվող անթիվ գծերից: Նավի կրակները կետերից վերածվում եյին գդզույն յերիշների, և ընդհանրապես լուրացնչուր տուրկակա ձգվում եր անվերջանալիորեն յերկար: Նրանք կորցրել եյին իրենց հստակությունը, նրանք մշուշու եյին, համարյա անյութ: Փողոցը զուրկ եր իր սովորական հանդարտությունից և խաղաղությունից, նրա մեջ սրակվել եր անհանգստությունը՝ ավտովի կերպարանքով: Յերբ մենք թուանք-անցանք տասնմեկ ցուցափեղերի մոտով, նրանցով լուսավորված փողոցի այդ մասը մեղ բոլորովին ել չթվաց պայծառ ու զվարթ: Ավտոյի լապտերից հորդող սպիտակ լույսն այնպիսի արհամարհական վստահությամբ փուլեց սալահատակի այդ մասի վրա, կարծես նա

մինչ այդ բոլորովին ել լուսավորված չլիներ ցուցափեղերի լայն քառանկյունիներով: Յեվ ընդհանրապես, մենք խանութիների մոտով անցանք այնքան սրճթաց, վոր նրանք թվացին լոկ մի լապտեր, ձիշտ ե, մի քիչ ավելի մեծ, քան մյուս ձրագները:

Մենք արագ թուանք վերջին վերելքով, միանգամից տեսանք ներքեւում ընկած հրապարակը և գեռ աչք չը թարթած՝ արդին այնտեղ ելինք:

Վերջ:

Շոփերը ցած իջավ, քիթը մաքրեց:

12

Յես և Գոհարիկը նայեցինք իրար: Կատարվել եր մի մեծ, անուղղելի բան: Կատարվել եր մի այնպիսի ահազին փոփոխություն, վորը մենք դեռ անընդունակ եյինք ըմբռնել: Յեթե մենք կանգնած չլինեցինք այդտեղ, քաղաքի կենտրոնում, զուցե հեկեկայինք անհասկանալից տագնապած և հեկեկոցով միմյանց գիրկնետվելելինք: Սակայն մենք կանգնել եյինք սառած, շշմած, և, ավաղ, սկսում եյինք ըմբռնել տեղի ունեցածը:

Քաղաքը փոքրացել եր:

Այն քաղաքը, վորին մենք յերկար ամիսներ շարունակ նայել ելինք հանդարտասահ կառքի, անիւների շարունակի, սմբակների կոտրակի, ձիասարքի ցալցապի, մեր ինքնասուցդ եկատաղի միջից, այժմ մեր առջև կանգնել եր անհավատալիորեն փոփոխված: Առաջին անգամ նայելով նրան ավտոյի միջից, մենք

տեսնում եյինք, թե վորքան կարձ ու փոքրիկ եր կայարանից գեղի քաղաք ձգվող փողոցը, վորքան խեղճ ու փոքրիկ եյին խանութները, վորքան թույլ ու փոքրիկ եր նրա ցուցափեղկերից հորդած լույսը, վորքան իրար մոտ և դարձյալ փոքրիկ եյին բլուրներն իրենց անշան վերելքներով ու վայրեջքներով... Սյն ձանապարհորդությունը, վորի ընթացքում մենք ամեն որ ունենում եյինք եքստազի յերկար ըռպեներ, այնքան շուտ անցավ, վոր մենք, գեռ ավտ նստելու շարժումից հետո չմեղկացած, ստիպված եյինք գործել ավաոյից իջնելու շարժումը: Քաղաքի կենտրոնը, վոր մինչ այդ մեզ թվում եր իր յերկար փողոցների ընդարձակ ցանցի կենարոնում կանգնած միջնաբերդ, այժմ թվում եր ամայության մեջ կանգնած, վորովհետև մի քանի քայլ այն կողմից, — կարձ փողոցի և մոտիկ կայարանի յետելից, — մենք զգում եյինք արշավող դատարկ ու մութ դաշտերի գիշերաշընչը:

Քաղաքը չփոքրացավ. — քաղաքը փոքր եր: Մենք իդուր եյինք մեզ որորել ինքնախախելության մեջ և դանդաղաքայլ կառքի մեջ... Սակայն ինչպես հաշտվել այդ սոսկալի կորուստի հետ, ինչպես կորցնել նրան, վորին սիրում եյինք, վորին սիրելու համար այնքան սիրում եյինք իրար յես և Գոհարիկը...

Առաջինը խոսեց իմ ընկերուհին...
— Զնանք կայարան, — ասաց նա:

Յես վոչինչ չհարցրի. — յես հասկացա նրան: Յել մենք, արագարագ, առաջին անգամ առանց մեր շուրջը նայելու, գնացինք կայարան:

Արդեն ուշ յերեկո յեր, — համարյա գիշեր: Շենքի պատի տակ, կառաշարում, գեռ համառ կանգնել եյին յերկույթեր կառք: Նրանցից մեկը մեր ծանոթ կառապանինն եր, վորն իր ուղեորներին տեղափոխելուց հետո վերադարձել եր կայարան՝ անշուշտ մեղ համար:

Տեսնելով մեզ, նա կառքն առաջ քշեց և իսկույն անորոշ կանգ առավ, յերեկի անդրադառնալով, վոր մենք քաղաքից ենք դալիս և վոչ թե քաղաք գնում: Սակայն յես ձեռքով արի նրան, նա մոտեցավ և մենք անմիջապես նստելով, վերադարձանք:

Մենք ուղում եյինք վերականգնել այն, ինչը խաթարվել եր այնպես անապասելիորեն: Մենք ուղում եյինք մոռանալ ավտովի այդ հանկարծակի միջամը տությունը:

Սովորականի պես յես և Գոհարիկը սեղմվեցինք միմյանց, սովորականի պես մի պահ նայեցինք կառքի լապտերներին, վորոնք մեր կողմից, — յետեկից, — ապակի չունելին, այլ թիթեղե ու գոնակ, ապա տեսանք նրանց հարաշարժ լուսը ձիերի գավակների վրա: Հետո մոռանալով կառքը, լուծվելով նրա ձայների և շարժումների մեջ, սկսեցինք անթարթ աշքերով նայել. Հըջապատին: Մենք նույնիսկ մոռացանք մեր հոգու տագնապը:

Սակայն ավաղ, մեղ վիճակված չեր խաթարվածը շտկել: Այդ յերեկո, կարծես դիտմամբ, կառքը գնում եր սովորականից դանդաղ:

Թվում եր, թե կառապանը գիտե ամեն ինչ, թե կառապանը դիտմամբ և դանդաղ քշում, վորպեսզ:

մենք յետ ստանանք մեր կորցրած տեմպը, փողոցը
յետ ստանա իր կորցրած տարածությունը, լույսերը
յետ ստանան իրենց կորցրած զորությունը, տները
յետ ստանան իրենց կորցրած գրավչությունը: Կառ-
քի ընթացքը թվում եր դիտմամբ դանդաղեցրած,
կեզծ: Իսկ մենք կեզծություն չեյինք ուղում: Մենք
նայում ենինք յուրաքանչյուր շենքի և առաջին ան-
գամ զում, թե վորքան փոքր և նա: Յեվ մեզ ջղայ-
նացնում եր այն, վոր կառքը դիտավորյալ դանդա-
ղությամբ եր անցնում նրանց մոտով, վորպեսզի
նրանցից յուրաքանչյուրի փոքրիկ կերպարանքը մեզ
թվար մեծ, յերկար:

Յերբ անցանք տասնմեկ ցուցափեղերի մոտով,
առաջին հայացքից մեղ այնպէս թվաց, թե նրանց
լուսն այդ յերեկո կը կնակի նվազ եր, յեռակի նվազ:
Իսկ կառքը, բարկություն առաջացնելու չափ միա-
մտությամբ, նորից աշխատում եր խարել մեզ: Նա
անցնում եր դանդաղ ու համբաքայլ, վորպեսզի ան-
ովնական կիսալույսը մեզ թվար լույսի հեղեղ: Թե
զուցե կառապանն այդ անում եր առանց այդպիսի
նպատակի: Գուցե քաղաքից շտապ կերպով մեզ հա-
մար կայարան վերադառնալիս ձիերը հոգնել եին և
այժմ կառապանը ինայում եր նրանց: Իզուր: Զիե-
րին վոչինչ չի պատահի, իսկ մեղ այնքան անհրա-
ժեշտ և գտնել մեր կորցրած տեմպը: Ուստի և, Գո-
հարիկն ասաց.

— Քար սովորականի պես:

Կառապանը զարմացած նայեց յետ: Դա միակ

խոսքն եր, վոր նա լսում եր մեղանից՝ ամիսներից ի-
վեր:

— Սովորական չե՞—ժպտաց նա:

— Վոչ, սովորական ե,—ասացի յես և նայեցի Գո-
հարիկին:

Մենք միմյանց հասկացանք:

Կառքի ընթացքը, իրոք վոր, սովորական եր, և
ավտոն եր պատճառը, վոր այժմ մեզ թվում եր ավե-
լի դանդաղ:

Ավտոն մեր աչքերը բացել եր: Իսկ այն բանում,
վոր քաղաքը վորիսվել եր մեր շուրջը, կառքը չեր մե-
ղավոր, այլ մենք, վոր ամիսներ շարունակ պատվել
եյինք մեր փոքրիկ առարկաների միջավայրում՝ աշ-
խատելով ինքնախարեյության մեջ ընկնել, մեր թը-
զուկը մեղ պատկերացնել հակա: Իսկ այժմ, յերբ ավ-
տոն, — հզոր ուսուցիչը, — բացել եր մեր աչքերը, մենք
նորից կառք եյինք նատել, վորպեսզի վերապահա-
յինք դեպի մեր սահմանափակվածությունը: Բայց
կառքն անզոր եր վերապարձնել մեզ: Մենք ամաչե-
ցինք մեղանից: Մենք ամաչեցինք ավտոյից: Յեվ ան-
համբեր սպասելով, վոր վերջանա այդ ձգձված ու-
ղերությունը, սկսեցինք մտովին շտապեցնել այլու-
անպետք դարձած կառապանին.

Հասնելով հարապարակ, մենք արագ վար իջանք և
մոռանալով անզամ միմյանց բարի գիշեր ասել, գը-
նացինք մեր տները:

Հիշմամ ես, Գոհարիկ, թե վոչ. — պատմության դասերից մեկի ժամանակ, դասատուն կարդաց մի ինչ վոր հատված մի ինչ վոր գրքից: Մենք այն ժամանակ դրա իմաստը լավ չհասկացանք: Ավելի շուտ՝ հասկացանք, բայց նյարդերով ու հոգով չզգացինք: Ահա այդ հատվածը, Գոհարիկ, յիթե չես հիշում:

— Յերբ գտնում են վառողը, այլևս անհնար և նետով պատերազմելը: Յերբ գտնում են շոգենավը, այլևս անհնար և լաստով ճամբորդելը: Յերբ տիրում են կնոջը, այլևս անհնար և համբույրներով սիրելը...

— Բացվամ ե արեգակը՝ աստղերը հեռանում են: Բացվամ ե վարդը՝ մանուշակները թառամում են: Բացվամ ե սիրտը՝ խոսքերը վերանում են:

— Ովկիանոս տեսնելիս՝ մոռացիր ճակները: Դարբասներ բանալիս՝ մոռացիր դռնակները: Կյանքին ունկնդրելիս՝ մոռացիր ամեն ինչ:

— Յերբ գտնում են աստղադիտակը՝ այլևս անհնար և անզեն աչքով դիտելը: Յերբ գտնում են լուսնի լեռները, այլևս անհնար և դիմագծեր տեսնելը: Յերբ գտնում են կորցրածը, այլևս անհնար և նորից կորցնելը:

Ահա այդ հատվածը, Գոհարիկ:

14.

Յերկու շաբաթ շարունակ մենք ընդհատեցինք մեր գրոսանքները: Հանդիպում եյինք միայն գործարանում, գպրոցում և ակումբում: Բայց մեր ոերը

խամրում եր ալղպես, առանց մեր շրջագայությունների, ուր միշտ միասին եյինք մենք յերեքս: Մեքենաները մեղ ասում եյին՝ արտադրիր, գրատախտակը՝ մտածիր, սկումբի վարիչը՝ վիճիր, և միայն մեր քաղքը, մեր փողոցները, մեր յերեկոներն ելին, վոր մեզ ասում եյին՝ սիրեր.... Ուստի և մենք, այլևս անկարող՝ ալղպես շարունակելու, մի՛ որ վերականգնեցինք մեր գրոսանքները:

Մենք այլևս չեյինք ունկնդրում կառքի ձայներին, չեյինք յենթարկված նրա շարժումներին, չեյինք ընկղմվում հաճելի կիսաթմբերի մեջ: Նայելով մեր շրջապատին, մենք այժմ տեսնում եյինք, վոր շենքերը չեն մեծ, այլ կառքն ե դանդաղ գնում, վոր փողոցները չեն յերկար, այլ կառքն ե դանդաղ գնում, վոր յերեկոները չեն յերազկոտ, այլ կառքն ե դանդաղ գնում: Յեվ յեթե այդ բանը դիտենալուց հետո մենք դարձյալ նստում եյինք կառք, ապա պատճառն այն եր, վոր մեր քաղաքում ավաները գեռ քիչ կաշին և մենք հնարավորություն չունեյինք ավտո նըստելու:

Մի յերեկո, յերբ մենք վերապառնում եյինք քաղաք, զարմանքով նկատեցինք, վոր հինգ խանութների տասնմեկ ցուցափեղկերը թաղված են լիակատար խավարի մեջ: Մոտենալով սակայն, պատճառը հասկացանք: Խանութները, ինչպես և նրանց կից յերկու բնակարանները, շրջապատված ելին տախտակե պատնշով: Նրանք քանդվելու ելին:

Յեթե այդ բանը պատահեր մեծ հիասթափությունից առաջ, անշուշտ մենք կվշտանայինք: Բայց այժմ

դա մեզ համար միենույնն եր: Յեթե քանդում են,
նշանակում ե՞ փոխարենն ավելի լավ բան են կառու-
ցելու: Այժմ ափսոսալ սալահատակի վրա ընկնող
պղոտը կիսալուսը, վորին փոխարինելու պետք ե
գա գուցե մի իսկական լուսագետ:

Բայց և այնպես, առանց այն ել մութ փողոցն այդ
բանից ավելի էր մինել: Յեկ այդ պատճառով, մենք
մեր զբոսանքները տեղափոխեցինք զուգահեռ հարե-
վան փողոցը, վորը, ինչպես և բոլոր մյուս զուգահեռ
փողոցները, անչափ նման եին իրար, մանա-
վանդ յերեկոները: Աւստի և, մենք բոլորին չզգա-
ցինք փողոցի փոփոխությունը: Փոփոխությունը մեր
մեջ եր և կապ չուներ նոր փողոցի հետ: Փոփոխու-
թյան պատճառն ավտոն եր, — մենք այդ զգում եյինք
պարզորոշ կերպով:

Մեր յերբեմնակի ուղերությունները գեղի վոչըն-
չացման Շոսեն մենք իսպառ դադարեցրել եյինք:
Քաղաքի կենտրոնը, — անցյալում այնքան ապահով
թվացող այդ միջնաբերդը, — այժմ մեկ թվում եր վոչ
այնքան ապահով: Մենք յերաշխիք չունեյինք, թե
կզայինք մեզ առաջվա նման անվտանգ և գոհ, յեթե
նորից գնալով դեպի վոչնչացման Շոսեի խավար,
ամայի ծագը և վերադառնալով, ապավինելինք այդ
փոքրիկ հրապարակին: Մենք չեյինք ուզում ձաշակել
վտանգավոր փորձությունը: Այժմ մենք աշխատում
եյինք շրջել լուսավոր փողոցներով, բարձմամարդ փո-
ղացներով, բնակչության արթուն ժամերին:

Վոչնչացման Շոսեից հետո մենք մոռացմանք նաև
մեր շեղումները դեպի խաչաձող մութ փողոցները,

128

մեր այցը փակ կամ բաց լուսամուտներին և մանա-
վանդ մեր ծանր զբոսանքները լուսնկա յերեկոներին:
Այժմ մեր ուխտատեղին ելեկտրոկայանն եր, — փոք-
րիկ սենյակում դրված այն փոքրիկ մեքենան, — վո-
րին վիճակված էր մի ծանր բեռ, իր ուժերից վեր մի
պարտականություն, — լուսավոր պահել իմ ու Գոհա-
րիկի գոնե միայն հրապարակը, — քաղաքի կենտրո-
նը, — վորը մեր միակ միջիթարությունն եր շրջապա-
տի խավարում:

Վոչ, մենք այլիս չեյինք սիրում քաղաքն անվե-
րապահ սիրով, ինչպես նա կար: Մենք այժմ տես-
նում եյինք նրա մեջ նաև այն, վորն այլու անկարելի
յեր սիրել:

15

Մի յերեկո, յերբ յես գնացի Գոհարիկենց տուն,
Գոհարիկը լուսամուտի մոտ նստած լրազիր եր կար-
դում: Տեսնելով ինձ, նա շտապ կանչեց իր մոտ, —
ըստ յերեսութին վաղուց եր սպասում, — և լրազիրը
մեկնելով, ասաց:

Կարգա: Մեր քաղաքում մեծ կործարան են կա-
ռուցում:

Ցես կարգացի:

— Իսկ վ՞րն և այդ Ազատության Փողոցը, — հար-
ցրի յես:

Գոհարիկը չգիտեր: Փողոցներն ունեյին իրենց
անցյալ անունները, վոր դեռ գործածում եյին շատե-
րը, և ունեյին իրենց ապագա, — իմ ու Գոհարիկի

8երեք սիրագեղ—9

129

հնարած, — անունները, վոր դեռ չեր պործածում վոչ
վոք: Իսկ ներկա անունները, ափսոս, դեռ չգիտեյին
վոչ ուրիշները, վոչ մենք:

— Մեծ Սիրո Պողոտան չլինի՞, — յենթաղբեց Գու-
հարիկը:

Յես հասկացա. — նա ակնարկում եր դեպի կայա-
բան տանող մեր նախկին փողոցը և կասկածում եր
տասնմեկ ցուցափեղի ունեցող հինգ խանութների և
նրան կից յերկու տների վրա:

— Վոչ, — ասացի յես:

Դեռ նախորդ կիրակի, յերեկը, յես ու Գոհարիկն
այցելել ելինք կառուցման վայրը և տեսել. — այնուել
տուն եր կառուցվում: Հենց այդ որն ել խոսք ելինք
տվել միմյանց՝ այլա չայցելել այդ շենքին, մինչև վոր
այն վերջնականապես պատրաստ չլիներ: Մենք ուզում
ելինք միանգամից ճաշակել այն բավականությունը,
վոր կարող ելինք ստանալ որո՞րի վրա, մաս առ
մաս:

Իսկ այժմ, կառուցվելու յեր վոչ թե լոկ մի տուն,
այլ մի ամբողջ գործարան:

Յես նայեցի Գոհարիկին:

— Որո՞րի վրա՞ թե մի անդամից...

— Միանգամից, — պատասխանեց նա:

— Մտածիր, — նախազգուշացրի յես, — սա մի տուն
չէ, վորի մասին չգիտենալն անդամ այնքան դատա-
պարտելի չլինի: Սկիզբ ե առնում մի նոր արդյունա-
բերություն, մենք պարտավոր ենք զրա մասին գի-
տենալ թե հենց առաջին որը և թե ամեն որ:

Գոհարիկը մտածեց:

— Մենք լրագրերում այդ մասին տպվող ամեն ինչը
կկարդանք, բայց շինարարությունը չենք տեսնի, —
ասաց նա:

Յեվ մենք պայմանակորվեցինք չհետաքրքրվել
անգամ, թե վորն ե Ազատության Փողոցը, իսկ Մեծ
Սիրո Պողոտան մեղ համար ժամանակվորապես արշ-
գելված համարել: Մենք նույնիսկ նրա անունը փո-
խեցինք Մեծ Սիրո ևին Պողոտա, նորն անվանելով
Սիրո և Մտածմունքի Ճանապարհ:

Այնուհետև մենք նորից վերցրինք թերթը և նո-
րից, ամենառաջադիմ կերպով, կարդացինք:

16

Մի գիշեր անձրև յեկավ: Յես արթնացա նրա
շըփոցի ձայնից մեր կտուրի վրա: Արթնացա տխուր,
ընկճված: Յերեկի քնած ժամանակ յերկար լսել ելի
անձրեկի ձայնը:

Անցյալում ևս պատահում եր, վոր անձրեն արթ-
նացնում եր ինձ: Բայց յես ունկնդրելով նրան, ինձ
զգում ելի ապահով և ուրախ, վորովհետև մեր մեծ,
ընդարձակ քաղաքն իր ամուր, դիմացկուն շենքե-
րով, անհոգ և զգտահ եր կանգնած անձրեկի տակ:
Մեր մեծ, ընդարձակ ճրապարակի ահագին լապտեր-
ների ապակիներն ի վար ծլլում եր անձրեաջուրը՝
առանց խանգարելու փայլող ուժեղ լույսերին: Լույ-
սերի շուրջն անձրել գալիս եր տեսանելի շիթերով և
դա շատ գեղեցիկ եր: Մեր լայն, ընդարձակ մայթե-
րով շտապ անցնում ելին ուղինկոտ հագած մարդիկ

ու կանայք՝ կնգուղները գլխներին։ Սալհատակի յերեսն ի մեկ փոված ջուրը ձիերի սմբակների տակ խշացնելով, շոտապ անցնում եյին կառքերը՝ թրջվելուց թարմացած ու փայլող ծածկերով։ Այնքան գեղեցիկ ելին կառքերի յերկու կողմերում վառվող լապտերները...

Այստեղ ու այնտեղ կային լուսավոր, ճոխ սեստուրաններ, շքեղ զվարժատեղիներ, ուր մտնում եյին մարդկի խմբերով կամ զույգ-զույգ...

Ի՞նչ եր այն... Վեպերում կարգացած գեղեցիկ նկարագրություն հեռավոր Յեվոպայի կամ Մոսկավի, թե իրոք, ու մեր քաղաքն եր, վորի վրայից անդժորեն անցավ ավտոն ու ավերեց։

Ո՛, վոչ, ինս լավ գիտեյի, —և ու յեր ցավալին, — վոր այդ քաղաքը մեր յերևակայության արդյունքն եր, — իմ ու Գոհարիկի, — վոր գոյություն չեր ունեցել և չուներ։ Մենք ավտոյից միայն ջնորհակալ կարող եյինք լինել սին պատրանքից մեզ ազատելու համար։ Ի՞նչ աներ ավտոն, յեթե այդ ամենը յերազ եր, չկար, յեթե անձրել թափուում եր մի կիսամութ, փոքրիկ քաղաքի վրա, վորի միհարկանի տները թըրջվում եյին մինչև իրենց վոսկորների ծուծը, փողոցների հողն անմիջապես դառնում եր ցեխ, հանգչում եյին նավթի լամպերից շատերը, իսկ քաղաքի փողոցներում, լիակատար ամայության մեջ, վորը ու մենակ պլալում եյին մի քանի ելեկտրական փոքրիկ կրակներ։ Կենտրոնական փողոցի միակ ճաշարանը, — փակված եր լինում դեռ վաղ յերեկոյան, իսկ միակ

կինոն վաղուց արդեն վերջացրել եր իր յերկրորդ սեանսը և նույնպես փակվելու...

Այս եր իրականությունը։

Յեկ այս եր ահա, վոր այդպիսի թախիծով լցվել եր իմ մեջ այդ գիշեր, Անկողնում պառկած, յես լըր ջում եյի մտովին բոլոր փողոցներով, գնում եյի կայարան, գալիս եյի հրապարակ, թափառում եյի անվերջ և չեյի կարողանում գտնել գոնե մի ապահով անկյուն՝ անձրեկից պաշտպանվելու համար։ Իմ հագուստները թրջվել եյին տակետակ, իմ վոտնամանները լցվել եյին ցեխաջրով, յես սայթաքվում եյի լճացած ջրերի մեջ, դեռ ընկնում քանդված մայթերի քարերին։

Յեկ հանկարծ, — գուցե յես արդեն քնել եյի և յերազ եյի տեսնում, — զեմից արագ մոտենում և Գոհարիկը և մի լայն շարժումով իմ գլխիս վրա փռում և մի մեծ, անշրանցիկ լրագիր։ Հետո նա ինքն ել և մտնում լրագրի տակ։

Յես նայում եմ վերև։ Ուղիղ աչքերիս զիմաց, սլունքակներից մեկում, ֆոսֆորային փայլով փայլում են մի քանի տողեր։ Յես կարգում եմ։ — Մեծ Սիրո Հին Պաղուացի վրա արգեն պատրաստ ե յերեքհարկանի բնակելի շենքը։ Յես բանում եմ Գոհարիկի ձեռքից և մենք յերկուսով վազում ենք դեպի ծանոթ փողոցը։ Դեռ հեռվից, մենք նկատում ենք. — շենքը հուրիբատում ե լույսերի մեջ։ Մենք արագացնում ենք մեր քայլերը, մենք վազում ենք։ Ահա և շենքը։ Մենք մանում ենք ներս, սանդուխքով վեր ենք վագում յերբորդ հարկ։ Ահա և մեր բնակարանի դուռը. —

Աղամ և Յեփա. — կոմյերիտականներ. Մտնում ենք ներս. «Դուրս գանք պատշգամբ, շնոր», — ասում ե Գոհարիկը. Յես ծիծաղում եմ. ի՞նչ պատշգամբ. Մեր քաղաքը միհարկանի յե և վոչ մի պատշգամբ չունի: «Դուրս գանք պատշգամբ», — պնդում ե Գոհարիկը:

Յել մենք դուրս ենք գալիս պատշգամբ ու քաշացած կանգ առնում, Ներքեռում, շատ ներքեռում, — մոտ տասը հարկ մեզանից ցածր, — փոխած և լուսերի մեջ լողացող քաղաքը: Մենք պարզ տեսնում ենք բազմաթիվ փողոցներ, փողոցներով անցնող տրամվայի վագոններ, ավտոմոբիլներ, բաղմություններ: Վողորկ փայլում են վիտրինների ապակիները, ավտոմոբիլների լաքը... Անձրես վերջացել ե:

Յես արագ վեր եմ կենում անկողնից, հագնվում և դուրս գալիս բակ, ապա փողոց: Հորդառատ գալիս ե անձրես: Անձրեն սթափեցնում է ինձ, յես զիտեմ, վոր գեռ լիովին ավարտված չե այն շենքը Մեծ Սիրո Հին Պողոտայի վրա, բայց ուղղում եմ գնալ, տեսնել: Ինձ յետ չի կարողանում պահել վոչ այն միտքը, վոր այնտեղ հանդիպելու յեմ գեռ իսպար և անապահի լուսամուտների, վոչ այն կասկածը, թե զուցե վոչ թե յերեքհարկանի, այլ յերկհարկանի կամ միհարկանի մի շենք ե այն՝ արտակարդ վոչինչ չունեցող: Յես նույնիսկ մի քանի քայլ եմ անում փողոցվ, բայց ինձ յետ և պահում մի յերրորդ միտք. — յես իրավունք չունեմ առանց Գոհարիկի հանդիպել նրան, — այն յերրորդին: Դա կլինի իսկական դավաճանություն:

Առավոտքան, յերբ հանգստի ժամին գործարանի

բակում հանդիպում եմ Գոհարիկին, նա ինքն և մուտենում ինձ, բոնում ե ձեռքս և ասում:

— Ներիր, սիրելի ընկեր, յես գիշերն ուղղում եյի գնալ ավարտվող շենքը տեսնելու...

17

Նշանավոր յերեկոյան, գնացքը դեպի մեծ քաղաք ներ ճանապարհ դնելուց հետո, մենք դուրս ենք կալիս կառամատուցից և մերժում առաջ յեկող մեր ծանոթ կառապանին: Մենք այդ յերեկո վոտքով պիտի վերադառնանք քաղաք:

Կառապանն առաջարկում ե ապառիկ տանել, — նա չի հասկանում մեզ: Մենք ծիծաղում ենք և ուրախությունից տալիս ենք նրան սովորական վճարը, բայց և այնպես, վոտքով ենք գնում:

Մենք գեռ նոր ենք դուրս յեկել կայարանի առջևի փոքրիկ հրապարակից, գեռ նոր ենք մտել Մեծ Սիրո Հին Պողոտան, գեռ մեր առջև կա հարթ ճանապարհի բավական տարածություն, կան յերկու վայրից ըներ ու վերելըներ, բայց հեռվից արգեն զգացվում ե նա, — նշանավորը: Փողոցի այն հեռվում, ողի մեջ, կարծես վոսկեփոշի կա կանգնած: Մենք գուշակում ենք. — այդ՝ նորակառուց բնակելի շենքի ուժեղ լույսերն են արտացոլվել:

Լինում ե մի ըոպե, յերբ մենք զղում ենք կառք ստած չլինելու համար. — այնքան անհամբեր ենք: Ուրախությունը համակել ե մեր սիրտը: Գոհարիկը սովորական մտախոհ աղջիկը չե, նա ցատկում ե դա-

135

տարկագլուխ աղջնակի պես, իսկ յես բոլորովին կորցրել եմ ինձ:

Յերբ իջնում ենք առաջին վայրեջից՝ շենքի վայրը ծածկվում ե մեր աչքերից: Մենք անհանգստանում ենք, —կարծես կորցրած լինենք նրան, —և շտապում ենք բարձրանալ վեր: Բլուրի վրայից շենքի վայրը մեղ թվում ե արդեն մոտ: Սակայն այդ նրանից ե, վոր մենք նայում ենք ուզիղ, կըճատ ճանապարհով, մինչդեռ, հարկավոր ե իջնել ու բարձրանալ ևս մի յերկու վայրեջք ու վերելք:

—Յերեի յերեք հարկ կունենա, —յենթադրում ե Գոհարիկը:

—Նաև պատշպամքներ, —ալելացնում եմ յես:

Գոհարիկը ծիծաղում ե. —յես նրան վաղուց պատմել եմ անձրևային գիշերվա իմ յերազը:

Մենք մոտենում ենք: Փոլոցը կարծես հատուկ սահմանով բաժանված լինի յերկու մասի. —գիշերվա և ցերեկվա: Մենք արդեն վազում ենք: Մենք մտնում ենք լույսի սահմանը, ցատկում ենք դիմացի մայթի վրա, մեջքներս դեմ ենք տալիս պատին և սառած, հիացած նայում...

Մեծ շենք ե. —մեկ, յերկու, յերեք, չորս, հինգ, —հինգ հարկանի: Ո՛, վորքան բարձր ե խոյանում նա մինարեանի շրջապատի միջից: Նրա առաջին հարկն ամբողջապես խանութներ են. —առատ, շլացուցիչ կերպով առատ լուսավորված տասներկու մեծ ցուցափեղկ՝ այս փողոցից և վեց՝ մյուսից: Ցուցափեղկերի վերելում, չորս հարկ իրար վրա, կանոնավոր շարքերով, կան բազմաթիվ լուսամուտներ: Լուսամուտնե-

րից վոքանք փայլում են սենյակի դեղին լուսով, վոմանք սեղանի լամպի կանաչավուն լույսով, կամեկը՝ վարդագույն, մյուսը՝ մուգ-կարմիր: Մի լուսամուտից յերեւում ե սենյակի առաստաղը և կախված յերեքունկանի մեծ ջահը: Մի ուրիշ լուսամուտ բաց ե և ներքե են կախվել մի յերիտասարդ մարդ ու կին, —մարդը փողպատով և հարթ սանրած մազերով, կինը՝ գիշերախալաթով, վորն ունի լայն թեքեր: Յերրորդ լուսամուտից, վոր նույնպես բաց ե, հնչում է դաշնամուրի մի անմարմին յեղանակ:

Մենք տեսնում ենք. —չորրորդ հարկի մի բնակարան ունի վոսկեղոծ պաստառած պատ: Յերկրորդ հարկի մի այլ բնակարանում, ընդհակառակը, պատերը սիստակ են, վորոնց մերկությունը սակայն, գեղեցիկորեն հագցված ե տաք, կարմիր գորգերով: Գորշերից մեկի վրա, լայն շրջանակի մեջ, ինչ վոր նկար կա: Հինգերորդ հարկում, ուղղակի յերկնքի մթության տակ, վեց լուսամուտներ այնքան ուժեղ են լուսավորվել, վոր կարծես նրանց տերերը հարբած են: Իսկ մի լուսամուտ արգեն մութն ե. —տերը քըսել ե:

Յես դիտմամբ չեմ ասում ամենանշանավորի մասին. —Ենքն ունի պատշպամքներ. —մեկ, յերկու, յերեք, —վոչ, ժամանակ չկա հաշվելու: —շատ պատըշգամքներ: Դրանցից մեկի արծաթագույն ճաղերին մեջքով հենված, սենյակում գտնվող ինչ վոր ուրիշի հետ խոսակցում ե մի մարդ: Պատշպամբի գուսը բաց ե և ներսից կարծես դուրս և հորդում բնակարանի հանգստավետությունը: Մի այլ պատշպամքում, փոք-

րիկ սեղանի շուրջը, յերկու կին և յերեք տղամարդ թելում են: Յերբորդ պատշգամբում նարդի լեն խաղում: Չորրորդում խաղում են յերկու յերեխա: Հինգերորդում, միայնակ նստած, ծխում և տարիքու մի մարդ՝ զինվորականի կեցվածքով:

Ո՛, վորքան բազմազան և ալդ ամենը, վորքան հիանալի:

Իսկ ներքեռում, շարունակ բայ ու խուփ են լինում լուսառատ մագաղինների գոները, ներս ու գուրս են անում շատ մարդիկ, — գնորդներ: Մայթն ամբողջ շենքի տակ ասֆալտած և և կրկնակի լայն և իր շարունակությունը կազմող հին մայթից: Դեպի շենքի մյուս յերեսը թեքվելիս, մայթը մի կոր, շրջանաձև անկյունով և կատարում իր շրջադարձը: Այդ արդեն, ամենաանսովորը և ամենագեղեցիկն ե: Շենքի անկյունն ես, սրածայր չե, այլ բութ, և բաղկացած և ներքեռում մի ցուցափեղկից: Իսկ վերեռում՝ չորս հարկ իրար վրա պատշաճբներից:

Յեկըսա, Մոսկվա, մեծ քաղաք: Կարծես մի մեծ և փառահեղ քաղաքի բեկոր լինի այդ շենքը՝ ընկած մեր փոքրիկ, կիսախավար քաղաքում: Յերբ յերկու ձեռքով փակես փողոցի տեսարանը վեր ու վար և տեսողությանդ դաշտում ունենաս լոկ այդ շենքը, քեզ կթվա, թե ամբողջ փողոցն և այդպես, թե ամբողջ քաղաքն և այդպես: Այդ նրանից և այդպես թվում, վոր շենքը կառուցված և այդպիսի մեծ ծրագըրի հաշվով, ձգվելու, տարածվելու, փողոցներ, փողոցների ցանցեր, թաղամասեր, — ամբողջ մեծ քաղաք դառնալու հաշվով: Նայելով նրան և տեսնելով

կողքին մի սմքած, գետնահուպ տնակ, դու չես կարող չհասկանալ պարզից ել պարզ, վոր այդ հինգհարկանի հսկան լեկել ե քանդելու շրջապատի խեղճությունը, փոքրությունը, կիսախավարը, խարխլություն... Ո՛, փառք քեզ, ստեղծարար մարդ, փառք քեզ, կառուցող ձեռք, փառք քեզ ու ինձ, Գոհարիկ, վոր դուրս չենք մնացել աշխարհը փոխող մեծ բանակից:

Մենք նայում ենք անթարթ, ուշագիր, աչքներս ցալացնելու չափ: Ամենից ավելի ինձ դուր և գալիս, — անշուշտ գոհարիկին նույնպես, — շենքի բոի, կոպիտ առնականությունը: Մայթից մինչև յերկորդ հարկ՝ կիսատաշ լեռ քարեր են, ապա խոշոր խորանարդներով վարդագույն տուփաքար, լուսամուտների և դրսների վերեռում՝ վիթխարի ամբությամբ իրար փակչած յերկաթաբետոն, պատշգամբներն ամբողջ յերկաթյա ռելսերից են, յերկաթիս ճաղերով, ամուր, ապահով:

Վոչ, անվստահ կամ յերերուն քայլերով չի մտել նա մեր քաղաքը: Փղի ամբությամբ դրել ե իր վոտքերը փողոցի վրա և այդպես քարացել, — գե թող գան բոլոր անձնեները, ձյուները, կարկուտները, կայծակները, զե թող փչեն բոլոր քամիները, ցնցի յերկրաշարժը, — ել թնչ ուրիշ տարերքներ կան՝ համեցեք ինդընեմ...

Անցել եր կես ժամ, թե ժամեր եցին անցել, բայց մենք դեռ չեինք ուզում հետանալ: Ծնդհակառակը, մենք տեսնում ենք շարունակ ավելի և ավելի հետաքրքիր բաներ, նորանոր մանրամասնություններ:

Շարժվելով մեր տեղից և շենքը դիտելով զանազան կողմերից, մենք, որինակ, տեսանք, վոր նրա ծայրի պատը վերջանում եր վոչ թե կոկիկ, այլ ատամնավոր դուրս ցցված քարերով՝ վերից վար: Այդ նշանակում եր, վոր նա շարունակվելու եր այդ ծայրից: Յեվ գիտեք վոր ծայրից.—այն, վոր գտնվում եր խաչաձեռվող մուտք փողոցի վրա: Հասկանո՞ւմ եք արդյոք, —այն փողոցի վրա, ուր չկար նույնիսկ կայտրանից քաղաք ձգվող փողոցի համեմատաբար լավ լուսավորությունը, ուր մանրիկ նավթի լամպերն ավելի ելին խասացնում թանձր մթությունը: Ահա այնտեղ, ուր արդեն վառվում ելին չերեք մեծ, լայն ցուցափեղկեր՝ չհաշված անկյան ցուցափեղկը, —այնտեղ ահա, ցուցե մի տարի հետո, կանգնելու ելին ևս շատ այդպիսիները... Այդ խուլ, գորշ փողոցի խավարի խորքն եր միսրամկելու մեծ, բազմահարկ, նոր փողոցն իր լայն, ասֆայլտե մայթով, ցուցափեղկերով, հարկերով ու պատշտամբներով...

Մենք տեսանք.—շարունակվելու յենթակա պատի վրա, իրար տակետակ, կային հինգ դոներ: Դրանք ժամանակավորապես ընդհատված միջանցքների դըններն ելին: Յերբ շենքը լերկարացվի, այդ դոները կհանվեն և հին միջանցքը կմիանա նորի հետ: Խոկ առայժմ այդ ժամանակավոր դոները բացվում ելին ուղղակի մթության վրա: Մենք պատկերացնում ելինք, թե նոր կառուցման ինչպիսի կարոս ոլիտի զգա՝ ասենք, հինգերորդ հարկի այն վերջին սենյակի բնակիչը, լեր բաց անի միջանցքի դուռը և նա-

յի դուրս: Այնտեղ, իր դիմաց և իր վոտքերի տակ, նա պիտի տեսնի լոկ խավարի խորխորատը...

Յես վերհիշեցի իմ յերազը: Յես մտածեցի առաջարկել Գոհարիկին՝ մտնել շենք, բարձրանալ ամենավերին հարկը և նայել քաղաքին: Սակայն խկույն անդրադարձա, վոր այդ շենքն է, վոր քաղաքից դիտելիս հրապուրիչ և յերեւմ, խոկ քաղաքը, դիտված շենքից՝ կլինի կիսախավար, փոքրիկ, ինչպես ավտոյի միջից:

...Յերբ շենքում մարեց վերջին կը ար, յես ու Գոհարիկը վերադառնք քաղաք և գնացինք մեր տները: Հրապարակից սակայն, մենք յետ նայեցինք և տեսանք.—քաղաքի խորդուրոդությունների և տների յետերց, ամբակուռ նայում ելին նորակառույցի վերին հարկերը՝ հսկայի ապահով քնով քնած:

Մենք ակամա քայլերով վերադառնք մեր աըները և նույնպես քնեցինք:

18.

Այժմ մենք կարող ելինք այլևս չխռուսափել վոչ լուսնոտ գիշերներից, վոչ ել վոչնչացման Շոսելից: Մենք կարող ելինք վստահ գնալ ու վերադառնալ, վորովհետեւ այնտեղ, քաղաքի մեջ, մեզ սպասում եր վոչ միայն կենտրոնական հրապարակը, այլև հինգ հարկանի մեծ շենքը: Սկսվել եր մի մեծ շինարարություն, վորն անընդհատ բարձրանում եր քաղաքի զանազան մասերում: Մի տեղում հրապարակ ելին բաց անում և այդի գցում, մյուս տեղում, գեմ-դի-

մաց, կառուցում ելին յերկու մեծ շենք, յերբորդ տհում, —քաղաքի առունեցրից մեկի վրա, —նախկին փոքրիկ քարե կամուրջի փոխարեն սարքում ելին նորը, մեծը: Իսկ քաղաքի հյուսիսային կողմում, լայն փովել եր այնպիսի մի շինարարություն, վոր թվում եր, թե այնտեղ միանգամից մի քաղաք եր յելնելու: Այնտեղ և՛ հրապարակ կար, և՛ այդի, և՛ շենքեր, և՛ կամուրջներ, և՛ խանութներ, ակումբ, բաղանիք, պահեստներ... ձիշտ ե, այդ բոլորը զեռ չելին յելնելու, այդ բոլորը գեռ իրար վրա արագորեն դարավոր քարի անտաշ զանգվածներն ելին, բայց մենք մեր յերկայությամբ արդեն լրացնում ավարտում ելինք դրանք: Իմ և Գոհարիկի միմյանց տված խոսքը՝ ըստ պասել մինչև կառուցման ավարտելը և նույնիսկ չտեղեկանալ, թե վորտեղ և այդ կառուցումը, —մենք անկարող յեղանք պահել: Մեր փոքրիկ քաղաքում այդպիսի հսկայական շինարարությունը չեր կարող թագնվել: Մենք տեսնում ելինք, թե ինչպես շինանյութերով քարձված սայլերն ու փուրգոնները, մարդկանց խոսակցություններն ու հայցքները, կառուցողների հոծ խմբերը, հետաքրքրվող բազմությունները, ամեն որ և ամեն ժամ գնում ելին դեպի այնտեղ, գեպի քաղաքի հյուսիսային կողմը: Յեկ մի կիրակի, այլևս չհամբերելով, գնացինք նաև յես ու Գոհարիկը: Յեկ այնտեղ մենք տեսանք, վոր իզուր ելինք սպասում շինարարության լրիկ ավարտմանը: Դա մի ինչ վոր հինգհարկանի շենք չեր, վոր ավարտվեր միանգամից: Այնտեղ արդեն բոլորին պատրաստ ելին բազմաթիվ շենքեր, կիսատ ելին ելի

բազմաթիվ շենքեր և նոր ելին սկսվել դարձյալ բազմաթիվ շենքեր: Մեկում արդեն մեքենաներ ելին դրված, մյուսի յերկորդ հարկը դեռ նոր եր բարձրանում, յերբորդում, վոր միհարկանի յեր, արդեն պասենյակ եր տեղավորված, չորրորդի հիմքից դեռ փոխարձում ելին փորված հողը:

Յեկ յես ու Գոհարիկն սկսեցինք վիճել, թե առաջինը մեղանից ով ասաց այն անմտությունը, թե հարկավոր եր շինարարությունը տեսնել միանգամայն ավարտված: Վիճեցինք և յեկանք բոլորովին անսպասելի յեղակացության: —մենք յերբեք առանձին ու տարբեր չելինք մտածում, մեղանից յուրաքանչյուրի միտքը հավասար չափով նաև մյուսինն եր:

Մենք սկսեցինք ամեն որ, ամեն ժամ ապրել այդ նոր կառուցումով, շնչել նրանով: Մի կիրակի, մենք ակումբում հավաքվեցինք մոտ յերկուհարյուր հոգի և գնացինք կառուցման վայրը՝ աշխատելու: Զարմացած և ուրախացած, իրենց տախտակե ժամանակավոր բընակարաններից գուրս թափկեցին ճարտարապետները, տեխնիկները, կառուցման ղեկավարները և աշխատանքը յեռաց: Քիչ հետո հայտնվեցին նաև շինարար բանվորները: Յերբ յես քլունգը ձեռքիս, մեջքս բարձրացրի և շուրջս նայեցի, կիրակին փախել և կծկվել եր ով գիտե վոր դարբասի յետեր, վոր փոքրիկ գուրքանում... Կամ շարունակվում եր յերկարացած շաբաթ որը, կամ արդեն յեկել եր վաղաճառ յերշուշարթին...

Այնուհետև ամեն կիրակի, յես և Գոհարիկը գնում

եյինք այնուեղ: Յեկ այնուեղ միշտ ճարվում եր շարաթուրյակի գուրս յեկած վորեն հարյուրյակ կամ յերեքհարյուրյակ, վորի մեջ խոկույն մտնում եյինք նաև մենք: Մի որ՝ կոմէըրխտականներն ելինք գնում աշխատելու, մի ուրիշ որ՝ բանֆակի ուսանողությունը, մի յերբորդ որ՝ դուռզերից հատկապես այդ նպատակով հավաքված յեկած յերխտասարդներն իրենց դպրացող ծիծաղով:

Ո՞վ միամտություն, կարող եյինք արդյոք այս բոլոր իրարանցման մեջ մենք մնալ ձեռներս ծալած և սպասել գործարանի ավարտվելուն: Զե վոր մենք ըշտապում ելինք տեսնել այն պատրաստ:

Յես ու Գոհարիկն այլևս չելինք վիճում առաջին մեղավորին գտնելու համար. առաջին մեղավորը մենք յերկուս ելինք:

Բայց վոչ,—ինչու մենք յերկուսս: Զե վոր մենք միշտ յերեքով եյինք,—անբաժանելիորեն միմյանց հետ կապված: Այժմ նույնպես, մեղավոր ելինք վոչ թե յես ու Գոհարիկը, այլ մենք յերեքս: Այդ՝ կիսախարխութ քաղաքն եր, վոր մեզ թելսդրել եր սպասել և հանկարծակի տեսնել այն, վորը պիտի վերականգնենք մեր մեր փշրված յերազը և մեր նախկին կարծեցյալ լուսառատ, բազմաժխոր, լայնատարած քաղաքը դարձներ իրականություն:

19

Վոչ, այլևս չելինք վախենում յես ու Գոհարիկը: Այժմ մենք նորից կարող ելինք վերականգնել մեր

144

ուղեորությունները դեպի հրաբխալավայի տակից պեղած լուսնաշխարհը կամ դեպի բնակարանների, մարդկանց և լույսերի վոչնչացման շունեն: Մենք արդին ընդունել ելինք այդ վորոշումը և յես մի որ գընացի Գոհարիկի մոտ, ու մենք, գուրս գալով, բանեցինք շունեցի ձանապարհը:

Քաղաքի կենտրոնից դուրս գալու պահին իսկ մենք գգացինք, վոր մեք փոքրիկ հրապարակը, այսպես թե այնպես, կենտրոն և, միջնաբերդ: Դժվարությամբ հրաժեշտ տվինք քաղաքը հսկող պահակի նման բարձր սյան վերեից փայլող ելեկարական լավագութիւն և առաջ անցանք: Դիմացից, գեռ հեռվից, մենք զգացինք ամայի գաշտերի լայնատարած թափեցը, Ավելի սեղմկեցինք միմյանց՝ կարծես ապահով լինելու համար:

Յեկ զնացինք:

Յեկ փոքրացան տները, հետո սակավացան Նվազցին լույսերը, հետո սակավացան: Համբաքայլ դարձան մարդիկ, հետո սակավացան... Քաղաքն իր վերջին ձիգերն եր անում գիմազրելու վոչնչությանը: Ինչպես մի աղնիկ սիրտ, տրոփում եր քաղաքի արդին հեռու կենտրոնն իր հրապարակով, ելեկարութաշանով, բայց կենսարար արյունը չեր կարողանում հասնել մինչև այդ հեռավոր յերակի հեռավոր ծայրը:

Մենք մկում եյինք մտնել անբնակության, անլուսության և անմարդության սահմանը:

Յեկ հանկարծ, յերբ համարյա այլևս վոչինչ չեր մացել քողաքից, մեզ թվաց, թե դիմացը մենք տեսնում ենք մի փոքրիկ լուսափոշի՝ ոգում կանգ

145
Յերեք սիրավեպ — 10

նած։ Կարելի յեր լենթաղըն, թե շոսեյի կողքին մի ավտո յեր կանգնած շոսեյին խաչկտրուկ, և այդ՝ նրա լույսերն եյին խավարում թափառում։

Անելով ևս մի քանի քայլ խոտի վերջին գեղեցի, աթարի վերջին բուրգերի և տնակների վերջին շարքերի միջով, մենք հանկարծ, միանդամից, մեր աջ կողմում տեսանք...»

Ի՞նչ տեսանք մեր աջ կողմում... Գուցե յերած տեսանք՝ առանց քնած լինելու։ Գուցե վեպ կարգացինք, — մեկն այն քաղաքապաշտական գեղեցիկ վեպերից։ Բայց ի՞նչ չքնաղ յերաղ կամ հանճարեղ վեպ կարող եր համեմատվել իրականության հետ...»

Մեր աջ կողմում մենք տեսանք բազմահարկ փողոցներ՝ լույսերի մեջ կորած, փողոցներով անցնող ավտոներ՝ փայլող լաքով և ապակիներով, լուսեղեն պատկերներ՝ շենքերի ճակատներին վասկով ու հանգչով, լուսամուտներ՝ կատապի լույսով, ահապին լապտերներ՝ փողոցների վրա կախված, մարդկային հոսանքներ՝ մայթերի վրա խլբացող, ծառերի յերկար շարաններ՝ մայթերի յերկայնքով շարված։ Մթթե դա կիրակի ցերեկներով մեր տեսած, մեզ այնքան ծանոթ գործարանն եր իր բանվորական ավանով...»

Յերկու մարդատար և յերեք բեռնակիր ավտո հոնդալով սլացան մեր մոտով և գնացին գեպի քաղաք։ Յերբ հեռվում լոեց նրանց հոնդոցը, նոր միայն տեղի դարձավ, թե ինչպես մոտիկ ինչվոր շենքում շրմփում եր նոր ելեկտրոկայանի փոկը, իսկ հեռու մի քանի այլ շենքերում չխչխկում, իրենց նիկելի պայծառ փայլով շողջողում եյին արագաշարժ իլիկնե-

րը, — հսկայական լուսամուտներից յերեռում եր ամեն ինչ։ Շենքերը, վոր համարյա ամբողջովին ապակուց եյին սարքված, կարծես բունկված լինեյին սպիտակավուն, անշարժ հրդեհով։ Այդ հրդեհների մեջ յերեռում եյին հարցուրավոր, — գուցե և հագարավոր, — չահել տղաներ և աղջիկներ, վորոնք զեկավարում եյին մեքենաները։

Մի ուրիշ կողմում, ավանի մի այլ թաղամասում, իրար կողքի և իրար դիմաց, շարքերով ու կվարաալներով կանգնել եյին մագաղինները՝ շողջողուն ու պայծառ, իսկ մագաղինների վրա՝ բնակարանների զվարի։

Իսկ մի յերբորդ կողմում, միայն ինքն իրեկ մի վողջ թաղամաս, կանգնել եր գործարանի հսկայական ակումբը։ Մեր կոմյելիտականի վեցերորդ զգացարանով, մենք գեռ հեռվից զգացինք, թե ինչպես նրա բոլոր սենյակներում, նաև զբում, — ակումբի պարտեզում, — լցված են մեր բոլոր ընկերներն ու ընկերուները, — մեր հավիտենապես յերիտասարդ սերունդը։ Գուցե նվազախմբի սենյակի, գուցե դահլիճի, բաց լուսամուտներից, զուրս եյին հորդում փողային նվազախմբի անհման հնչյունները։

Յես և Գոհարիկը նայեցինք իրար, Խոսք տալով միմյանց՝ տեսնել շենարարությունը միանգամից, պատրաստ, մենք չեյինք սխալվել։ Փոխելով մեր վորոշումը և ամեն կիրակի մեր քրտինքը թափելով այնուեղ՝ նույնպես չեյինք սխալվել։ Մենք միաժամանակ տիրացել եյինք և մեկին, և մյուսին։ Վայելով կառուցման ամենորյա պաթուն ու մեր ուժերը

Նզիքաբերելով նըան, այժմս ել մենք տեսնում եյինք
մեր և մյուս բոլորի ճակատի քըտինքը՝ կենդանի չե-
րակի վերածված, քար ու բետոն, լույս ու ապակի
հագած: Այս, ինչ վոր տվել եյին մեզ այն ցերեկնե-
րը, — ու հիանալի եր, բայց այն, ինչ վոր տալիս եր
մեզ այդ յերեկոն, — վեր եր ամեն ինչից:

Յեկ յես, խնդության հորձանքով հեղիղված, հան-
կարծ զրկեցի հիանոսվածի նման հմայված նայող իմ,
ընկերունուն և թեքելով թեփս վրա՝ տոաջին անդամ:
Իմ կյանքում՝ համբուրեցի նըան:

Այդ համբուրեցի մեջ հավիտենապես կապվեցինք ի-
րար մենք յերեքս:

... իսկ նվազն ակումբի բաց լուսամուտներից՝ կան-
չում եր մեզ:

20

Եերկրության թաղաքից մենք հեռացանք անասե-
լի գեղարությամբ: Մի ահազին ուժ, հսկայական մագ-
նիսի պես, մեզ յետ եր պահում: Յերբ մենք հիշու-
եյինք կիսախավար շոսեյի արտում ճանապարհը, մեզ
պատում եր կենդանական մի անախորժություն և
մենք մեզ անընդունակ եյինք զգում քայլ անելու:
Իսկ յերբ վերջապես պոկեցինք և թեքվելով Բերկրու-
թյան թաղաքից, մտանք Ազատության Փողոցը, —
վոչնչացման Շոսեն, — ուստ յերկար ժամանակ մեր
յետևից ձգում եր այն ուժը: Մենք շարունակ յետ
եյինք դառնում և նայում, թեև վազուց արգեն, խոտի

դեղիբն ու աթարի բուրգերը մեր տեսպությունից
ծածկել եյին ամեն ինչ:

Մենք անչափ ուրախ եյինք: Մեր թիկունքում
մենք այլևս չեյինք զգում դաշտերի ամայությունը:
Դրա փոխարեն, այնտեղ կանգնած եր մի ամբողջ քա-
ռք՝ արգեն այնքան բազմաթիվ շենքերով, մարդ-
կանցով ու լույսով, արգեն այնքան մեքենաներով,
յերկաթով, բետոնով, յերկաթաբետոնով, վոր այլևս
վոչ մի խավար, վոչ մի քամի, չեր կարող քերծել
անգամ նըա փղային կաշին: Յեկ այժմ, այդ Վոչըն-
չացման Փողոցը, մեղ թվում եր առայժմ խավար մի
ջրանցք՝ յերկու լուսեղեն ճերի միջին իսկ այն, վոր
քաղաքից գալով, շենքերը, լույսերն ու մարդիկ նը-
վազում եյին ապա սպասովում, մեզ այլևս իրավունք
եր տալիս Վոչնչացման Շոսե անվանելու այն: Շո-
են նվազում եր, սպասովում, վորպեսզի հանկարծա-
վիրեն մեր առջե կանգներ իրի Բերկրության Քա-
ռաք:

Յեկ մենք, յերկրորդ անգամ լինելով, փոխեցինք
Յզատության Փողոցի անունը, վերանվանելով այն
Հանգչող ձրագների և վառվող Մեծ Լապտերների
Շոսե:

Մենք մոտենում եինք քաղաքին: Այժմ արգեն,
մագնիսի ուժը, վոր մինչեւ այդ մեզ ձգում եր յետե-
լից, սկսեց քաշել առաջից: Մենք զղացինք, վոր այդ
արգեն՝ քաղաքն և, — քաղաքի կենտրոնը:

Յեկ մենք, յենթակա այդ ուժին, առանց նայելու
մեր շուրջը, տարված լույսով ու խնդությամբ, գնա-
ցինք: Գնացինք մենք, իջանք քաղաք, այնուհետեւ

դարձյալ գնացինք, և սթափվեցինք միայն այն ժամանակ, եթզ մեղ զգացինք մի մութ փողոցում: Մենք յետև եցինք թողել վոչ միայն շուեն, այլև քաղաքի կենտրոնը: Ծիծաղեցինք, վերապարձանք: Յեվ նորից, տեղի ունեցավ նույնը. — մենք անցանք քաղաքի կենտրոն՝ առանց նկատելու այն:

— Ի՞նչ ե պատահել մեզ, — զարմացավ Գոհարիկը:

— Մենք խորասուզված եցինք, — ասացի յիս:

— Մենք միշտ ենք խորասուզված յեղել, — կատակեց ընկերուհիս:

Բայց յիս մտածեցի այդ կատակի մասին: Իբրք վոր, հաճախ եր պատահել յերք մենք մտախոն ու մտածկոտ, չեցինք նայել մեր շուրջը, բայց բնաղդաբար, մեր վոտները միշտ կանգ եցին առել քաղաքի կենտրոնում: Իսկ այդ որը մեր բնազգը շփոթվել եր. — նա չեր կարող գտնել քաղաքի կենտրոնը...

Գոհարիկը կանգ առավ:

— Ի՞նչ ե այս, — շնչաց նա. — ինչու են լուսերն այս յերեկո խավար...

Նա ձեռքով ցույց տվեց հրապարակը մեր դիմաց: Մենք մտանք հրապարակ, նայեցինք:

— Լույսերը կարող են նվազած լինել, իսկ հրապարակն ինչպես ե փոքրացել, — նկատեցի յիս և մենք արդեն ամեն ինչ հասկացանք. — քաղաքի կենտրոնն այլիս այդտեղ չեր: Նա տեղափոխվել եր Բերկության Քաղաքը...

Ո, Գոհարիկ, իմ լավ ընկերուհի... Ի՞նչ կա այդ «» բացականչության մեջ, այդ «իմ լավ ընկերուհի» բառերի մեջ, վորը հեռավոր անցյալ և դարձնում այն մարդու անունը, վորին զու գիմուն ես: Մինչդեռ դու, ա, Գոհարիկ, իմ լավ ընկերուհի, ահա նստած ես իմ կողքին և քո սքանչելի գլուխը կախոծ գրքի վրա, կարդում ես գիրքը: Դու կարդում ես այլևս զու ու գեղեցիկ քաղաքների մասին, վորովհետեւ մենք կառուցում ենք գրքերի մեջ յեղածից ավելի մեծերն ու գեղեցիկները: Դու կարդում ես այժմ այն մարդկանց մասին, վորոնք կառուցում են այդ քաղաքները: Պարզ ասած, դու, Գոհարիկ, կարդում ես մեր բոլորի կենացագրությունը: Հարյուրերսուդ կենացագրությունն ե դա, վոր կարդում ես դու: Իննասունինն անգամ ընթերցումը վերջացնելիս, դու ասել ես ինձ, վոր այնտեղ զրված ե ամեն ինչ և ամեն ինչի մասին, բայց չկա միայն Աղամի ու Յեղայի պատմությունը: Յեվ իննասունինն անգամ հանդիմանել ես դու ինձ, վոր՝ այդ պատմությունը չեմ գրում յես ինքս:

Ես նկատում եմ, Գոհարիկ, վոր դու կարդում ես արդեն վերջին եջը: Յերբ այն ավարտես, գիտեմ, Գոհարիկ, դու նորից պիտի նայես ինձ նախատինքով:

Բայց վոչ, Գոհարիկ, դու ինձ չես նախատի. — յես ավելի շուտ կը վերջացնեմ: Դու զեռ յերեք տող ունես, դու զեռ յերկու տող ունես, դու զեռ մի տող ունես, իսկ յես ահա դնում եմ վերջակետը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

Միակ յերգը	5
Նրանք, վոր փոխվեցին	13
Մենք յերեքս	83

Խ. 36530



Ա. 1936 թ.
Ակտ № 55
Վկլածն լ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0322995

22094

ԳԻՆԸ 2 Ռ.
ԿՈԶՄԸ 1 Ր.



Մ 1

Մ 2



Մ. ԱՐՄԵՆ

ՏՐԻ ՆՈՎԵԼԼՅ

Գև ՀՀ Արմենիա, Էրևան, 1936